9(19)
Հ-
527

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՅԻ

ՎԵՐԳԻԱՊԵՏԻ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

49550

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՄԻՆԵՍ ՔԻՇԵՆԵՑ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆՑ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅՈՒ

ՏՊԱՐԱՆ ԵՐՐՈՐԴՈՒ Ա. ՄԱԼԽԱՍԵԱՆՑԻ

Тип. А. Малхасянца на Алекс. ул. д. Тер. Кепоркова.

1893

9(47.925)
Ա-87

ՍՏԱՑՎԱԾ Է 1961 թ.

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՅԻ

ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

A 7/6761

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՄԻՆԱՍ ՔԵՀԵՆԵՑ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆՑ

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ,
ՏՊԱՐԱՆ ԷՐՐԵՀԵՄ Մ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑԻ
Тип. А. Малхасянца на Александров. ул. д. Теръ-Кеворкова.
1893

Дозволено цензурою Тифлисъ, 4 Мая 1893 года.

ԸՆԹԻՆ ՄԸՏԻ!

Քո անուանն եմ նուիրում այս աշխատութիւնս, քո, որ մի գիւղացի, անգրագէտ, խեղճ և բառի բուն նշանակութեամբ աղքատ կին էիր, բայց նիւթական տխուր դրութիւնդ մոռանալով հասկացար ուսման ու կրթութեան նշանակութիւնը, և հանգուցեալ հօրս տարաժամ մահից յետոյ՝ փոխանակ չորս որդւոցդ համար ցամաք հացի վերայ մատնելու, այլ մարդուն նման գօտեպնդուելով տարուս 1) հագար, կանացի թուլութիւնը մոռացար, շատ անգամ ոտքով Ս. Էջմիածին գնացիր, ընդհանուր Հայոց Հայրապետին պատուեցիր, որ ինձ ընդունել տաս Հաղբատ գաղթու

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ոչ մի ժամանակ մեր ժողովրդի մէջ ընթերցանութիւնն ընդհանրապէս այնքան չէ զօրացել. ոչ մի ժամանակ նա այնքան չէ հետաքրքրուել կարդալ իւր ազգի անցեալ կեանքի պատմութիւնը, որքան ներկայ դարի կիսից սկսած: Այդ փոփոխութիւնը ժամանակի յառաջադիմութեան արդիւնք է, որ օրըստօրէ զօրանում է, զրնթէ, ամեն մի ազգի մէջ: Ամեն ոք ընթերցանութեան փափաք է զգում և ցանկանում յագուրդ տալ իւր այդ բնական պահանջին: Ուսումնական, կամ ուրիշ խօսքով ասած, զարգացած դասի համար ոչինչ դժուարութիւն չկար իւր այդ անբռնազսա, հոգեկան քաղցը լցուցանելու և ծարաւը կտրելու համար. բայց այժմ, երբ ընթերցանութեան անյագ ցանկութիւնն ու սէրը ամենին անխտիր գրաւիչ ու սիրելի է դարձել, հոգևորականի, թէ աշխարհականի, այր թէ կին մարդկանց, գիւղացու թէ քաղաքացու, մեր նախնեաց (ազգային—Եկեղեցական) մատենագրութիւնները գրաբար լեզուով գրուած լինելու պատճառով՝ տակաւին մեծամասնութեան անհասկանալի է մնում, բացառութեամբ Խորենացու և Եղիշէի: Այդ հանգամանքն 'ի նկատի ունենալով և սպասել ժամանակս անօգուտ անցկացնել

չցանկանալով՝ ԺԱ-րդ դարի ողբերգակ պատմագիր Արիստակէս Լատիվերացու Պատմութիւնն աշխարհաբառ թարգմանեցի ընթերցող հասարակութեանը հասկանալի և օգտակար անելու համար։ Որքան հնարաւոր էր, աշխատեցի բառերի աշխարհաբառ վերածելու վերաբերութեամբ հեղինակին հաւատարիմ մնալ, բայց երբեմն էլ հեռացել եմ այդ ուղղութիւնից՝ գնդելով դանդէ, ինչ, էջ, ը, փոխանակ էջ շաղկապները, որոնք շատ և շատ անգամ բոլորովին աւելորդաբար է գործածում արժանալիշատակ հեղինակը, երբեմն բայերի ժամանակը և կետադրութիւնը փոփոխութեան ենթարկել, իսկ այլաբանօրէն կամ մութը գրուած նախադասութիւնները պարզ բառերի վերածել. այս բոլորն արել եմ, որպէս զի ընթերցողները կարողանան պարզ հասկանալ այն մութ կտորները, որոնք գրաբառից բառացի աշխարհաբառի վերածելով բնաւ չէին կարող հասկանալի լինել. օրինակ. նախերգանքում-«Եւ յանգման յաւուրս էր ծանանել ոչ ծանէաւ զնոցորդս պատուհասքն զնարմանքն անդէլոց»։ Գլ. ԺԶ.-«Քանզի չէր ինչ ծանանել նոմ գործ, որ զէրն հնացուցանել նոքէ, քայց ըէ որ զդիցոյն անուղղի զգուշացուցանէն գէրս»։ Գլ. ԺԷ.-«Եւ նորածէն մանչուանդ յանախ որգանդէ մօր մէրոյ Սաւոյչ էրբու զյոգս ազատաւոյ երամոյեալ՝ նոյորդալէր յոյնիս զէրբէշատանանն էրգէրն

ղէրգ»։ Գլ. ԺԸ.-«Եւ ոչոան 'ի Միմեանց ղանչիւն գողանալ»։ Գլ. ԻԳ.-«Մանաւանդ ամենայն Անի ի ոչ շարչ ընդ-ելս պատերս ի-ր,» և այլն և այլն։ Պատմագանը լինելով քաջ տեղեակ Աստուածաշունչ Ս. Գրքին և լի կրօնական զեղուն զգացմունքով, ինչպէս երևում է, իւր հոգեկան մխիթարութիւնը միմիայն Ս. Գրքի ընթերցանութեան մէջն է որոնել և Հայոց աշխարհին հասած աղէտները Աստուծոյ անօրէնութեան գործ համարելով, համանման դէպքերի վկայութիւններ յառաջ բերել Ս. Գրքից շատ տեղ և շատ անգամ։ Որպէս զի հեռաքրքիր ընթերցողին հեշտութիւն պատճառած լինիմ Ս. Գրքից բերած վկայութիւնները ընագրում ևս կարգալ, լուսանցում նշանակեցի վկայութեանց գրքի գլուխ և համարը։ Թերևս անօգուտ աշխատութիւն, սակայն աւելորդ չհամարեցի այդ։ Նոյն իսկ Ս. Գրքից բերած վկայութիւնները աշխարհաբառ փոխեցի ընթերցող դասի մեծամասնութեան հասկացողութիւնն ի նկատի ունենալով։

Շատ ցանկալի էր մատենագրիս կենսագրութիւնը յառաջ բերել կամ այս տեղ, և կամ առանձին, բայց դժբաղդաբար ունեցածս այդ ցանկութիւնն անհնարին եղաւ կատարել։ Ահա թէ Հ. Գար. Զարբանալեանն ինչ է գրում այդ առ-

թիւ իւր՝ «Հայկական հին գրականութիւն» կոչուած գրքում.—«Արիստակէս Լաստիվերցիի վրայ կենսագրական տեղեկութիւն մը չունիմք ամենևին. միայն գրուածքէն և պատմագրելու ոճէն կ'երևնայ թէ եկեղեցական էր, և թէ բաւական ընդարձակ հմտութիւն ունէր Աստուածաշունչ գրոց»։

Այն աշխատութիւնս թէ որքան օգտաւէտ է լինելու ընթերցող հասարակութեանը, ես չգիտեմ, միայն անլայտ չէ այս, որ բնագիրը հասարակութեան ամենամեծ մասին անմատչելի է, նախ՝ հէնց գրաբառ գրուած լինելու համար, երկրորդ՝ չափազանց թանգ լինելու, որպէս Վենետիկի Մխիթարեան հայրերի տպագրութիւն։ Ուստի՝ վստահ եմ որ, ընթերցողն այդ երկու դժուարութիւնից էլ կազատուի։ Իսկ ինչ վերաբերում է թարգմանութեան արժանաւորութեանը կամ պակասութեանը, այդ էլ մնում է անաչառ քննադատին, որպէս զի թերութիւնները ցոյց տալով՝ միջոց տայ առաւել ևս գտելու, կատարելագործելու։

Մինաս Չուխանոյ Տէր-Պետրոսեանց

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Զարշարանքների օրերը հասան մեզ և անտանելի նեղութիւնները մեզ պաշարեցին. որովհետև մեր մեղքերի չափը լցուելով թափթափուեցաւ և մեր աղաղակը բարձրացաւ Աստծու առաջ։ Ամենայն մարդ իւր ճանապարհը փչացրեց և երկիրը լցուեց անօրէնութեամբ. արդարութիւնը պակասեցաւ և անառակութիւնը բազմացաւ. ժողովուրդն ու քահանան սուեցին Աստծուն։ Այդ պատճառով օտար ազգերը օտարացրին մեզ մեր աշխարհից։ Մեր փառքերը եղծուեցան. շունչ չմնաց մեր մէջ և կորանք մեր յոյսը կարուելու ժամանակ. մահը զօրացաւ և կուլ տուեց և գերեզմանները չկամեցան բաւականանալ։ Բոլորը մեզ վերայ յարձակուեցան և մեր վերջանալու օրերում ժամանակը հասցրած պատիժներովը չբաւականացած՝ չմնայեց նաև մնացած պատուհասը։ Աղէտները միմեանց յաջորդեցին, և կենդանութեան շնչի արծարծող զօրութիւնը նուազեց. աշխարհի բնակիչներն իրանց պանդխտութեան մէջ՝ երկրորդ անգամ պանդխտեցան ու ցիրուցան եղան արտաքսուած պանդուխտների ձեռքով։ Սիրելիներից բաժանուածները, որոնց չատակեց սուրը, ծոխորտակ կոչուած ատաղների նման ցրուեցան։ Մեր օրերում պատերազմներ յառաջացան չորս կողմից. հիւսիսից՝ կրակ, և հարաւից՝ մահ. ուրախութիւնները վերացան երկրից, քնարների ձայները լռեցին, թմբուկների բոմբիւնները դադարեցան և բարձրացան լաց լինելու աղաղակները։ Եւ այս այսքան։ Բայց ժամանակն է, որ մենք սոյն պատմութիւնն սկսենք, որպէս զի մեզ յայտնի լինի պատճառը։

ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ[1]) ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՄԵԿ ՇՐՋԱՊԱՏՈՂ ՕՏԸՐ ԸՆԴԵՐԹՑ ՏԸՄԱՏՑԱԾ ԸՆՑՔԵՐԻ ՄԷՋԻՆ։

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ։

Հայոց աշխարհում պատահած անցքեր։

Դաւիթ Կիւրապաղատի մահից յետոյ, որը հզօր, աշխարհաշէն, առատաձեռն ու աղքատասէր մարդ էր, և որը, յիրաւի, խաղաղութիւն սահմանող էր, որովհետև նրա օրերում, Մարգարէի ասածին համաձայն, ամէնայն մարդ հանգստանում էր թգենու և խաղողենու հովանու տակ, Հռոմոց ինքնակալ Վասիլ թագաւորը ծանրը գէնքով շարժւում է իւր թագաւորութեան քսան և հինգերորդ տարում, և գիմելով գալիս հասնում է Եկեղեաց 2) գաւառը, առանց շատ իջևաններում դադար առնելու։ Ցայոց նահանգի ազատագունդ զօրքը գիմաւորեց նրան, և առատ պարգևներով մեծարուած նրանից, ամեն մինը իւր արժանաւորութեան համաձայն՝ իշխանու-

թեան, պատուի և փառքի հասնելով, շատ ուրախացաւ։ Բայց հոգերգոյ Դաւթի մարգարէութիւնը կատարուեցաւ նրանց մասին, թէ՝ «Առաւօտը գալարու նման պէտք է բուսնին, առաւօտը գալարու նման պէտք է ուրախանան ու ծաղկին, իսկ երեկոյին պէտք է թառշամին, չորանան ու ընկնին» 1։ Թագաւորն անցնելով դէպի Ազօրի 3) աշխարհը՝ Հաւաճիչ կոչուած բերդի մօտ գիշերում է։ Զը գիտեմ ինչպիսի պատճառներից՝ Ռաւգք 4) կոչուած արևմտեան զօրքը և ազատագունդը կռւում են իրար հետ. նոյն տեղում ապատների ամենապատուաւորներից մեռնում է երեսուն մարդ։ Այս չէ թէ ընդունայն և զուր տեղը պատահեցաւ նրանց, այլ որովհետև ապատները ձանձրանալով երանելի անձից 5), Աւագ հինգշաբթի օրում մահագեղ խառնելով սուրբ պատարագի խորհրդին, խմցրին նրան և խեղդամահ անելով՝ կեանքից զրկեցին։ Այդ արին այն յարտնի խոստումների համար, որ թագաւորից էին ստացում. վասն որոյ Աստծու արդարադատ դատաստանը վարձատրեց ապատներին, իրանց գործին համաձայն։ Այն օրից մինչև այժմ երբէք չյաջողուեցաւ ապատ դուրս գալ Ճայոց 6) աշխարհից։ Եթէ այդ աշխարհը երկարեց իւր կեանքը, բայց արագահաս մահով նրանք

1, Սաղմոս 3Թ. 6.

կեանքից զրկուեցան ու վերջացան։ Մեծ Եսային նախատելով յանդիմանում է նրանց՝ ասելով.— «Որովհետև այդ ժողովուրդը չկամեցաւ Սելոամայ 7) ջուրը, որ խաղաղ հոսում էր, այլ կամեցան իրանց թագաւոր անել Տաբելի որդի Հռասինին 8), ուստի՝ այսպէս է ասում Տէրը. Ես բերում եմ ձեր վերայ գետի զօրեղ ու յորդ ջուրը, այսինքն՝ Ասորեստանցւոց թագաւորն ու նրա փառքը»[1]։ Եւ սրանք այսքան։ Նոյն տեղում գալիս հասնում են Ամիրազների 9) Բաղարատ թագաւորն ու նրա հայր Գուրգէնը. և Հռոմոց ինքնակալ թագաւորը 10) մեծ պատիւ է տալիս նրանց։ Բաղարատին տալիս է Կիւրապաղատութեան 11) և նրա հօրը՝ Մագիստրոսութեան 12) պատիւ ու խաղաղութեամբ ճանապարհ ձգում. և ինքը, գնալով՝ անցնում է Հարքից 13) ու Մանգկերտից 14) և արշաւելով գառնում է Բագրեւանդի 15) վերայ, ու գալիս Ուխտեաց 16) քաղաքը և տիրում շատ գաւառների, բերդերի ու քաղաքների։ Նրանց վերայ դնում է գործակալներ, դատաւորներ և վերակացուներ. ինքը հանգիստ սրտով գնում իւր ճանապարհը և հասնում իրա թագաւորական քաղաքը՝ Կոստանդնուպոլիս։ Այս կատարուեցաւ չորս հարիւր յիսուն Հայկական թուականին և երկիրը խաղաղելով՝ հան-

1. Եսայի Ը. 6.

գտաց։ տասն և չորս տարի։

Հռոմոց թագաւորն ինքը՝ անձամբ գնալով, վերջացնում է արևմտական կողմի հոգսը. որովհետև տիրում է Բուլղարների 17) աշխարհին, գաւառներին և նրանց քաղաքներին, որոնք, իւր թագաւորութեան սկզբից սկսած, երկարատև անվերջ պատերազմներով չկարողացաւ իւր ձեռքի տակն առնել, բայց այժմ յարմարութիւնները նրան յաջողւում էին։ Ըստ որում Բուլղարների աշխարհին տիրող և պատերազմներում յաղթողը մեռաւ իւր մահով, իսկ նրա որդիքը չհնազանդուեցան իրար, և անձնատուր լինելով գնացին թագաւորի մօտ։ Որովհետև «Ամենայն թագաւորութիւն՝ անձի վերայ բաժանուած, չի կարող մնալ»։[1], Այս է Բուլղարների երկրի առնելու պատմութիւնը։ Բայց թագաւորը, Բուլղարների բռնակալի որդուցը զարմով և ազգով իրանց երկրիցը հանելով, տեղ է տալիս նրանց Հռոմոց աշխարհում. իսկ նոյն աշխարհի զօրքը՝ նրանց պարգևներ տալու պատրուակով, խաբէութեամբ մի տեղ է ժողովում, և նրանց թիւը գրի առնելով, անդառնալի կերպով ուղարկում է դէպի արևելք։ Նրանք գալով՝ աւերեցին մեր աշխարհը։ Վայ նրանց դէպի արևելք գալուն, և վայ այն երկրին, ուր նրանք անցուգարձ արին։ Ահա չար,

1, Գալ. ԺԱ. 17.

անողորմ, դառնասիրտ և խայթող ազգ։ Յարմար է ասել նրանց մասին Մարգարէի ասած այս ոգը.—«Նրա առաջը փափկութեան դրախտ է, և յետևը՝ աւերածի դաշտ»[1]։ Այս այսքան։ Բայց մենք դառնանք պատմութեանս կարգին։

Մեր թուականի 464-ին մեռաւ Ափխազների Բագարատ թագաւորը, և թագաւորեց նրա Գէորգ որդին։ Ինքնակալ Վասիլ թագաւորը հրովարտակ գրեց նրան այս ձևով.—«Ինչ որ Կիւրապաղատի (Դաւիթ) բաժնից պարգև տուի քո հօրը՝ թոռ, և միայն քո Հայրենիքի վերայ իշխիր»։ Բայց նա յանձն չառաւ, այլ իւր մանկական հասակի վերայ հպարտացած՝ հակառակ պատասխան տուեց, թէ՝ իմ Հայրը իշխանութեամբ ինչ որ ունեցել է, նրանից և մի տուն չեմ տալ մէկին։ Իսկ ինքնակալն այս լսելով, զօրք է ուղարկում՝ աշխարհին բռնութեամբ տիրելու։ Ցայց նահանգի քաջերը, նրանց դէմն ելնելով Ուխտեաց մեծ գիւղաքաղաքի մօտ, Հռոմոց զօրքերին դէպի փախուստ դարձրին. բայց քաղաքին և միւս բնակութեան տեղերին ոչինչ վնաս չտուին։ Ցայց աշխարհի կործանուելու սկիզբն այս եղաւ։

1, Ցովելեայ Բ. 3.

Բ. ԳԼՈՒԽ։

Հայոց Ռոգոռոռիները։

Այն ժամանակում, Բագրատունեաց ցեղից 18), Աշոտի որդի, Սմբատի և Գուրգէնի եղբայր Գագիկը 19) Հայոց աշխարհի թագաւորն էր. սա հզօր ու պատերազմներում յաղթող մարդ էր. սա խաղաղութեան մէջ պահեց Հայոց աշխարհը։ Սրա ժամանակում եկեղեցու կարգերը պայծառացան, սուրբ ուխտի մանկունքները լուսաւորուեցան։ Սրա օրերում, Մարգարէի գուշակութեան համաձայն.—«Երկիրը լցուեց Աստուծոյ գիտութեամբ՝ այն շատ ջրերի նման, որ ծովերն են ծածկում»։ 1 Որովհետև Հայոց Հայրապետն էր Տէր Սարգիսը 20), որ եկեղեցու ծոցում սրբութեամբ սընուած և կրօնաւորական ճգնութեամբ վարժուած այն Մենաստանում, որ Սևանայ կղզի 21) է կոչւում. Նրան իւր արժանաւորութեան համաձայն Աստուծոյ հաճութեամբ հրաւիրում և նստեցնում են Լուսաւորչի Աթոռի վերայ. Նա իւր կենդանութեան ժամանակ՝ Լուսաւորչի նման առաքինութեամբ ապրելով, բարի գործերով վերջացրեց իւր կեանքը։

Նոյն ժամանակում կային Սարգիս, Տիրան

1. Ամբակումայ Բ. 14.

և Յենովք անունով Կամուրջիկոսարանի վարդապետները, և Սամուէլը, որ Կամրջաձորի վանքի 22) առաջնորդն էր, և Յովսէփը, որ Հնձուց 23) նախագահն էր, և Ստեփաննոս Տարօնեցին 24) որ աշխարհապատում գիրքը շարադրեց զարմանալի ոճով, առաջին մարդուց սկսած՝ գալիս վերջացնում է այն Գագիկի մահով, որի մասին է այս պատմութիւնը, և նոյն գաւառացի Յովհաննէսը, որին Կոգեռ 25) էին մականուանում, և որը գրեց մեր հաւատի վարդապետութիւնը, և մեծ իմաստուն Գրիգորը և ուրիշ շատերը, որոնց օրերում եկեղեցւոյ զօրութիւնը շատ բարձրացաւ ուղղափառ խոստովանութեամբ։ Իսկ դէպի մեզ խէթ աչքով նայողները, որոնց վարդապետական գործերից ամօթով աչքերը կախ արած՝ մկներին նման քաշուելով մտան ծակերը։ Այս այսքան։

Բայց Գագիկ թագաւորը, երկար ժամանակ վարելով իւր թագաւորութիւնը, բարի յիշատակների արժանացած, խորին ծերութեան ժամանակ մեռնում է։ Նրա իշխանութիւնը տիրում են նրա որդիքը. Սմբատ, որին Յովհաննէս էին կոչում և նորա հարազատ եղբայր Աշոտը։ Սմբատը բարձրահասակ ու հաստամարմին մարդ էր, բայց իմաստութեամբ, ասում են, շատերից բարձր. իսկ Աշոտը մարմնի վայելուչ կազմուածքի տէր, քաջասիրտ ու պատերազմասէր։ Սրանք երկիրը

բաժանելու համար իրար հետ հակառակուեցան, ու կարօտ եղան իրաւունքի և դատաստանի։ Ափիսազների Գէորգ թագաւորը գալով՝ համոզելով հաշտեցրեց նրանց։ Երկանուն կրող Սմբատին՝ անգրանկութեան համար, բաժին տուեց Անի բերդը և նրան շրջապատող գաւառները. իսկ Աշոտին աշխարհի ներքին կողմը, որ Պարսկաստանի և Վրաստանի հանդէպն է։ Սմբատը հաւանելով՝ դարձաւ իւր քաղաքը. և ճանապարհին՝ մարմնի ծանրութեան պատճառով, իջևանելով, անհոգ կերպով քնում էր. իսկ Աշոտի կողմի իշխաններից մէկը, Գէորգի առաջ կանգնելով, բողոքում է և ասում.—«Տատիկն 26) իմ սեպհական տեղն է, որը Սմբատն անիրաւաբար խլեց ինձանից»։ Գէորգն այդ լսելով, սաստիկ բարկութեամբ գայրացած՝ զօրք է ուղարկում նրա յետևից. զօրքերը գալով՝ յանկարծ յարձակուեցան նրա վերայ. Սմբատը մարմնի ծանրութեան պատճառով չը կարողացաւ ձի նստել, բայց նրա հետ գտնուած իշխաններն արագութեամբ գէպի փախուստ դարձան և հետևողները փախչողներից շատերի գլուխները կոյտեր ճանապարհի վերայ թողին մինչև Անի քաղաքի դուռը։ Ափիսազների զօրքերն այնտեղից դառնալով՝ Կաթուղիկոսարանի եկեղեցին զարդերից կողոպտեցին. և խաչի բևեռը հանելով, նախատինքով ասում էին, թէ.—«Ծանում

ենք ձիերին պայտ շինելու։» Արդարագատ Աստուածը յարմար ժամանակում Հռոմների ձեռքով վարձատրեց նրանց. որ իւր տեղումը կը պատմենք։

Բայց Սմբատին բռնելով տարան Գէորգի մօտ, որին հրամայեց հսկողութեան տակ պահել. ապա երեք բերդ առնելով արձակեց նրան։ Որովհետև Աշոտի սահմանի շուրջը մեծամեծներ էին բնակւում, նրա տեղերից շատերն անիրաւաբար խլել էին. այդ պատճառով նա չկարողացաւ համբերել. ուստի թողնելով իւր աշխարհը. գնում է Հռոմոց թագաւորի մօտ. նա գուր գալով Հռոմոց թագաւորին, օգնականութեան համար զօրք է խնդրում. և առնելով գալիս իւր աշխարհը։ Աշոտն Աստուծուց յաջողութիւն գրառնելով, տիրում է շատ գաւառների և բերդերի։ Նա իրանից յառաջ բոլոր եղածներից աւելի է զօրանում. մինչև որ, մեծամեծներից շատերը իրանց հայրենի տեղերը նրան թողնելով, կամքով հնազանդեցան։ Մինչև այստեղ տանելի է մեզ այս պատմութիւնը։

Մեր թուականի 467 տարում ինքնակալ թագաւորն ուղարկում է Նիկոմիդացի 27) մի իշխանի, որ գալով մարդահարկ է ձգում երկրի վերայ. և ժողովելով մարդկանց բազմութիւն, ակսում է նորից շինել Թէոդուպոլիսը 28)։

Զոր հարիւր վաթսուն և ութ թուականում Տէր Պետրոսը 29) Կաթուղիկոս է ձեռնադրուում Սարգսի կենդանութեան ժամանակ։ Զոր հարիւր եօթանասուն թուականում ինքնակալ թագաւորը կրկին շարժուում է մեծ զօրքով, գալիս դէպի արևելք, և Կարնի 30) ընդարձակ դաշտումն իջևանում։ Գեռան է ուղարկում Վրացոց իշխող Գէորգի մօտ, որ գայ հնազանդի իրան։ Մի Վրացի եպիսկոպոս էլ, որ նստում էր Վաղարշակերտ 31) քաղաքում, գիմաւորելով թագաւորին, հաւատացրեց, թէ երբ որ Եկեղեաց կամ Կարին գաւառը հասնիս, Նա քեզ ընդառաջ կը գայ։ Հոռոմոց թագաւորը՝ եպիսկոպոսի խօսքերին հաւատալով ու նրա վերայ յոյս դնելով, օթևանից օթևան փոխելով ապատում էր Գէորգի գալուն։ Բայց Գէորգն յանձն չառաւ գալ թագաւորի մօտ. որովհետև իւր մարդկանցից շատերը վախեցնում էին, թէ՝ քեզ տեսնելուն պէս կամ կ'սպանէ, կամ կը բանդարկէ և դու չես կարող քո պատուին հասնել։ Իսկ թագաւորը, գնալով դէպի Բասեան 32), երկու երեք պատգամաւոր է ուղարկում Գէորգի մօտ. բատրում շատ էր ցանկանում իւր ճանապարհորդութիւնը հաշտութեամբ վերջացնել և աշխարհը չէն թողնել։ Ապա երբ անօգուտ անցան իւր թագաւորական խորհուրդը կամ հրամանները, բարկանալով հրամայեց Օկոմի 33) կոչուած

մեծ գիւղաքաղաքը, և նոյն զաւառի նրան շրջապատող գիւղերն ու ագարակները ոչնչացնել կրակով, սրով ու գերութիւնով. այդ զաւառի գերիներն առած՝ հրամայեց տանել Խաղտեաց աշխարհի զաւառները, և ինքն ուղղուեցաւ դէպի Բասեան, ու հասաւ Վանանդ կամ Փորակ 34)։ Իսկ Գէորգն յարմար միջոց գտնելով, հասաւ Ուխտեաց քաղաքը և զօրքերին հրամայեց նրա գեղեցիկ շինուածքները կրակով այրել և նրա ունեցածները թալանել, բայց մարդկանց երբէք վնաս չը տալ։ Երբոր Հռոմոց թագաւորն այս լսեց, աւելի և աւելի բարկացած՝ գնաց նրա վերայ. և զօրքերը միմեանց պատահելով, Պաղակացիս 35) կոչուած ծովակի մօտ սարսափելի դղրդիւնով իրար կոտորեցին։ Ուստի սրերի շողալու և սաղաւարտների փայլելու ժամանակ՝ փայլակները կամ կրակի լոյսը լեռների վերայ էին տարածւում. և սուսերների իրար դիպչելիս՝ կրակի կայծակունքներ դուրս գալով գետին էին ընկնում։ Նոյն իսկ թագաւորն ինքը նայելով դէպի այդ՝ զարմանում էր կռուողների քաջութեան վերայ, որովհետև լեռին զարկուած գետերի խիստ հոսանքի նման, Հռոմոց զօրքերը նրանց հետ զարկուելով, յետ էին դառնում։ Նոյն տեղում Ըռատ մեծ իշխանին, որի ձին ճահճային տեղի պատահելով, չը կարողացաւ անցնել, թշնամինե-

ը սրով սպանին, որ մեծ սուգ պատճառեց Ծայց աշխարհին։

Իսկ Գէորգն իւր զօրքով գնալով ամրանում է Ալիխազների բերդում. թագաւորն ուղարկում է աշխարհի կողմերը զօրքեր ու ասպատակներ. խիստ հրամանով պատուիրում չինալել ոչ ծերին, և ոչ երիտասարդին, ոչ տղային և ոչ հասակն առածին, ոչ այր մարդու և ոչ կնոջ և ոչ մի հասակի. և այսպիսի ձեռնարկութեամբ քանդելով աւերում է տաններին գաւառ։ Այստեղ երևում էր շատ արտասուքի արժանի և ցաւալի տեսարան։ Որովհետև թագաւորական բարձրագիր պալատներն ու շինութիւնները, որ ամենամեծ ծախսով և ճարտարապետների հմտութեամբ էին շինուած, տեսնողներին զարմացնելու և բնակչների ուրախ վայելման համար, կրակով այրուած՝ փլան—կործանուեցան. իսկ նրանց տէրերը այդ շինութիւնների մօտ սրով կոտորուեցան։

Աւա՜ղ այս պատմութեանն ու գառն պատահարներին։ Ինչպէս կարող եմ ես գիտութեամբ ազքատս ու ամենից տխմարս գրել նոյն ժամում կատարուածները, և արժանաւոր կերպով ողբալ մեր թշուառութիւնը։ Այս Երեմիայի հոգուոյն է պատկանում, որ գիտէ թշուառութեան համաձայն ողբեր յօրինել։ Բայց մենք արձանագրենք այս երկար պատմութիւնը քիչ խօսքերով, որ ապագայ

ազգերն իմանան. և որպէս զի ծնուող որդիքը մեծանան ու պատմեն այս անցքերը իրանց որդւոցը, չմոռանալ Աստծու գործերը, որ արդար չափով հատուցանում է այն ամենին, որոնք հեռանում են նրա օրէնքներից, Յովբի խօսքերին համաձայն, որ ասում է.—«Պէտք է հատուցանէ իրան ատողներին, և չը պէտք է ուշացնէ»:[1] Արդ եկ ու թուիր ինձ այն ժամանակի գործերի օրինակն ու արիւնի մէջ թաթախուած պատուական ու պատուաւոր ծերերի ալիքը, որոնք երիտասարդներին, անմիտ ու անհամար կոյրերին, որոնց աչքերը հանեցին: Կարծում եմ, այս անցքերն արժանաւոր կերպով պատահեցան նրանց, որովհետև Քրիստոսի խաչի բևեռները հանելով Կամուղիկէի գուռը, նախատելով ասում էին. ձիերին պայտ պէտք չինենք: Այս և սրանց ժամանակ կատարուած դառն անցքերն արդարութեամբ պատահեցան սրանց:

Ազնուական կանայք՝ քաջը գլխներից վերառած, հրապարակներն էին իջած, անպատկառ, արևի դէմ խայտառակութիւնների մէջ էին ընկած. նրանք, որոնք հիւանդներին տեսնելու կամ ուխտի տեղերը՝ ոտքով հապիւ էին գնում, այժմ բաց գլխով, բոկոտն, զարդերից մերկացած, պատուից ընկած, բիւր անարգանքների ենթար-

1, Յովբ. ԻԹ. 20.

կուած, գնում էին գերոզների առաջից։ Իսկ կամ-նասուն ոգաներին, կէսը մայրերի գրկերից առնելով՝ քարի էին գարկում. միւսներին մայրերի գրկերում նիզակներով վիրաւորելով, ծնողների կամի հետ մանուկների արիւնն էին խառնում. և միւս կէսը ճանապարհների միացման տեղի վերայ ձգած՝ ձիերի սմբակների տակ բոլորին ոչնչում։ Ո՜վ Աստուած, քո այդ ժամանակուայ ներողութեանը. Ո՜վ թագաւորի անողորմ հրամանին։ Բայց այս ամենով նրա բարկութիւնը չիջաւ, այլ դեռ իւր ձեռքը բարձրացրել է ուրիշ ազգներ վերան յաւելացնել։ Եւ այս գործով բարեշէն երկիրը անմարդ անելով՝ աւեր և ամայի դարձրեց մինչև ձմեռուայ գալը։ Բայց չգիտեմ ինչի համար այս ամենը պատահեցաւ նրանց. խրատի համար, թէ երկրի բնակիչների շատացած ամբարշտութեան, թէ բարբարոս ազգերից ժողովուած արևմտեան գօրքերի վատ վարքերի երևից։ Թագաւորը գարձաւ Պոնդոսի 36) բարեխառն երկրի ձմերոցը, և մոնելով Խազտեաց 37) գաւառը՝ գիշերեց։ Պետրոս Հայրապետը յետևից գնալով, հանդիպեցաւ նրան Աստուածայայտնութեան մեծ տօնի օրերում և յաղթելով մեծարուեցաւ նրանից։

Իսկ Աստուածայայտնութեան օրը, բարեպաշտ քրիստոնեայ թագաւորներին ու իշխան-

ներին օրէնք է, որ իրանց անձերը հաւատարեն եկեղեցու առաջնորդների հետ, և ուրքով գնան գետը, ու այն տեղ կատարեն Քրիստոսի մկրտութեան խորհուրդը: Ուստի՝ այդ օրը թագաւորը հրամայեց Պետրոս Հայրապետին ջուրն օրհնել մեր կանոնին համաձայն, և Հռոմոց եպիսկոպոսներին, որոնք այնտեղ պատահեցան, իրանց կանոնին համաձայն:

Երբ որ Հայրապետը սուրբ Միւռոնը ջուրը թափեց, յանկարծ ջրիցը դուրս ելան լուսի ճառագայթներ. այդ երևոյթը բոլորը տեսան և փառաւորեցին Աստծուն, ու մեր հաւատի զօրութիւնը բարձրացաւ: Պետրոս Հայրապետն առաւել ևս պատիւ ստանալով թագաւորից ու մեծամեծներից, դարձաւ իւր տունը: Բայց այնտեղ գրուեցաւ հայերի կորստեան գիրը և նամակը. որովհետև Յովհաննէս—Սմբատը պատուէր էր տուել Հայրապետին, թէ գիր գրէ և կտակ տուր թագաւորին, որ իմ մահից յետոյ քաղաքներս ու իմ երկիրը իրան կրտամ ժառանգութեան համար. ինքը որդի չունէր, որ թագաւորութիւնը ժառանգէր. բստորում նրա որդին վաղճանեցաւ և հօր պատուին չհասաւ: Թագաւորը գնաց հասաւ վերևն յիշատակուած ձմերոցի տեղերը, և զօրքերը գերիներին անշան գնով վաճառեցին հեռաւոր ազգերին:

Այն ժամանակում վախճանուեց Տէր Սարգիս սուրբ և արժանաւոր Հայրապետը: Նրա գերեզմանը գտնւում է Հռոմոսի 38) վանքում:

Գ. ԳԼՈՒԽ:

Թէ ի՞նչպէս էրէրոդ անգամ ընդարձակը գալիս է Տայոց աշխարհի վերայ, որ յաշխարհն Վէրիոյոց 39) ղրկելը:

Ինքնակալն ամբողջ ձմեռը մնալով Պանդոսի բարեխառն երկրում, գարնանային ժամանակն հասնելիս, իսկոյն կրկին շարժւում է Տայոց աշխարհի վերայ. և շատ իջևաններից անցնելով՝ գալիս բնակւում է Բասենի գաւառում: Բայց հռոմոց իշխաններից շատերը, որոնց՝ իմաստասէրը ձգել էր պատուից ու իշխանութիւնից, զանազան ժամանակներում այլ և այլ պատճառներով, և որոնք վանդակներում բռնուած առիւծների պէս մնչում էին, այստեղ յարմար միջոց գտած՝ մի տեղ ժողովեցան և չար խորհուրդ արին, որ չկարողացան կատարել: Բոլորը միասին մտածեցին ապստամբել իմաստասէրի դէմ և իրանց ցանկացածին իմաստասիրացնել: Երբ այս դիտաւորութեան մէջ հաստատուեցան, ապա մինչև լոյս այս խորհրդովն զբաղուելով, ընդարձակ դաշտում բանակ դրին. այդ տեղ մարդկանց անթիւ բազմութիւն մի տեղ ժողովեցաւ և սկսեցին իմաստասիրական

պատիւն իրար վերայ ձգել։ Վերջը՝ բոլորը միաբանելով, բռնեցին Փոկասի 40) որդուն, որին ծռամիզ էին անուանում, և որը իւր հօր յանցանքի համար վաղուց արդէն իշխանութեան պատուից ընկած էր։ Նա անհամաձայն լինելով յանձն չառաւ. բայց ընտրողները չմոլացան խնդրելուց, այլ սաստկելով յօժարացրին, մինչև որ յանձն առաւ։

Այդ խորհուրդը երբ լսեց ինքնակալը, մեծ տարակուսանքի մէջ ընկած, գնալով ամրացաւ Մագդատ 41) կոչուած մի ամուր բերդում. որովհետև այս Յունաց ատն հին սովորութիւնն է։ Բայց չգիտեմ ասուածային իրաւունք է, որ ծառաներին արժան չէ տէրերի վերայ գնալ, թէ այդ ժամանակ առանձին զօրութիւն էր թագաւորին. միայն այս հաւատի գիտեմ և իմ աչքովս էլ տեսայ, որ նրա վերայ գնացողները ծիծաղելի մահով մեռան։ Ինչպէս առաջին ժամանակ նրա թագաւորութեան սկզբում Սիկլառոս կոչուած Վարդը 42) ապստամբեցաւ նրանից և համարեա թէ բոլոր Հառոմներին 43) տարաւ իւր հետ, այնպէս որ, թագաւորն օգնականութեան համար զօրք խնդրեց Վրացւոց Կիւրապատրատից, և նրանցով յաղթելով բռնակալին, աշխարհից փախցրեց։ Նա գնաց ընկաւ Բագդացւոց Բաբելոն 44) քաղաքը։ Ապա նրանից չէ

317

ասէ՝ նրա նման նոյն ապստամբութեան ոգով շարժուեցաւ Փոկասը 45) և տիրեց բոլոր արևելեան կողմին եօթն տարի։ Թագաւորը միայն չորս հազար մարդով գիշերը ծովից անցած՝ յարձակուեցաւ ապստամբի բիւրաւոր զօրքի վերայ, և նոյնքան բազմութեան մէջ ոչ ոք չը մնաց, բացի նոյն իսկ ապստամբ Փոկասից, որի գլուխը կտրելով՝ հրամայեց խաղաղութեան փող հնչեցնել։ Պատերազմը դադարելուց յետոյ՝ զօրքերից ամէն մէկը դառնում է իւր տունը. և թագաւորն ինքը մեծ յաղթութեամբ դնում, մտնում է իւր քաղաքը՝ Կոստանդնուպոլիս։

Այսպէս էլ այստեղ նրանց ազգական խաղի գործը երբէք չերկարեց, այլ ուզի վերայի շինուածքի նման՝ հեղեղների բաղխելու ժամանակ շուտով փլչելով կործանուեցաւ։ Որովհետև Պաւիթը, որ Սենեքերիմ էր կոչում, նեղուելով Պարսիկներից, իւր հայրենի ժառանգութիւն Վասպուրական 46) աշխարհը ապիս է ինքնակալ Վասիլին, և փոխարէնն առնում Սեբաստիա 47) քաղաքը իւր շրջակայ գաւառներով։ Սրանք ոչ հեռու ժամանակում կատարուեցան, այլ երկու երեք տարի յառաջ. և այն ժամանակից մինչև այժմ Հռոմները տիրեցին ապեալքին։ Սենեքերիմն այն ժամանակ բոլոր ապստամբներին խորհրդակից էր, և նրանց հաւատարիմ. նա քնից

յանկարծ զարմածի, կամ մի հզօր մարդու նըմանն, որ սմփռուում է արքեցումիւնից, տեսնելով այն անմայել գործերը և չար միաբանումիւնը, որ հնար չկար ուրիշ բանով խափանել, մի օր, անսպասելի ժամում, առաւ այն անձին, որին թագաւոր անուանեցին, բանակից դուրս ելաւ, իբր թէ առանձին խորհուրդի համար և յանկարծակի սուրը վերցնելով՝ սպանեց նրան. և գլուխը կտրելով, տուեց իւր ծառաներին՝ շուտով թագաւորին հասցնելու համար:

Իսկ ժողովուրդները, այս այսպէս լինելու ժամանակ, շուտով ծածուկ իրանց տունը հասնելու համար, միմեանցից առաջ էին վազում և իսկոյն նրանց բոլոր խորհուրդները խափանուեցան:

Բայց թագաւորը՝ տեսնելով բռնակալի գլուխը, հրամայեց ձողի վերայ բարձրացնել, որ բոլոր բանակը տեսնի. որովհետև նրանցից շատերը, թէպէտ անձամբ թագաւորի կողմն էին, բայց խորհրդով՝ ապստամբի: Այդ գործը կատարում է իւր մեծ իմաստումեան համաձայն, որպէս զի տեսնելով այդ՝ հեռանան այն անմիտ խորհրդից և ուղղուին իրանց սրտերում՝ իրան հնազանդելու համար:

Սրանից յետոյ թագաւորը զօրքով գնում է Բասենի ընդարձակ դաշտը և ուղարկում հեթանոս զօրքերից հեծեալներ՝ ապստամբ Փերսին

կալանաւորելու համար. և ինքը շարժուելով հասնում է Բասենի սահմանագլուխը, այնտեղ, որ Սալքորա է կոչւում ու բանակի շուրջը խոր փոս փորելով պատում և մի ամիս կամ եւ աւելի ժամանակ այնտեղ հանգստանում։

Իսկ թագաւորից ուղարկուածները բռնելով Փերսին 48) և նրա փեսայ Անդրոնիկէին, որ նրա հետ խորհրդակից էր, բերին մինչև Խաղաղ առիճ 49) կոչուած բերդը, որ Կարնի սահմանագլխումն էր, և հասնելով ամրոցի հանդէպ գրտնուած գաշտը՝ իջևանեցան. այնտեղ Անդրոնիկոսին և Փերսին յառաջ բերելով, կտրեցին նրանց գլուխները։ Որովհետև թագաւորը նրանց նոյն պատուէրն էր տուել. վասն զի Անդրոնիկոսն ու Փերսը՝ իրանց ապստամբելու ժամանակ, գաշնակից եղան Ամիրաներին և խոստացան մինչև այդ տեղը բաժին տալ նրանց. ըստ որում ժամանակ յառաջ Դաւիթ Կիւրապաղատը տիրում էր այդ բաժնին, բայց ոչ իբրև Հայրենի ժառանգութիւն, այլ՝ թագաւորից իբրև պարգև իւր հաւատարիմ ծառայութեան համար. և թէ՝ նա խոստացել էր իւր մահից յետոյ այն գաւառը յանձնել թագաւորին։ Նրանք մտքերը չէին բերում այդ, այլ զոհ սրբազ այն պարգևի վերայ էին մտածում, որ իրանցը չէր։ Այդ պատճառով էլ թագաւորը հրամայեց այնտեղ կտրել նրանց գլուխը։

Դ. ԳԼՈՒԽ։

Եղբայրամ եղած վերջին պատերազմը։

Բայց այն օրերում, երբ թագաւորը մնաց Սալքարայում, որովհետև երեք բերդեր իրանց դաստակերտներով պահանջում էր Գէորգից, որոնք Գուրգէնն անիրաւաբար խլել էր Կիւրապատի բաժնից, գեսպաններ է ուղարկում նրա մօտ և քաղցր խօսքերով գրում նրան, թէ.— «Ինչ որ քո Հայրենի ժառանգութիւնը չէ, թող և խաղաղութեամբ ընակուիր քո բաժնում, և իմ՝ գէպի Պարսկաստան գնալու ճանապարհին արգելք մի՛ լինիր»։ Բայց նա յանձն չէ առնում. յետոյ ուղարկում է Վաղարշակերտի եպիսկոպոս Զաքարիային, որին փոքր ինչ յառաջ յիշեցինք։ Նա գնաց և համոզական խօսքերով խաբեց Գէորգին, որ ցօժարեցաւ և գրեց թագաւորին, տալ ինչ որ նա պահանջում է. եպիսկոպոսը՝ գիրն առնելով, ուրախութեամբ դարձաւ։

Մի աւուր ճանապարհ եկած՝ այն իջևաններում, ուր հանգստանալու էր, սուրհանդակները շուտով հասան յետևից նոյն գիրը պահանջելու համար, որովհետև անմիտը փոշմանեց. և առնելով՝ կրկին յետ դարձան։ Իսկ եպիսկոպոսը

գնաց ներկայացաւ թագաւորին և պատմեց եղածները. որանից յետոյ հարցնում է թագաւորը զօրքերի և նրանց պատերազմական պատրաստութեան մասին: Զաքարիան պատասխանելով ասում է, թէ.—«Ամենից շատ զօրք ունի, և զօրութիւնով հզօր է ու պատրաստ պատերազմելու»: Թագաւորն այս լսելով, բարկացած ասում է.—«Դու էլ ապստամբների կողմից գալով՝ վախեցնում ես ինձ»: Հրամայում է տանել Կոստանդնուպոլիս, ասելով.—«Գնա, հանգստացիր այն տեղ, մինչև որ ես փախստական քեզ մօտ կը գամ»: Եւ տանողներին հրամայում է կտրել նրա լեզուն: Նա գնալով՝ այլևս չդարձաւ իւր տեղը, այլ մնաց այն տեղ, մինչև իւր մահուան օրը:

Որանից յետոյ՝ թագաւորը թողնելով Սալքարա իջևանի բանակի տեղը, յառաջ է գնում. զօրքով Եղփայ անուանուած տեղում: Ափխազն, այս իմանալով, երբ դեռ նրանք չէին բանակ դրել և պատնիշով ամրացել, այս ձևով խորամանկութիւն է անում: Իրա գլխաւոր եպիսկոպոսներից մէկին դեսպան է ուղարկում. և ինքը դեսպանի յետևից զօրքով գնում, որ իբր անպատրաստ վրայ հասնին և նրանց սարսափեցնելով փախցնեն: Նրանք գնացին հանգստացած ձիով, և իբրաքանչիւրը իւր ընկերից յառաջ էր անցնում, ոչ թէ պատերազմի կարգով, այլ իբր

թէ աւար առնելու համար։ Ինչպէս հին ժամանակում, Յովրամի օրով, Մովաբացիները 50) Իսրայէլացիների վերայ յարձակուելով՝ խիստ սրով կոտորուեցան, նոյնպէս էլ սրանց հանդիպեցաւ։ Որովհետև Ափխազները երիվարների վրայ նստած անխոհեմութեամբ վրայ հասան, և որովհետև երկաթէ ծանր զէնքերի և երկար ճանապարհի երեսից ուժից ընկած էին, ուստի՝ Հռոմոց զօրքերն իսկոյն առանց դժուարութեան շրջապատերով նրանց՝ կոտորեցին անմիւ բազմութիւն։

Իսկ մնացածներն իրանց թագաւորի հետ փախան, մտան Ափխազների բերդը. Հռոմոց զօրքերը նրանց հետևելով՝ կոտորեցին մինչև արևի մայր մտնելը։ Այս հրամայեց թագաւորը սպանուածների գլուխները մի տեղ հաւաքել և ամեն մի գլխի համար բերողներին մի մի դահեկան տալ. նրանք բոլոր սահմաններում որոնելով՝ սպանուածների գլուխները թագաւորի առաջը բերին և մի տեղ հաւաքեցին. թագաւորը հրամայեց գլուխները ճանապարհի վերայ կոյտ կոյտ դարսել, տեսնողներին սարսափեցնելու և զարմացնելու համար։

Սրանից յետոյ՝ Գէորգն երբ տեսաւ իրան՝ բոլոր յոյսից կորուած, հաշտութիւն խնդրեց թագաւորից։ Այս լսելով թագաւորը՝ խղճաց նրան և գրեց այս ձևով մի հրովարտակ.—«Մի՛ կարծեր,

ասում է, թէ քեզ յաղթեցի, աւելի մի բան կը պահանջեմ քեզանից, քան առաջ. այլ տուր իմ հայրենի երկիրը, որը Կիւրապաղատան է ինձ տուել և քո որդին էլ ինձ պատանդ, և ահա իմ և քո մէջ խաղաղութիւն կը լինի»: Գէորգն այդ առաջարկութեանը հաւանելով, յանձն է առնում. թագաւորը վերակացուներ է կարգում գաւառի վերայ, որոնք գաւառը բաժանում են տուն տուն, գիւղ գիւղ և ագարակ ագարակ, (նշանակում է, կարգուած իշխանները հաւասար մասերի են բաժանում գաւառը) ինչպէս առաջիններին ժամանակ: Վասիլ թագաւորը պատանդներին առնելով՝ խոստանում է վերադարձնել երեք տարուց յետոյ. և ինքը գնալով՝ պատում է Հայաստանի շուրջը և իջնում բանակում ձիաւոր զօրքովը Հերի 51) ընդարձակ դաշտում, ու զօրքերին հրամայում քաղաքի ծառատունկերը կոտրել: Իսկ քաղաքի իշխանն ազաչում է հարկաւոր լինել թագաւորին և հնազանդել:

Եւ երբ նա այս մտածման մէջն էր, Պարսից աշխարհն էլ սարսափով պաշարուած՝ փրկութեան հնար էին որոնում, յանկարծ երկինքն ամպերով խառնուեալ և յորդ անձրևներ երկիր հոսեցին, նրանից յետոյ փչեց հիւսիսային սառն քամի ու անձրևը փոխեց կարկուտ, ձիւն և սառոյց ու թանձրութեամբ ծածկեց երկրի երեսը. որովհետև նոյն իսկ ժամա-

նակն էլ ձեռնում էր այդ բանին, ըստորում ձմեռը խիստ մօտեցել էր։ Ձիւնի և խիստ սառնամանիքների երկարելով՝ ձիերի և ջորիների ջոկերը փայտացած՝ չէին կարողանում շարժիլ։ Իսկ խիստ սառնամանիքի երեսից՝ հեռակ գօրքերի ոտների և ձեռների ծայրերը, կրակից այրուածի նման, կորուելով թափւում էին. վրանների լարերն ու ցցերը գետնի վերայ կապուած՝ անշարժ մնացին դառն ցրտի սաստկութիւնից։ Եւ այս, ինչպէս ինձ թւում է, նրանց արած անողոմ կոտորածի հատուցումն էր, որ նրանք քրիստոնեաների վերայ բերին։ Թէպէտ քրիստոնեաներն իրանց մեղքի համար մատնուեցան, բայց որանք պէտք է խնայէին, ինչպէս և Բաբելացուն ասում էր Աստուած.—«Ես մատնեցի իմ ժողովրդին քո ձեռքը, և դու նրանց չը խղճացիր»։ Այս պատճառով խիստ սառնամանիքով տանջուեցան ոչ բարձր լեռների վերայ, այլ խոր և խիստ ջերմ դաշտերում, իրանց թշնամիների աչքի առաջ, ինչպէս Մովսէսի ժամանակ՝ Եգիպտոսը 50) պատժուեցաւ եղեմնով ու կարկտով այն երկրի բնութեան հակառակ։ Ուստի այն բարբարոսները յայտնի կերպով հասկացան, որ Ամենակալ Աստծու ձեռքն է պատերազմում իրանց հետ։ Այս այսպէս լինելու ժամանակ, որոնց վերայ այժ ու զօրութիւն մնաց, թագաւորի հետ

ձի նատած, սառնամանիքից, ինչպէս թշնամիներից հալածուած, ունեցածների մասին ոչինչ չը մտածելով՝ փախչում էին Արծրունեաց 52) գաւառը։ Հեր քաղաքի բնակիչները այդ տեսնելով, բազմութեամբ խռնուած դուրս ելան, և մեծ ուրախութեամբ վրայ հասնելով՝ լիացան ձիերի, ջորիների, վրանների և այլ ունեցածների աւարով, որոնց մասին փախչողները չկարողացան հոգ տանել, այլ միայն ցրտից էին շփոթուել։

Իսկ թագաւորն աւար առնողներից նախատուելով, յայտնի կերպով հասկացաւ, որ Աստուծ ձեռքը Վրացիներին մատնեց իւր ձեռքը, ինչպէս Թագաւորութեան գրքում գրուած է.—«Հզօրը չի զօրանում իւր զօրութիւնով, այլ Տէրն է տկարացնում հակառակորդին» 1.։ Ապա թագաւորը՝ իւր զօրքերովն ելած, շատ իջևաններ անցնելով, գնում, հասնում է իւր քաղաքը՝ Կոստանդնուպոլիս։ Երեք տարի մնալուց յետոյ՝ շատ պարգևներով է արձակում Ափխազների թագաւորի որդուն, և ինքը մահուան ցաւով հիւանդանում։

Բայց որովհետև Կոստանդին 53) իրա հարազատ եղբայրն ու թագակիցը Նիկիացւոց 54) գաւառումն էր, հրամայեց խնդրակներ ուղարկել, որ

1, Սաղ. ԼԲ. 16. և Ա. Թագ. Բ. 9.

շուտով իւր մօտը գայ։ Իսկ հրամանատարները, խօսքով հաճութիւն տուին, բայց թագաւորի հրամանը ծածկեցին իրանց մօտ. ըստորում չէին կամենում, որ Կոստանդինը թագաւոր է։ Հրամայական շատ խօսքերից յետոյ, ինքնակալը հասկանալով նրանց խորամանկութիւնը, հրամայեց սպասաւորներին՝ ձի բերել իրան համարտնկողնից վեր կենալով, նստաւ ձիու վերայ և պալատից դուրս ելաւ, քաղաքի բնակիչների աչքի առաջ։ Նատերն այդ տեսնելով, վախեցան և գնացին մուտ տներումը պահուեցան։

Ապա խնդրակները գալով, շուտով այնտեղ հասցրին Կոստանդինին. թագաւորը նրան տեսնելով, թագաւորութեան թագը դրեց նրա գլուխը և հաստատեց թագաւոր, ու պատուէր տուեց, ինչպէս Դաւիթը Սողոմոնին, թագաւորութեան մէջ խռովութիւն ձգողներին և իւր թագաւորութիւնը չուզողներին կենդանի չթողնել. բայց Դաւթի նման նոր պատճառ մի որոնիր։ Եւ ինքը տնկողին մտնելով, երկու օրից յետոյ մեռաւ, որ թագաւորեց յիսուն տարի։ Բայց նրա մահուան ժամանակ երկնքից սքանչելիքի մի նշան երևեցաւ։ Այն իրիկուայ ժամին, երբ նա իւր հոգին աւանդեց, երկինքը պատառուելով, կրակի փայլակը յանկարծակի ընկաւ ներքև. բոլորը միասին տեսնելով այդ երևոյթը, ասացին. թագաւորի մահն է գուշակում։

Է. ԳԼՈՒԽ։

Կոստանդէ Ընդարտրոնինը։

Վասիլից յետոյ թագաւորեց նրա Հարազատ եղբայր Կոստանդինը չորս տարի. որովհետև նա խաղաղասէր ու բարի մարդ էր, իւր թագաւորութեան առաջին տարում կացաւ Հանդարտութեան մէջ և երկիրը Հանգստացաւ ամենամեծ նեղութիւնից։ Գաւառների վերակացու այն իշխաններին, որոնց՝ մեծ Վասիլն էր նշանակել, նոյն պաշտօնի մէջ Հաստատեց։ Իսկ Կոմիտոս անունով մի քաջ ու պատերազմասէր մարդու, որին իւր եղբայրը Վասպուրական գաւառին տէր էր կարգել, քաջութեան մեծամեծ գործեր ցոյց տուեց Պարսից դրանը և բոլոր արևելքում անուանի եղաւ։ Սա թագաւորի մեռնելու ժամանակ վատ խորհուրդ մտքումը դրած՝ Գէորգին գաշնակից եղաւ արևելքում թագաւորելու Համար։ Այդ խորհուրդը Կապադովկացի 55) զօրքն իմանալով, միաբանելով՝ յանկարծակի վրայ յարձակուեցան, վրանի լարերը կտրատելով վերան ձգեցին, և նրան ու նրա խորհրդակիցներին մի բերդում բանդարկեցին և յայտնեցին թագաւորին։ Այս եղաւ Կոստանդիանոսի թագաւորութեան առաջին տարում, երբ մեր թուականի

չորս հարիւր եօթանասուն և հինգ տարին էր։

Իսկ թագաւորն երբ որ լսեց, ոչինչ պատիժ չտուեց նոյն տեղում. այլ մի ամբողջ տարի համբերեց, մինչև իրողութեանը լաւ տեղեկացաւ։ Ապա երկրորդ տարու սկզբում ուղարկեց դահիճ, որ եկաւ կուրացրեց նրա և նրա հետ գտնուած ութ մարդկանց աչքերը. որ ցաւելու շատ արժանի է, թէ ինչպէս բարի յիշատակութեան արժանի այնպիսի պատուական մարդը յիմարացաւ. որովհետև նա Հռոմոց ձեռքի տակ ձգեց Արճէշը 56) իւր կալուածներով։

Բայց երկրորդ տարին գալիս, թագաւորն ուղարկում է վերակացու նոյն աշխարհի արևելեան կողմին Նիկիտոմ ներքինուն, որ գալով գնում է Վրաց գաւառը և նոյն աշխարհի ազնուականներից շատերին խաբերայական խօսքերով հայրենիքից հանած՝ ուղարկում է թագաւորի մօտ։ Նա նրանց տեսնելով, ուրախանում, մեծամեծ պարգևներով ու իշխանութեամբ պատուում, և ամեն մէկին իւր արժանաւորութեան համեմատ ընծայում է գիւղեր և գիւղաքաղաքներ գրով և կնքով յաւիտենական ժառանգութեան համար։

Իսկ երրորդ տարու սկզբում Սիմոն ներքինին շատ զօրքով գնում է գէպի արևելք. նա կէս թագաւորութեան իշխանութիւն ունէր. նը-

բան Յունաց լեզուով Պառեկիմանոս են անուանում. նա գալով անցաւ Վրաց աշխարհը, բայց միջոց չունեցաւ մի գործ կատարել, որովհետև թագաւորի մահուան բօթը իսկոյն եկաւ. այդ երբ որ լսեց, առանց յետանալու կրկին իւր զօրքովը գնաց Կոստանդնուպոլիս:

Զ. ԳԼՈՒԽ:

Թէ Ռոմանոսն ինչպէս խոգեւորէց:

Թագաւորների մէջ հզօր և պատերազմների մէջ միշտ յաղթող Վասիլը, որ շատ երկիրների տիրեց, պատերազմների պատճառով ժամանակ չգտաւ ամուսնանալ և թագաւորութիւնը ժառանգող որդիք ունենալ, ինչպէս բոլոր թագաւորներին օրէնք է: Նրանից յետոյ, վերևը յիշուած, նրա հարազատ եղբայր Կոստանդիանոսը թագաւորեց: Սա ևս արու որդի չունէր, այլ երկու աղջիկ. անդրանիկ աղջկանը՝ Զոյան կրնութեան է տալիս Ռոմանոսին, որ Հռոմոց զօրքերի ապաներից մէկն էր. նրան թագաւորացնում է իւր փոխանակ և ինքը շուտով մեռնում:

Ռոմանոսն իւր թագաւորութեան առաջին տարում զօրք է ժողովում և գնում Անտիոքացւոց 57) կողմերը. նա կամենում էր գնալ Հալպ? կոչուած քաղաքի վերայ՝ առնելու, աւերելու

համար։ Գալիս հասնում է Սև կոչուած լեառը 58) և այնտեղ տեսնում վանքերի ու ճգնաւորների մենաստանների բազմութիւն, որոնք մարմին ունէին, բայց անմարմինների (հրեշտակների) նմանութիւն էին կրում. միայն այծի մազէ ծածկոյթով կամ բաճկոնով էին բաւականանում, Յովհաննէսի նման։ Բայց միայն նա կերակրւում էր մարախով և վայրենի մեղրով, իսկ սրանք երկաթէ փայտատ ձեռքերն առած՝ անհանգիստ աշխատում են գարու հատիկներից օրապահիկ կերակուրը պատրաստելու. իսկ զանազան խորտիկները և քաղցրահամ կերակուրները ուրախացնող գինու հետ միասին, որ խաղողի այգիներն են տալիս, բոլորը թողին աշխարհասէրներին. և սարի գլուխը բարձրացած՝ Մովսէսին դասակից լինելով, միշտ խօսում են Աստուծու հետ։

Թագաւորը սրանց տեսնելով՝ հարցնում էր իւր մեծամեծներին.—«Այս ինչ հերետիկոսների բազմութիւն է»։ Նրանք ասում են. սրանք բոլորը ազօթողների խումբ են, որոնք միշտ ազօթում են աշխարհի խաղաղութեան և ձեր կեանքի առողջութեան համար։ Թագաւորը պատասխանելով՝ ասում է—.«Ինձ սրանց ազօթքը պէտք չէ, այլ բոլոր վանքերից հաւաքեցէք աղեղնաւորներ իմ թագաւորութեանը ծառայելու համար»։ Որովհետև Քաղկեդոնի 59) կանոններին շատ էր

հաւանել, ուստի՝ բոլոր ուղղափառ հաւատներն ատելի էին նրան։ Թոմանեան Աստոց եպիսկոպոսին տանելով Կոստանդնուպոլիս, ծաղրելով հրամայում է մօրուքը խուզել և իշու վրայ նստեցրած՝ պտտել հրապարակներում և փողոցներում, թքքել ու մրել նրան. յետոյ հրամայեց նրան աքսորել. նոյն իսկ այն տեղ էլ մեռաւ։ Այսպէս պակասամիտ մէկն էր թագաւորը, որ առաջին թագաւորներին չը մոռաբերեց, թէ ինչպէս խրնամասարութիւն ցոյց տուին գէպի այն ազգերը, որոնց իրանց իշխանութեան ներքև ունէին. այլ ինքնահաւան կերպով կամենում էր նորաձևութիւն մտցնել Աստծու եկեղեցիների մէջ, չլիշելով Տէրունական անուտ հրամանը, թէ.—«Ով որ զարկուի այս վիմին, պէտք է փշրուի. և ում վերայ ընկնի, պէտք է ոչնչացնէ նրան»[1]։ Վասն որոյ շուտով հանում են Աստծու արժանահաս պատիժները նրա վերայ։ Ճաճիկներից ոչ ուելի քան ութ հարիւր, կամ հազար զօրք գալով՝ նոյն ճանապարհում յարձակուեցան այն բիւրաւոր բազմութեան վերայ և չափից դուրս կոտորեցին. նրանք թագաւորի և զօրքերի դանձերը թալանելով, դարձան իրանց քաղաքը։

Իսկ թագաւորը, մեծ նախատինքով փախստական եղած՝ ձիարշաւ հասաւ իւր թագաւորութեան

1, Մատթ. ԻԱ. 44.

քաղաքը։ Ապա իւր սատանիկ ամբարտաւանութիւնը թողնելով, կարողացաւ մատաբերել Դաւիթ Մարգարէի երգի խօսքը, որ ասում է.— «Բարի է Աստծու և սրբերի աղօթքի վերայ յոյս դնել, քան իշխանների և առատ զանձերի։ Ճշմարտում կարողութիւնը կամ հարստութիւնը բնաւ չեն օգնիլ բարկութեան ժամանակ[1]։ Նրանից յետոյ և ապագայումն էլ՝ այլ ևս դուրս չեկաւ իւր թագաւորական քաղաքից, մինչև իւր մահուան օրը։

Է. ԳԼՈՒԽ.

Ուռհա (60) քաղաքի սուրը։

Ուռհա քաղաքի իշխանը, որին իրանք կոչում էին Ամիրա, և որը նախնիքներից էր ստացել այն տեղի ժառանգութիւնը, մեռաւ անորդի. իսկ նրա կինը, իւր ծառաներից մէկին, որի անունը Սալամայ էր, առփական ցանկութեամբ սիրեց և իւր ամուսնու փոխարէն քաղաքին տէր արաւ։

Բայց Սալաման, քաղաքի մեծամեծներից վախենալով, թէ չեն հնազանդիլ իրան, իւր հաւատարիմ ծառաներից մէկին ուղարկեց Մանեակ իշխանի մօտ, որ այն ժամանակ Հռոմոց գաւառի սահմանագլխի մօտ իշխանութիւն ունէր և

1, Սաղ. ՃԺԷ. 9.

նստում էր Սամուսատ 61) քաղաքում, որը ասում են, Սամոսոն է շինել հնումը։ Դա Մանեակի ձեռքով խնդրեց Հռոմոց թագաւորից, որ տայ իրան իշխանութիւն և յաւիտենական ժառանգութիւն գրով և թագաւորական կնքով Հռոմոց աշխարհում. և ես, ասում է, կը յանձնեմ նրան իմ Ուռհա քաղաքը առանց պատերազմի։ Այս բանը լսելով Թոմանոս թագաւորը, հաւանութեան գիր է գրում Սալամային և նրան նշանակում Անմիխպատրոս Պատրիկ 62) ու նրա կնոջը պատում մեծ ու երևելի պատուով։

Իսկ քաղաքացիները, երբ որ լսեցին աղաղակի ձայնն ու փողերի հնչիւնը, տխուր, ահուդողով դուրս գնացին, սարսափած ու շփոթուած, ծովի ալիքների նման միմեանցից յառաջ էին անցնում։ Եւ երբ չկարողացան գործի հնարքը գտնել, նոյն քաղաքի մահմետականները, գիշերը մօտիկ քաղաքները հասնելով, պատմեցին բնակիչներին Ուռհա քաղաքի, յանկարծահաս վտանգը։ Իսկ Հռոմոց զօրքերն, երբ որ իմացան այս, ձայն տալով մի տեղ ժողովեցան, և գալով քաղաքի վրայ, նրա պարիսպը քանդեցին ու ներս մտնելով՝ շատ կոտորած արին։ Ուստի՝ քաղաքացիներից շատերը, մտնելով մեծ Կամուդիկէն, ամրացան. և միւսները ամուր տեղերում կամ աշտարակներում։ Իսկ քաղաքը պաշարողները

շատ տեղեր կրակով այրեցին, մինչև նոյն իսկ Կաթուղիկէի մէջ կրակ ձգեցին և բաց անելով սուրբ տան գանձարանը, ուր ամբարել էին Հայոց առաջին թագաւորները սպասներ Աստծու տան հարկաւորութեան համար, բոլորը շատ շուտով հանելով, գնացին իրանց տեղերը։ Այն օրից մինչև այժմ Ուռհա քաղաքն ընկաւ Հռոմոց ձեռքը։

Ը. ԳԼՈՒԽ։

Ռոմանոսի մահը։

Ռոմանոս թագաւորը, բարի յիշատակների բընաւ չարժանացած, մեծ Հինգշաբթի օրը պալատը դուրս գալով իւր զօրքի հետ հանդիսաւոր կերպով խօսելու, մինչև կէսօր տալիս է թագաւորական պարգևներ իշխանութեան համաձայն. և ապա գործը վերջացրած՝ հրամայում է ոսկի աւազանում ջուր պատրաստել լուացուելու համար։ Եւ երբ մտաւ տաք ջրով լցուած ոսկի աւազանը, սպասաւորները, նրա գլխի մազերից բռնելով, ընկղմեցին ջրի տակը և մեռցին։ Թագուհին կամակից լինելով այդ գործին, ինքը թագաւորեց եօթը տարի։

Թ. ԳԼՈՒԽ։

Մինոյէյի Ռագ-որո-Ռիւնը։

Դանիէլ Մարգարէն տեսիլքի մէջ մի արձան տեսաւ, որի գլուխը ոսկի էր, թիկունքն ու ձեռները՝ արծաթ, իսկ մէջքն ու կողերը՝ պղինձ. սրանք կատարուել վերջացել են. իսկ խեցու հետ խառնուած երկաթէ սրունքներն ու ոտները Հռոմոց թագաւորութիւնն է. որովհետև ուրիշ ազգերի թագաւորների նման որդին հօրը չէ ժառանգում։ Այն թագաւորը, որ Հայրերից և պապերից է ժառանգում, երկաթն է. իսկ եկամուտը, որ թագաւորական ցեղից չէ, խեցին է։ Այսպէս շատ անգամ է կատարուում Հռոմոց մէջ, ինչպէս և նոյն իսկ այժմ տեսնում ենք նոր կայ թագաւորի վերայ։ Սա ոչ թագաւորական տոհմից էր, ոչ թագաւորի որդի, և ոչ ազատներից նշանաւոր իշխան. այլ պալատի ծառաներից մի աննշան մարդ, որին թագուհին սիրելով պատրիկական կատարի սիրով, այդ պատճառով իւր ամուսնուն ջրի մէջ խեղդել տուեց. և ազատներից մինը, ասում են, սա էր։ Իսկ թագուհին այն սառամանական գործերը վերջացնելուց յետոյ, հրամայում է քաղաքի մեծամեծներին իւր մօտ կանչել և յայտնում, որ թագաւորը յան-

կարծամամ է եղել. և ապա հետզհետէ Միխայէլին յառաջ քաշելով, թագաւորացնում է, իրան ամուսին անելով. նրա գործը յայտնուեցաւ բոլորին։

Որովհետև Միխայէլը շատ ազգականներ և եղբայրներ ունէր, ամենաբարձր իշխանութիւնը նրանց ձեռքը տուեց։ Եղբայրներից մէկին Մագիստրոս արաւ և Թեսաղոնիկը 63) նորան յանձնեց ու հաւատաց նրան Բուլղարների և արևմտեան կողմերի հոգսը. մէկին անուանեց Դեմեստիկոս 64), և ուղարկեց Մեծ Անտիոք, Տաճկաստանի և հարաւային կողմերի հոգսը նրան յանձնելով։ Իսկ եղբայրներից երկրորդին, որ ներքինի և աբեղայ մարդ էր, Օռֆանուռոս անուանով, դրեց Կոստանդնուպոլիս թագաւորական քաղաքում, և իրան խորհրդական անելով, պալատի բոլոր հոգսն ու իրաւունքները նրան յանձնեց։

Ինքը սատակապէս գիւտհարուեցաւ, այնպէս որ, մինչև եկեղեցիներն ու որբերի հանգստարանն էր գնում. միայն չգիտեմ թէ Դամանոսի մահի վրէժխնդրութիւնն էր այս, որ անարգար տեղը մեռաւ, թէ գիւտհարութիւնն առաջուց ունէր։ Բայց ուրիշ պատճառներ էլ են ասում. այսինքն՝ թէ որովհետև այն թագաւորութիւնը նրան արժանի չէր, վասն որոյ գնալով Թեսա-

զոնիկեցւոց քաղաքը մի կախարդ կնոջ մատ-
ինչպէս հնումը, Բաբելի (65) ժամանակով,
պատմում են, մի երիտասարդի արած գործերի
մասին կախարդի ձեռքով. նա յանձնեց իրան սատա-
նայի ծառայութեանը և պոռնկութեան դևի
ձեռքով թագուհին սիրահարուելով՝ առաւ նրան
և աշխարհների վերայ թագաւորացրեց։ Իսկ Մի-
խայէլը թագաւորելուց յետոյ, թագաւորների
օրէնքի կամ սովորութեան համաձայն՝ Տէրունա-
կան տօների ժամանակ պարտաւորութիւնից
ազատուած, երբ եկեղեցի էր գնում, չար դևը
չը ներեց նրան, իրանից ապստամբ կարծելով։
Եւ այս հաստատում են նրանով, որ ասում են,
թէ շատ անգամ թագաւորը Թեսաղոնիկէումն
էր ապրում, և կարծում էին, թէ կախարդի մա-
տը՝ն է լինում։ Թէ այսպէս և թէ այնպէս, բայց
մինչև մահը դիւահարութիւնը չհեռացաւ նրա-
նից, որ չարչարում էր նրան։

Սրա թագաւորութեան ժամանակ Հռոմոց
զօրքերին մեծ կոտորած պատահեցաւ Արծրու-
նեաց աշխարհի Բերկրի (66) բերդաքաղաքում,
որը իրա կալուածներովը միասին վաղուց խլել
էին Պարսիկները և իրանց իշխանութեան տակն
առել։ Վասպուրականի գաւառապետ Կաւասելա-
սը, շատ զօրքով Պարսիկների վերայ գալով,
քաղաքն առաւ և նրան պահապան կանգնեցրեց

հեծեալ զօրքեր։ Այն ժամանակ մի ուրիշը ձեռք բերեց Կաւասիլասի իշխանութիւնը և զօրքն առնելով գնաց Հանգստացաւ ուելի հեռու մի տեղ, որ Արծակ է կոչւում, ուտեստի և ձիաւոր զօրքերի այլ պէտքերի պատճառով։ Իսկ քաղաքի տէրը, որի անունը Խորիկ էր և բերդումն արգելուած, Պարսից աշխարհի գլխաւորներին յայտնեց։ Պարսիկները յանկարծակի միմեանց ձայն տալով, մի տեղ ժողովուեցան և քաղաքի վրայ հասնելով պատնիշով պաշարեցին։ Իսկ Հռոմոց զօրքերը անառակ գործերով և գինուով թմրած, չկարողացան պահպանել իրանց։ Մանաւանդ որ, Իսրայէլի պահպանող Աստուածը իւր օգնութիւնը հեռացրեց նրանցից։ Ուստի Պարսիկները սրերը քաշած, նրանցից մօտ քսան և չորս հազար մարդ կոտորեցին։ Պարսից արդարութեան համար չկատարուեցաւ այս, այլ մեր զօրքերի անօրէնութեան, որոնք կոտորուեցան խիստ սրով Նատծու խօսքին համաձայն, թէ.—«Զարերին չարով պէտք է կորցնէ»[1]։ Իսկ Արծիէումն 67) եղած զօրքը օգնութեան չհասաւ։ Պարսից զօրքերն սպանուածների ունեցածները կողոպտելով, գնացին իրանց աշխարհը։ Բայց որովհետև շատ կալանաւորներ ունէին, գնալու ժամանակ Խորիկը հրամայեց մի իջևանում գետինը մարդաչափ

1 Մատթ. ԻԱ. 41.

փորել և կապուածներին մորթել նոյն փոսի վերայ, մինչև որ արիւնով լցուի ու ինքը մտաւ լողացաւ սպանուածների արիւնով, իւր սրտի բարկութիւնն իջացնելու համար։

Իսկ երկրորդ տարում, թագաւորը դարձեալ ուղարկեց զօրքեր, որոնք եկան և սկսեցին մեքենաներով քանդել բերդի պարիսպը։ Բերդումը գտնուողները տեսան որ, փրկութեան հնար չկայ, որովհետև նոյն իսկ շատերն իրանցից մեռան, զօրագլուխներին աղաչեցին, որ անվնաս թող տան իրանց գէպի իրանց աշխարհը և տիրեն բերդին ու կալուածներին։ Նրանք, երբ որ լսեցին, արին, ինչպէս սովորեցան. այնուհետև ընդ միշտ վերացաւ Պարսից իշխանութիւնն այն տեղից։

Միխայէլի թագաւորութեան սկզբում խաւարեցաւ արեգակը Արաց ամսում, ուրբաթ օրը, ճաշից յետոյ, մեր թուականի չորս հարիւր ութսուն երկու տարում։ Գիտուններից շատերը տեսնելով այդ, կարծեցին, նոյն օրը Նեռը պէտք է ծնուի, կամ մեծամեծ փորձանքներ պէտք է գան։ Այդ իսկապէս էլ կատարուեցաւ մեր օրերում, ինչպէս սոյն պատմութիւնը հետզհետէ ցոյց է տալու մեզ։ Մեր աչքերով տեսանք Աստծու բարկութեան հարուածները և չտեսնուած պատիժը, որ հասաւ Հայոց աշխարհին՝ մեր մեղքերի համար։ Նաև մի ժամանակ յառաջ մի

ուրիշ մեծ նշան երևեցաւ, որ տեսնողներին սաստիկ զարմացրեց. նա նման էր Երուսաղէմի վերջին աւերածի նշաններին, որի համար Փրկիչն ողբալով ասում էր.—«Այն օրերը նեղութեանց օրեր պէտք է լինին, որոնց նմանը չեն կատարուել երկնքի ներքև ստեղծագործութեան սկզբից և դարձեալ լինելու չէ»[1]: Որովհետև դէպի իրանց ստեղծողն ու տէրը կատաղեցան, մարդ կարծելով նրան: Անանիաս անունով մի մարդ, Երուսաղէմ քաղաքի մէջ մնալով, բարձր ձայնով ողբում և ասում էր.—«Վայ քեզ, Երուսաղէմ, վայ քեզ, արիւնի քաղաք. հասան քո վրէժխնդրութեան օրերը» և նրա նման ուրիշ շատ խօսքեր, որ մեծ Եւսեբին գրում է իւր եկեղեցական պատմութեան մէջ: Նոյնպէս էլ ազատեղ մեր ժամանակում, նրա նման բոլորովին անծանօթ, անտուն, անտէրունչ մի մարդ, արևելեան կողմից եկած, Ապահունի 68) Հարք և Մանանաղի 69) գաւառներից անցած, Եկեղեցաց գաւառը մտնելով ընդ միշտ մնալու համար, այս խօսքերը բերանն առած, գիշեր և ցերեկ անդադար ասում էր բարձր ձայնով.—«Վայ ինձ, վայ ինձ.» և ուրիշ աւելի բան չէր ասում: Եթէ մէկը հարցնում էր՝ որ տեղից կամ որ գաւառից ես, կամ ինչի համար ես ասում այդ,

1, Մարկ. ԺԳ. 19.

ոչինչ պատասխան չէր տալիս. այլ միշտ նույն բանն էր ասում և չէր լռում։ Անմիտ մարդիկը նրան տեսնելով, խելքից գլխուած կարծեցին. բայց խելացիներն ասում էին.—«Այդ վայը լինելու է բոլոր երկրին»։ Այժմ այս խօսքերը թող այստեղ դադարին, բայց մենք պատմութեան կարգով դառնանք դէպի վերև յիշուած թագաւորը։

Միխայէլը իւր քրոջ որդուն Կեսար է անուանում. և եօթն տարի ութն ամիս թագաւորելով, մեռնում։ Իսկ թագուհին, Կեսարին իրան որդեգիր անելով, թագաւորացրեց իւր ամուսնու փոխարէն. բայց Կեսարը պարգևատրելու տեղ այն երախտիքի փոխանակ, որ թագուհին իրան արաւ, մտածեց աքսորել թագուհուն իւր ազգականներով հեռու կղզիները, որ իշխանութիւնը հաստատապէս իրանց մնայ, որ և կատարեցին էլ։ Իսկ թագուհու Թէոմուրա քոյրը քաղաքի մեծամեծներին կանչեց և եղածները յայտնեց նրանց։ Նրանք երբ որ լսեցին, արևմտեան գօրքը կոչելով, իրանց մօտ հաւաքեցին, և բռնութեամբ վրայ հասան ու պահանջում էին, թէ ցոյց տուր մեզ մեր ծիրանիով զարդարուած թագուհուն, որը իւր պապերից և հայրերից այդ թագաւորութեան ժառանգն է. որովհետև շատերը կարծում էին, թէ իսկապէս մեռած է թագուհին։ Բայց նա երբ տեսաւ նրանց բռնութիւնն ու

միաբանութիւնը, երկիւղով պաշարուած, հրամայեց թագուհուն աքսորանքից շուտով դարձնել։

Երբ որ Թէոմիսրան իւր քրոջը տեսաւ, իսկոյն հրամայեց բռնել թագաւորին իրա ազգականներով և մտերիմներով։ Իսկ թագաւորը փախչելով, կամենում էր Աւագ եկեղեցին մտնել և սեղանի տակը թագ կենալ ու ազատուիլ, բայց չկարողացաւ արժանանալ. որովհետև փնտռողները շուտով հասան և բռնելով դարձրին. և մի անմաքուր տեղում գետնի վերայ պարկացրած, նրա աչքերը կուրացրին, նոյնպէս էլ Գեմեղիկոս կոչուածին և ուրիշ շատերին. և հրամայեց նրանց տունը թալանել և աւերել։ Առ հասարակ բոլոր քաղաքացիները վեր կենալով, կողոպտեցին, և նրանց մեծամեծ ու գեղեցիկ պալատները մինչև հիմքը քանդեցին—ոչնչացրին։ Եւ այնպէս բազմացաւ վրդովուած ամբոխը կողոպտելու համար բորբոքուած, մինչև անգամ պալատի պարիսպը ճեղքելով, թագաւորական գանձարանից շատ գանձեր դուրս տարան։ Քաղաքի մեծամեծները հազիւ կարողացան ամբոխին հանգարտացնել, ցերեկ լինելու օգնութեամբ։

Իսկ թագաւորը, որ երեկ ոսկի աթոռի վերայ նստած, հրաման էր տալիս աշխարհին, այսօր կուրացած, նստած է անիրաւութեան և նախատինքի աթոռի վերայ. և նրանք որոնք

կարծում էին, թէ յաւիտեան կտրեն ծովի և ցամաքի, մի վայրկենում կորցրին անձերի փրկութիւնն էլ։ Մարգարէի ասածի պէս տանիքի խոտերի նման, դեռ ձեռքով բռնելու չարժանացած, չորացան. նրանից ոչ հնձողի բուռը և ոչ խուրձերը ժողովողների գրկերը լցուցեցան. նա և անցորդների օրհնութիւնն էլ նրանց ականջները չը լսեցին[1]։ Վեց ամիս միայն թագաւորեց Կեսարը և նրա այդ մի քանի օրուայ պատմութիւնն այս է։

Ժ. ԳԼՈՒԽ։

Մանուէլ Հոյսոյծ, Թէոդոսի որդի Կոստանդի Ռոգգաւորոնիանը։

Մարգարէի գուշակութեան համաձայն, Կոստանդին էլ խեցի մասից էր. որովհետև պալատումը գօրավարութեան պատիւ ունէր սրա Հայրը, որից աշխարհի բոլոր դատաւորներն են ուզարկուում։ Կեսարի կարճ ժամանակեայ թագաւորութիւնից յետոյ՝ մատակ առիւծը (թագուհին) իւր բնակարանում ընկերի վերայ էր մռնչում, ըստորում շատ հոգսեր նրան պաշարել էին, որովհետև իրա մերձաւորներից ոչ մէկը չունէր թագաւորութեանն արժանաւոր։ Կեսարին, որին

1, Սաղմ. ՃԻԹ. 6. 7. 8.

ինքը որդեգրեց և տէր ու թագաւոր կարգեց աշխարհին, նա վճարեց փոխարէնն այն, որը փոքր ինչ յառաջ պատմեցինք։ Ապա ինչ է անում. կանոնական կարգերից դուրս գալով, յառաջ է քաշում այս մարդուն, ամուսնանում հետը և նստեցնում նրան թագաւորական աթոռի վերայ։ Շատերը նրան սիրահար էին կարծում, բայց ես չը գիտեմ, ամուսինն է՝ թէ սիրահար. միայն ինքը (թագուհին) իւր հրովարտակում գրել էր, թէ աշխարհի խաղաղութեան համար չինայեցի անձս, այս պատճառով վստահացայ անարժան գործ կատարել։

Սրա առաջին տարում, իւր Մանեակ անունով քաջ տղամարդ և երևելի որդին, որ տիրում էր արևմտեան կողմին, շատերին միաբանեց իւր հետ, բազում զօրքով եկաւ մինչև թագաւորական քաղաքի դուռը. նա իւր մեծ ուժովը այնքան բռնացաւ նրանց վերայ, որ շատերն ակամայ կամքով հնազանդեցան նրան։ Որովհետև Մանեակին թագաւոր եղած կարծեցին այն յաջողութիւնների համար, որոնք նրան հանդիպում էին։ Ըստորում թագաւորի զօրքերը երկու երեք անգամ դուրս եկան, կռուեցան նրա հետ և յաղթուելով՝ մեծ անարգութեամբ դարձան թագաւորի մօտ։

Իսկ վերջին պատերազմն սկսելու ժամանակ,

բոլորն էլ մտքերում գրել էին, որ այդ յաղթութիւնից յետոյ նրան Հնագանդութիւն և իրանց թագաւոր անեն։ Բայց որովհետև նա չը մտածեց Աստուծով թագաւորել, այլ ամբարտաւանութեամբ, Աբիսողոմի նման, իւր ուժի վերայ յոյսը դրեց, վասն որոյ Աբիսողոմի պատիժն Աստուած տուեց նրան։ Պատերազմի մէջ գտան նրան ընկած, առանց մէկի հետ կռուելու։ Հզօր հրեշտակը նրա հոգին աւանդել էր։ Այս գործը ամենիմաստուն կերպով արաւ և անում է ամենքի Տէրն ու Ստեղծողը, որ երկրի բոլոր թագաւորներից ահաւոր լինելով, կարող է հանել իշխանների հոգիքը. որ հզօրը՝ իւր զօրութեան, մեծը՝ իւր մեծութեան, և կամ իմաստունը՝ իւր իմաստութեան վերայ չ պարծենայ, ինչպէս Սուրբ Գրքից սովորեցանք[1]. այլ ով որ պարծենում է, Աստուծով պէտք է պարծենայ, երկրի վերայ արդար գատաստան անէ ու արդարութիւն գործէ։ Արդարև այդպիսի մարդն է շատ պարծանքի և գովութեան արժանաւոր և նրա յիշատակը յաւիտեան կը կենայ ու կը մնայ. և նրա զօրութիւնը մեծ պատուով ու օրհնութեամբ կը բարձրանայ, ինչպէս Սաղմոսում գրուած է։ Այսպէս էր մեծ Դաւիթը, որը թէպէտ մարդարէից թագաւոր օծուաւ, օծութեան հետ ստացաւ մար-

1, Նրեմ. Թ. 23.

գարկութեան և զօրութեան ոգի, որ զազանները բռնելով, այծերի ուլերի նման պատառում էր։ Այդ զօրութեան վերայ վստահացած, նա կռուեցաւ անյաղթելի հսկայ Գողիաթի հետ և պարզաքարով նրա գլուխը ջարդելով, գետնի վերայ փռեց, Իսրայէլացիներից նախատինքը վերացնելով. բայց շատ անգամ Սաւուղից հալածւում էր, միայն ներում էր նրան և հնազանդւում նրա հրամանին։ Ոչ միայն չէր ուզում բռնութեամբ տիրել նրա թագաւորութեանը, այլ իրան հալածողն երկու անգամ ձեռքն ընկնելիս, խնայեց նրան, ինչպէս բարերարի. և նրան սպանելի ցանկացողին սաստելով, ասաց.—«Ձեռք մի տար Դաւիթ, որովհետև Աստծու օծեալն է»[1]։ Այդ պատճառով Աստուած սիրելով նրա սիրտը, ասում էր.—«Գտայ մի մարդ իմ սրտին համաձայն, որ պէտք է կատարէ իմ կամքը»[2]։ Իսկ Մանեսեին այսպէս չը մտածեց և չլսեց Աստծու հրամանը, այլ առանց Աստծու հրամանին, անձամբ ուզեց թագաւորել, մոռանալով Աստծու այն հրամանը, որ մարգարէի միջոցով նախատելով Իսրայէլի թագաւորներին, ասում էր.—«Վայ է նրանց, որոնք կամեցան առանց ինձ թագաւորել[3]» և սրա նման շատ խօսքեր։

1, Ա. Թագ. ԻԴ. 7. 2, Գործ. ԺԳ. 22.
3, Եսայ. Լ. 1.

Այժմ չէ թէ այս թագաւորը որևիցէ գովութեան արժանաւոր է, և սրա համար Աստուած խղճաց նրան, այլ աթոռն է պատուում և ամբարտաւանութեան աղբիւրը փակում: Ինչպէս Փրկիչը հրէաներին քարոզելով ասում էր.—«Մովսէսի աթոռի վերայ նստան գրիչներն ու Փարիսեցիները»[1]. Թէպէտ նրանք կեղծաւորներ էին, բայց աթոռի համար հրամայում է հնազանդ լինել: Ուստի և մեծ Պօղոսը, գաստիարակուած Յիսուսի այն երանելի խօսքովը, գրում է Հռովմայեցիներին.—«Ամեն մի մարդ, որ իշխանութեան ներքոյ է, հնազանդութեան մէջ պէտք է մնայ. որովհետև իշխանութիւնը ոչ մի տեղից չէ, եթէ ոչ Աստուց»[2]: Իշխանի մասին չի ասում, այլ իշխանութեան, այսինքն աթոռի. քանզի բոլոր իշխաններին Աստուած չէ ընտրում: Եւ յաւելացրեց.—«Ով որ հակառակում է իշխանութեանը, Աստուս հրամանին է հակառակում. և հակառակողները կը պատժուին»: Ինչպէս և սրան պատահեցաւ: Ոչ թէ սա պատժուեցաւ որևիցէ մի մարդուց, այլ Աստուս արդար դատաստանից, որ ամենին ուղղութեամբ և արդարութեամբ է դատում. որովհետև նա արքուն աչք է և մեր գաղտնիքները յայտնի են նրա աստուածային գիտութեանը: Ինչպէս երանելի Դա-

1, Մատթ. ԻԳ. 2. 2, Հռովմ. ԺԳ. 1—3.

ւիմբ սաղմոսելով խոստովանում է Աստծուն.— «Դու հոսկացար իմ գործելիքս և գործածս[1]»: Այսպէս էլ Առաքեալը գրում է Եփրայեցիներին.— «Նրա աչքերիցը անտես արարած չկայ[2]»: Մանուկներն էլ հնոցում գովելով ասում էին.— «Դու, որ նստում ես Քերուբէների վերայ և դէպի անդունդները նայում, յաւիտեան գովուած ու առաւել փառաւորուած ես[3]»: Որովհետև տեղի բարձրութիւնից նրա ճշմարիտ գիտութիւնը յայտնեցին, Սաղմոսի խօսքին համաձայն.— «Ցէրը նայեց երկնքից երկիր[4]»: Այսպէս էլ մեծ Եսայիան է ասում.— «Տիրոջ աչքերը երկինքն են և մարդը խեղճ ողորմելի: Ամբարտաւանների հպարտութիւնը պէտք է խոնարհի և միայն Աստուած պէտք է բարձրանայ ուղղութեամբ ու արդարութեամբ և Սուրբը փառաւորուի[5]»: Արանք կատարուեցան Կոստանդի թագաւորութեան սկզբում մեր թուականի չորսհարիւր ինսուն տարում:

Իսկ երեք տարուց յետոյ, Հայաստան աշխարհի կեանքի վերջը հասաւ. որովհետև մէկ տարում մեր աշխարհի թագաւոր Աշոտ ու Յովհաննէս երկու հարազատ եղբայրները մեռան: Այդ թուականում նրանց հաստատ ամուսը շարժուեցաւ և այլ ևս չհաստատուեցաւ. իշխանները

1, Սաղ ՃԼԸ. 5. 2, Եբր. Դ. 13. 3, Դանիէլ. Գ. 54. 4, Սաղմ. ԺԴ. 2, 5. Եսայի Բ. 11.

զրկուեցան իրանց հայրենի ժառանգութիւնից և պանդխտեցան օտար երկիր. Յոյները գաւառներն աւերեցին կողոպտելով: Եէն գիւղաքաղաքները գազանների բնակութիւն դարձան և նրանց դաշտերը՝ վայրենի կենդանիներին արօտատեղի: Նրանց գեղեցիկ, մեծամեծ ու բարձր տները ճիւաղների բնակարան եղան. ինչպէս ողբում են մարգարէները Իսրայէլացւոց երկրի ամայանալը.— «Այնտեղ ոզնին ձագեր հանեց և առանց երկիւղի պահպանեց իւր որդւոցը [4].»: Վանքերի հանդիսաւոր տեղերն աւազակների բոյն դարձան, և նրանցում գտնուած եկեղեցիները, որոնք երկրների նմանութիւն ունէին իրանց պայծառ շինութիւնով, գեղեցիկ զարդարանքներով և մրջոտատառ լապտերներով ու ջահերով, որոնց լուսի պայծառութիւնը օդի հետ տարածուած, այս տեղ այնտեղ ճօճելով, ծովի ալիքի էր նմանւում, որ հանդարտ եղանակներում քաղցր փչող մեղմ օդի ալիքներից շարժուելով իրար վերայ են բարձրանում. և անուշահոտ խնկերի բուրմունքները, որ նուիրողների հաւատին համաձայն ներքսրծելով, դարնան ժամանակի բալերի նմանութիւնն ունին, որոնք, լեռների բարձրութեան վերայ բուսած, արգելում են արեգակի ճառագայթները: Իսկ նրանց մէջ բնակուողների նմա-

4. Նայի Լ.Գ. 15.

նութիւնը որ խօսքը բաւական է պատմելու. նրանց երգերի քաղցր ձայնը, անվերջ սաղմոսերգութիւնը, Աստուածային երգերի ընթերցուածքը, Տէրունական ծոների հանդէսներն ու նահատակների պատիւը, մէկ սրտով մատաղների կամքը և դէպի Աստուածային ծառայութիւններն ունեցած ջանքը և ուրիշներն էլ։

Այսպէս էր մի ժամանակ յառաջ. այժմ ամենայն փառքից ու պարծանքից զրկուած ու կողոպտուած են նրանք։ Երգերի քաղցր ձայների փոխանակ այժմ բուերն ու տաղեղներն են երգողների գլխաւորները. սաղմոսերգութեան փոխանակ տատրակներն ու ագռաւներն են երգում, մարգարէի գուշակութեան համաձայն.— «Քաղցրաձայնութեամբ կոչում են ձագերին»։ Զահերը մարած, անուշահոտ խնկերի բուրմունքը պակասած, և այն խորհուրդի սուրբ սեղանը, որ մի ժամանակ առաջ նոր հարսի պէս գեղեցիկ զարդով զարդարուած էր, պատուի պատկը դէմքի վերայ կրելով, այժմ զարդերից զրկուած, փշով լցուած, ագռաւների բնակարան դարձած, խեղճ, ողորմելի ու շատ արտասուքի է արժանի։ Ամենը պատմելու համար շատ խօսք, մանաւանդ Աստծու շնորհի օգնականութիւնն է պէտք, որ կարողանանք դէպի պատմութեանս վերջը

յառաջ գնալ։ Վերջապէս պէտք է յառաջ տանինք պատմութիւնս։

Երբոր մեծ Կոստանդինը մահուան հիւանդութիւնով հիւանդացաւ ու մեռաւ էլ, հրամայեց մօտը գտնուողներին, թէ.— «Ելէք, որոնեցէք Հայերից մի մարդ, ո՛ւմ որ կը գտնէք, բերէք այստեղ»։ Խնդրակները գնալով, գտան Կիրակոս անունով մի քահանայի, որ Կաթուղիկոսարանի հիւրընկալն էր, և բերին թագաւորի մօտ։ Թագաւորը Հայոց աշխարհի վերաբերութեամբ իւր մօտ եղած թուղթը տուեց նրան ու ասաց.—«Տո՛ր այդ թուղթը, տո՛ւր Հայոց թագաւորին և ասա՛. թէ որովհետև բոլոր հողածիններին նման մենք էլ պէտք է այժմ մեռնինք, ա՛ռ քո գիրը և տո՛ւր քո թագաւորութիւնը քո որդուն և քո որդին էլ իրա որդուցը մինչև յաւիտեան»։ Եւ ինքը մահճումը պարկած, վախճանուեցաւ։ Իսկ Կիրակոսը թուղթը պահեց իւր մօտ մինչև Միխայէլի թագաւորութեան ժամանակ և վաճառելով նրան, ստացաւ շատ դրամ։ Աւա՜ղ, այն ցաւալի առուտուրին. որքա՜ն արիւնի պարտաւոր արաւ իւր անձը. որքա՜ն եկեղեցիներ այդ առուտուրի շնորհքով աւերուեցան. քանի՜ գաւառներ անմարդ, ամայի դարձան. քանի՜ մեծագիր գիւղաքաղաքներ բնակիչներից զրկուեցան։ Բայց ամբողջը իւր տեղում կը պատմենք. մենք, ինչ-

պէս սկսեցինք ներկայ պատմութեան կարգը, յառաջ տանինք։

Թագաւորների մահուան լուրը Հռոմոց ինքնակալը լսելով, և այն թուղթն էլ ստանալով, հոգ տարաւ Անի 70) քաղաքն ու այն աշխարհն առնելու իբրև իւր սեպհական ժառանգութիւն։ Իսկ Հայոց գլխաւոր իշխաններից Սարգիս անունով մէկը մտածեց թագաւորել Շիրակի 71) և նրան շրջապատող գաւառների վերայ. մանաւանդ որ, Յովհաննէս թագաւորի տանը գտնուած բոլոր գանձերն իւր մօտը հաւաքեց. ըստ որում նրա մահուան ժամանակ թագաւորին խնամք տանողն ինքն էր։ Բայց Վահրամ 72) Պահլաւունին. որ մի հզօր, անուանի և շատ քարեպաշտ մարդ էր, այնպէս որ, ոչ ոք չէր հաւասարուում նրան, իրա որդւոց, եղբօրորդւոց և ազգականների հետ, որոնք երեսունի չափ իշխաններ էին, չմիաբանեցան Սարգսի հետ. այլ հրաւիրելով իրանց մօտ Աշոտի որդի Գագիկին, թագաւորացրին իրանց վերայ և խելացութեամբ ու առանձին հոգացողութեամբ նրան քաղաքը բերին։

Բայց Սարգիսն երբ որ տեսաւ եղածները, թագաւորի գանձերն, առնելով, մտաւ ներքին բերդը (միջնաբերդ), անառիկ Անին։ Իսկ Գագիկն այր մարդու քաջասրտութեամբ միայնակ

գնաց նրա մօտ և քաղցր խօսքերով համոզեց. Սարգիսը բերդից դուրս գալով, գնաց Սուրմառի 73) կոչուած բերդաքաղաքը. միայն այն բերդերը, որոնք իւր իշխանութեան ներքև էին, չյանձնեց Գագիկին։ Սուրմառի գնալուց յետոյ, դարձեալ չար խորհուրդ է մտածում, այն է՝ իւր բոլոր ունեցածները յանձնել Հռոմներին և գընալ նրանց մօտ։ Իսկ Գագիկը սակաւ մարդկանցով գնաց մտաւ նրա բանակի այն վրանը, որտեղ Սարգիսն էր և կալանաւորելով նրան, դարձաւ իւր թագաւորական քաղաքը։ Ապատամբ Սարգսին հարկաւոր էր ապանել, բայց նա՝ Գագիկը Սաւուղի նման մտածեց. երկրորդ Ադագին 74) (այսինքն Սարգսին) խնայելով, իրա հետ կառքի վերայ նստացրեց. նրա համար էլ Սաւուղի պատիժն ստացաւ։ Թէպէտ նա կեանք ունէր, բայց մահից աւելի դառն։

Այս օրերում Հռոմոց զօրքերը հետամուտ լինելով, չորս անգամ իրար յետևից մտան Հայոց աշխարհը, մինչև որ, բոլոր երկիրը սրով, կրակով ու գերութեամբ անմարդաբնակ արին։ Այդ ազգերի գործողութիւնը երբ որ միտքս եմ բերում, խելքս թռչում է, միտքս ցնորւում և ստրապիելի զարհուրանքից ձեռներս դողալով, պատմութիւնս չեմ կարողանում շարունակելորովհետև դառն է և շատ ողբերի արժանի։

Այն աշխարհը, որ մի ժամանակ ծառաշատ պարտիզի նման կանաչով գեղեցկացած, տերևով լցուած, պտղաբեր, փառաւոր ու երջանիկ էր երևում ճանապարհորդներին, որովհետև իշխաններն ուրախ դէմքերով նստում էին իշխանական ամոռի վերայ, և զարնանային գեղեցկագոյն ծաղկանոցների նման, միայն ուրախացնող երգերի ու ճառերի հանդէսներ էին կատարում. փողերի, ծնծղաների և ուրիշ երգեցողական գործիքների ձայները լսողներին բաւականութիւն էին տալիս հոգեկան ուրախութեամբ: Այնտեղ նստում էին պատկառելի և պատուաւոր ալիքներով զարդարուած ծերերը հրապարակներում. այլ և մայրական գթով սիրտը մաշուած մայրերը մանուկներին գրկած, առատ ուրախութիւնների ազդեցութեան ներքև մոռանում էին տրզաբերքի ցաւի տխուր ժամանակը, աղաւնիների նման նոր փետրաւորուած ձագերի վերայ միշտ ուրախանալով: Ինչ պատմեմ առագաստում գըտնուած հարսների և փեսաների լիաբերբ ցանկութեան բորբոքումը և անժոյժ ընութեան հակամիտութիւնը:

Բայց պէտք է շարունակեմ խօսքերս Հայրապետական ամոռի և թագաւորական պատուի վերաբերութեամբ. որովհետև առաջինը՝ ամպի նման տուրբ Հոգու պարգևներովը լցուած, քա-

բոզութեան շնորհի ձեռքով կեանքի անձրև էր ցօղում Հայ ժողովրդին, արժանաւոր, արմուն և անձնուէր Հովիւներ տալով եկեղեցուն. իսկ թագաւորն առաւօտները, երբ դուրս էր գալիս քաղաքից, առագաստից ելած փեսայի կամ արեգակի նման, որ լեռների գլխիցը բարձրանալով, բոլորի ուշադրութիւնն իրան է քաշում, այսպէս և նա փայլուն Հանդերձովն ու մարգարտաշար թագովն ամէն մարդու ուշադրութիւնն էր գրաւում և զարմացնում. ոսկեգօծ զարդերով զարդարուած սպիտակ նժոյգը, որ առաջից գնում էր, արեգակի ճառագայթները վրան ընկնելով, տեսնողների աչքերն էր շլացնում։ Իսկ նրա առաջից գնացող զօրքերի խուռն բազմութիւնը ծովի ալիքների նման միմեանց մօտ էր Հաւաքւում։ Նաև անապատ տեղերը կրօնաւորների բազմութեամբ էր լցուած. մինչև անգամ գիւղերն ու ագարակները կրօնաւորների բնակութիւն էին անում, բարի նախանձով շարժուած։ Սրա նման գործեր աւելի ունէր մեր աշխարհը։ Այս գրեցի նրա համար, որ երբ հակառակը պատմելու լինիմ, բոլորի արտասուքը շարժեմ։

Այժմ, թագաւորը պատուից ընկած, գերու նման կալանաւոր է հեռու աշխարհում։ Այսպէս էլ Հայրապետական աթոռը զրկուած աթոռակալից, այրի մնացած նորահարս կնոջ նման տխուր

գէմքով է երևում։ Հեծելազօրքն անտէր, ո՛րը Պարսկաստան, ո՛րը Յունաստան և ո՛րը Վրաստան է շրջում։ Ագնուականների պատուաւոր գունդը հայրենիքից ելնելով, փառքից զրկուած, առիւծների ձագերի նման գտնուած տեղերումը մռընչում են գետնի վերայ պարկած։ Թագաւորական պալատներն աւերակ են և մէջը բնակող չկայ։ Մարդկանցով լիքը աշխարհի մէջ մարդ չէ մընացել։ Այգիները քաղելու համար եղած ուրախութեան ձայն չի լսւում և ոչ հնձանը կոխողների համար գովեստ։ Ոչ մանուկներն են խաղում ծնողների առաջ և ոչ ծերերն են նստում հրապարակներում աթոռով։ Ոչ հարսանիքի ձայն է լսւում և ոչ հարսների առագաստներն են զարդարում։ Այս բոլորը պակասեցաւ, կորաւ և այլ ևս չի կենդանանայ՝ Սաղմոսի խօսքին համաձայն։ Ամեն բան մեզ համար այժմ փոխուեցաւ տրրտմութեան, և ուրախութեան այն պատմուճանը՝ մաղեղէն սև հանգերձի։ Ո՞ր ականջը կարող է տանել մեր այս թշուառութեան պատմութիւնը։ Ո՞ր քարեղէն սիրտը մորմոքելով չի թուլանայ ու կտրուի։ Ժամանակ է մեր հառաչանքների հետ խառնել Երեմիայի ողբերից.— «Սիոնի 75) ճանապարհները, ասում է, սգում են, որովհետև ոչ ոք չէ մտնում»[1]։ Այս խօսքերն այն ժամանակ

1, Ողբ Երեմ. 4։

առուեցան Երուսաղեմի աւերման համար, բայց այժմ կատարուեցաւ։

Այժմ այս բոլորը հանդիպեցաւ հայերին այն առուտուրից, որը մի փոքր յառաջ յիշեցինք։ Այս առուտուրն աւելի անխիղճ է երևում ինձ՝ քան Յուդայինը. որովհետև այնտեղ թէպէտ վաճառուողը անարգանքի ենթարկուեցաւ, բայց վաճառը բոլոր աշխարհի փրկութեան գին եղաւ։ Ինչպէս Պետրոս Առաքեալը իւր ընդհանրական թղթերում գրում է.—«Չէ թէ ոսկեղէններով կամ արծաթեղէններով գնուած՝ ապաստուեցաք ձեր հայրերից սովորած սուտ պաշտամունքներից, այլ Աստծու Որդու արիւնով»[1]։ Իսկ այստեղ վաճառողը խիստ ամարգի էր ու անգութ, որ այսքան չարիքների պատճառ դարձաւ. որովհետև այն այգին, որ Աստուած տնկեց և մեր Լուսաւորիչը իւր տասն և հինգ տարուայ քրտնալի աշխատութեամբը մշակեց, նա (Կիրակոս քահանան) նրա ցանկը քանդեց ու աշտարակները կործանեց և անցորդների ոտքի տակը ձգեց. Դաւթի երգին համաձայն մինչև անգամ անտառի խոզն ապականեց և վայրենի կենդանն արածեց նրանում։ Այժմ այս բոլոր ազէտի ձայնը թող հասնի Աստծուն, և վաճառողի գատաստանը նա անէ։ Մենք շարունակենք մեր պատմութիւնը։

1, Պետր. Ա. 18։

Զորս հարիւր ինններեն և չորս թուականում Անին առնուեցաւ, ոչ պատերազմի կարգով, այլ խաբէական խօսքով։ Արովհետև Խաչի և Աւետարանի վերայ երդուելով, համոզեցին Գագիկին, թագաւորի հրամանով, որ ասում էր. միայն քեզ տեսնելուց յետոյ թագաւորութիւնդ քեզ կը տամ և քո քաղաքին ու աշխարհին յաւիտենական ժառանգ կը հաստատեմ քեզ։ Իմաստունը երդւում է և անմիտը հաւատում, ինչպէս իմաստունների խօսքերն են յայտնում. և դարձեալ. Սուտ ասողների խօսքերը լորի նման պարարտ են և յիմարները հաւատում են նրանց։ Մտքի պարզութեան, թէ ընութեան երկիւղածութեան համար, չը գիտեմ, Գագիկը հաւատում է երդումներին ու խաչին։ Քաղաքի բանալին տալիս է Պետրոս Հայրապետին, որ Լուսաւորչի աթոռն ունէր, և բոլոր աշխարհի հոգը յանձնում նրան խիստ ուխտով։ Գագիկը չլսեց Վահրամի և միւս իշխանների խորհուրդը, որոնք իրան թագաւորացրին, այլ նենգաւոր Սարգսինը լսելով, ելաւ, գնաց Յունաստան անգառնալի ուղևորութեամբ, կարթով բռնուած ձկի, կամ որոգայթում բռնուած հաւի նման։ Թագաւորն երբ տեսաւ Գագիկին, ոչ իւր երդումները և ոչ Խաչի միջնորդութիւնը մտաբերեց, այլ արգելեց նրան իւր մօտ և պահանջում էր, թէ.—«Ծո՛ւր

Անին և ես փոխարէնը քեզ կտամ Մելիտինէն 76) իրա շրջապատող գաւառներով»։ Բայց նա յանձն չէ առնում։ Այս խնդիրն երկարելու ժամանակ, քաջ Վասակի որդի Գրիգորը 77), որ իմաստուն ու աստուածային գրքերին լաւ տեղեակ մարդ էր, որ իրը թէ նրա նմանը չկայ, վեր կացաւ, գնաց թագաւորի մօտ։ Երբ որ տեսաւ Գագիկին թողնելու չեն, ներկայանալով թագաւորին, Բջնու 78) բանալին և իւր Հայրենի բոլոր կալուածները տալիս է նրան, և յարգուելով ստանում է Մագիստրոսութեան պատիւ և բնակութեան տեղ Միջագետքի սահմանում գիւղեր և քաղաքներ գրով ու կնքով ազգէ ազգ մինչև յաւիտեան։

Իսկ քաղաքացի իշխանները, որոնք Անիումն էին բնակւում, երբ տեսան թէ Գագիկն արգելուեցաւ Յունաստանում, երբեմն մտածեցին քաղաքը յանձնել Վենեցի Դաւթին 79), որ Գագիկի աներոջին էր, երբեմն էլ Ափխազների Բագրատ թագաւորին։ Երբ որ տեսաւ Պետրոս Կամիուղիկոսն այդ խորհուրդները, և իմացաւ, որ քաղաքը որ և իցէ մէկի ձեռքն է անցնելու, արևելեան կողմին տիրող իշխանին, որ Սամուստումն էր նստում, թուղթ ուղարկեց և ասաց.— «Յայտնիր թագաւորին, թէ փոխարէնը մեզ ինչ կը տայ, եթէ ես այս քաղաքն ու աշխարհիս

միւս բերդերն իրան տամ»։ Իսկ նա երբ իմացաւ, շուտով յայտնեց թագաւորին։ Թագաւորը լսելով այս, շատ դանձեր և իշխանութիւն տուեց Պետրոս Հայրապետին և տիրեց Անիին ու բոլոր աշխարհին։

Իսկ Գագիկն անմխիթար մնաց թագաւորի մօտ. թագաւորը միայն մարգասիրութեան համար տուեց նրան իւր կամեցած տեղը, որ շատ պակաս արժէք ունէր, համեմատելով Անիի և աշխարհի հետ։ Շնորհակալութիւնները և վարձատրութիւնը Կաթուղիկոսին տուին, որից քաղաքն առան։ Գագիկը, թագաւորի կամքով Սենեքերիմի Դաւիթ որդու աղջկանը իրան կին առաւ և նրա բաժնին տէր դարձաւ. որովհետև Դաւիթն անժառանգ էր վախճանուել։ Իսկ Ասիա անունով իշխանին, որ առաջ արևելեան կողմի տիրողն էր, թագաւորն ուղարկեց Անի քաղաքին տեղակալ։ Նա գալով, չափից աւելի պատիւ է տալիս Պետրոս Կաթուղիկոսին, աշխարհն առնում իւր ձեռքի տակ և ինքը գնում է շատ զօրքով Դուին 80) քաղաքի վերայ։ Բայց քաղաքի տէր Ապուսուարը, պատերազմելով նրա հետ, անթիւ կոտորած է անում քաղաքի դրանը, որտեղ Հայոց մեծ իշխան Վահրամը մեռաւ որդու հետ, որ մեծ սուգ բերեց Հայերին։ Ասիաի փոխանակ Հայոց իշխանութիւնն ստանում է Կա-

մենաս անունով մէկը, մեր թուականի չորս հարիւր իններորդ երեք տարում։ Նա առաջուայ պէս չէ յարգում Պետրոս Կաթուղիկոսին, այլ սկսում գրով բողոքել թագաւորին նրա մասին և խաբէութեամբ հանում է նրան քաղաքից, ասելով.— «Թագաւորը հրամայել է, որ դու բնակուես Կարին գաւառի Արծն գիւղաքաղաքում»։ Հայրապետն ելնելով գալիս է մեր մեծ, թագաւորական քաղաքը և շատ ուրախացնում նրանց, որոնք ցանկանում էին իրան տեսնել։

Աստուածայայտնութեան տօնի ժամանակը մօտեցել էր. տօնի օրը մեծ բազմութեամբ գնալով գէպի առատահոս այն ջուրը, որ Հիւսիսակողմի դաշտի լեռներից էր գալիս, փառաւորապէս կատարում է Քրիստոսի մկրտութեան խորհուրդը, ինչպէս որ և վայել էր։ Իսկ սուրբ Միւռոնը ջուրը թափելու ժամանակ, բազմութեան միջից մի տաճիկ մարդ յառաջ գալով, խնդրում է լողանալ ջրումը։ Հայրապետը պատճառը հարցնելով և իմանալով նրա քրիստոնեայ լինելու ցանկութիւնը, հրամայում է ջուրը մտնել։ Իսկ Միւռոնակիրը նրա մօտը կանգնելով, միւռոնշիշը առաւ ձեռքը և ձեռքով զարկելով ջարդեց շիշը, առատութեամբ թափելով միւռոնը թէ նոր մկրտուածի և թէ ջրի վերայ. շիշի ապակուց մի կտոր գիպչելով, սաստիկ վիրաւորեց Հայրապետի

ձեռը, շատ արիւն թափելով գետնի վերայ։ Այդ որ տեսան շատերը, պատահած դէպքի վերայ մեծ ուշադրութեամբ նայելով, ասում էին.—«Բարի բանի նշան չէ այդ». որ նոյն օրն էլ կատարուեցաւ։ Որովհետև, երբ ճաշի ժամանակ դեռ հաց էին ուտում, կալանաւորողներն եկան և Հայրապետին բռնելով, տարան գրին Խաղաղ Առիճ կոչուած բերդը։ Եւ յետոյ էլ Հայերից նրա քրոջ որդի Խաչիկին բերելով, Սև քար 81) կոչուած բերդը գրին։ Նրանք մնացին այն տեղ մինչև Զատիկ։ Ապա հանելով նրանց այն տեղից, տարան Կոստանդնուպոլիս թագաւորի մօտ. որովհետև Խաչիկի մեծ եղբայր Անանիային յառաջ տարաւ իւր հետ մի ներքինի, որ կէս թագաւորութեան պատիւ ունէր։

ԺԱ. ԳԼՈՒԽ։

Բանտում և Սիքոքի չէտան 82) ճերոյ եղած իրողութիւնը։

Այն տարիներում երկնքի՝ բարկութեան դուռը բացուեցաւ մեր աշխարհի վերայ. Թուրքաստանից եկան շատ զօրքեր, որոնց երիվարներն արծուի պէս արագավազ էին. նրանց ամբակները՝ քարերի նման ամուր. նրանց աղեղները լարուած և նետերը սրուած. նրանք սաստիկ պատրաս-

տուած էին. երբէք իրանց կոշիկների կապերը չը ցանկացան արձակել։ Հանելով Վասպուրական աշխարհը, քաղցած, անկուշտ գայլերի նման յարձակուեցան քրիստոնեաների վերայ և գալով մինչև Բասեն գաւառը և Վաղարշաւան 83) կոչուած մեծ կալուածքը, քանդելով աւերեցին քրտան և չորս գաւառ սրով, կրակով և գերութեամբ։ Ներկայ պատմութիւնն առաւել ցաւալի և շատ ողբերի ու արտասուքների արժանի է։ Նրանք առիւծների և նրանց ձագերի նման եկան և շատերի դիակները անխնայ կերպով գազանների և երկնքի թռչունների կերակուր արին ու կամենում էին նոյն գործողութեամբ գալ Կարնի քաղաքը։ Բայց Աստուած, որ ծովին սահման գրեց ասելով՝ — «Մինչև այդ տեղ պէտք է գաս, այլ ևս չը պէտք է յաւելանաս, այլ քո ալիքները կրկին պէտք է խորտակուին քո մէջ»1. թանձր խաւար ձգեց նրանց առաջը և արգելեց նրանց ճանապարհորդութիւնը։ Այս բանն արաւ իւր անքննելի խմաստութեամբ, որ նրանց ահովը մենք խրատուինք, և նրանք սովորին, թէ ոչ իրանց ուժովն արին, ինչ որ արին, այլ այն ձեռքն արաւ, որը իրանց ճանապարհ տուեց գնալու և որը հզօր կերպով էլ արգելեց իրանց։

Այժմ թափեց իւր բարկութիւնը մեր վերայ

1 Յոբ. ԼԸ. 11։

օտար ազգի ձեռքով, որովհետև մեզանչեցինք իրա դէմ. և զարձեալ զիջաւ չը բերել մեր վերայ փորձութիւն, ըստորում ողորմած Աստուած է. նրա համար էլ բոլորովին չի բարկանում և ոխը յաւիտեան չի պահում: Մի բանով մեզանից հարկաւորւում է ճշմարիտ դատաստան անել, որովհետև արդար դատաւոր է. միւսովն շտապում է գթալ, որովհետև գթած Հայր է. և միւսովն էլ ցաւում, ափսոսում է մեր կրած վշտերի վերայ, որովհետև ողորմած Աստուած է: Ինչպէս նոյն իսկ այստեղ ցոյց տուեց մեզ երկուսը. նախ՝ արժանահաս վրէժով իւր ձեռքը ծանրացրեց մեր վերայ. երկրորդ՝ ողորմեցաւ և շուտով հեռացրեց իւր բարկութիւնը, որ բոլորովին չոչընչացնէ մեզ: Բայց մենք վարակուեցանք Փարաւօնի և նրա ախտակիցներից ամենայիմարի խրատասրտութեամբ: Փարաւօնը երբեմն տանջուելով, խոստովանւում էր ասելով.—«Աստծու մատն է այս»[1], և պատժի բարկութիւնն անցնելիս, ամբարտաւանութեամբ յիմարացած՝ ասում.—«Չեմ ճանաչում Տիրոջը և Իսրայէլին էլ չեմ թող տալիլ»[2]: Երբ որ տուեց նրան վերջին պատիժը, անզգամն ստոյգ ասաց իւր ծայրայեղ բնութեամբը, թէ.—«Աստծու մատն է այս»: Որովհետև ձեռքը կատարեալ գործ է կատարում տասը մատով,

1, Ելից. Ը. 27. 2, Նոյն. Ե. 2.

այնպէս էլ այնտեղ առաջին պատժումն սկսեց, տասնումն աւարտեց պատիժների խրատը և յետոյ Իսրայէլացիներին բաց թողեց։

Այժմ մենք նոյն բարկութեան հասնելու, կրակի բորբոքելու և եղեռնաւոր փորձութիւնների շարժելու ժամանակ, սարսափով պաշարուած, սաստիկ գողալով զարհուրեցանք։ Բայց Աստուած ողորմեցաւ, և խաւարով փակեց նրանց ճանապարհը ու խափանեց անօրէնների արշաւանքը։ Այդ ողորմութիւնը մեզ ողորմութիւն չը համարեցինք և տմարդի գտնուանք շնորհակալութիւն տալու։ Մեզ արժան էր մեր եղբայրների ստացած պատժովը խելքի գալ և շտապիլ սովորել Մարգարէի փրկութեան խրատը.—«Պատգարեցէք, ասում է, ձեր չարութիւններից և սովորեցէք բարի գործել[1].» և սրան հետևող խօսքերը, և մեր ճշմարտութեամբ Աստծուն հաշտեցնել մեզ հետ, գժոխքի պէս բորբոքուած պատիժը մարելու ու բարկութեամբ բարձրացած ձեռքը խոնարհեցնելու՝ մեզ ներելու համար։ Մենք այս մտացանք, մինչև անգամ մեր միտքը չընկաւ հասկանալ այդ. այլ ով որ անօրէնութիւն էր գործելու, գործում էր. ով որ գրկանք էր անելու, գրկում էր. այնպէս որ վարագների նրման մեր անձերը սրի էինք մատնում, ամենայն

1, Եսայի Ա. 16—17.

յանցանք մեզ վերայ ցոյց տալով։ Մեզ այնպէս էր երևում, թէ նրանք մեղաւոր լինելով՝ այն պատիժը կրեցին, և մենք մեր արդարութեան համար ազատուեցանք. և չէինք մտաբերում Տէրունական այն պատուէրն ու խելքի բերող խրատը.—«Այն Գալիլիացիները, ասում է, որոնց արիւնը Պիղատոս խառնեց իրանց զոհի հետ, կարծում էք, թէ բոլոր մարդկանցից մեղաւոր էին, ոչ. այլ եթէ չապաշխարէք, ամենքդ էլ նոյնպէս կը կորչիք[1].»։

Իսկ մենք վարուում էինք Ամոս Մարգարէի խօսքին համաձայն, որով նախատում էր Իսրայէլացիներին, որոնք զառած գինի էին խմում, հոտաւէտ իւղերով փափկանում, փղոսկրէ գահերի վերայ հանգստանում և ուրիշ շատ բաներ էլ[2]. և նրանք չէին ցաւում Յովսէփի թշուառութեան վերայ։

Ասուած պահանջում է, որ երբ ոմանց անչանքների է մասնում, մեղաւորները վշտակից լինին նրանց. ինչպէս գրում է.—«Լալ լացողների հետ[3].»։ Այլ նրանք այս խօսքի հակառակն էին անում. մէկ արիւնից էին և Յովսէփի ցեղի գերութեան վերայ չէին ցաւում. սրա համար էլ Մարգարէն երգելով բողոքում է նրանց մասին։ Այսպէս էլ մեզ հանդիպեցաւ։

1, Ղուկ. ԺԳ. 2։ 2, Ամոս. Զ, 4—7։ 3, Հռոմ. ԺԲ 15։

Մեր թուականի չորս հարիւր ինսուն և եօթներորդ տարում, որ մեր գերութեան երկրորդ տարին էր, կրկին անգամ Պարսից աշխարհից շարժուեցան մնացորդ գազանաբարոյ զօրքերը, լի բարկութեամբ և սաստափելի ալեկոծութեամբ ու գալով թափուեցան Կարնի և Բասենի ընդարձակ դաշտերի վերայ։ Այն յարձակման սոսկատակները երկրի չորս անկիւնը բռնեցին։ Արևմտեան կողմը՝ մինչև Խաղտեաց գաւառը, Հիւսիսի կողմը՝ մինչև Սպեր 84) և մինչև Տայոց ու Աբշարունեաց 85) բերդերը, իսկ հարաւային կողմը՝ մինչև Տարօն 86), մինչև Հաշտենից 87) գաւառներն ու Խորձենի 88) անտառը հասան։ Նրանք ծով դառնալով, ծածկեցին բոլոր լեռներն ու մացառոտ տեղերը և բռնեցին բոլոր աշխարհը։ Ինձ թւում է, այս կատարուեցաւ այն անապակ գինուցը, որը Երեմիա մանուկը իւր մարգարէութեան մէջ ասկի բաժակով, բաժանելով, խմցրեց թագաւորներին, ազգերին, քաղաքներին և նրանց զօրքերին. և լեռոյ, Սիսակայ տանը 89)։ Ահա այս մարգարէութիւնը յայտնի կատարուեցաւ։ Որովհետև Հայոց այս աշխարհը խմեց այն գինուց և խիստ թմրութեամբ արբեցաւ. խմեց և չիմարացաւ. խմեց այնքան, մինչև բոլոր պատիժը իւր վերայ ընդունեց. և այժմ բոլոր ճանապարհների միացման կէտում ընկած է

մերկ ու խայտառակուած, և ճանապարհների անցաւորները նախատինքով կոխկռտում են նրան։ Ելնելով Հայրենի աշխարհից, հեռանալով ծանօթներից, ընտանիքներից, բարեկամներից և ազգականներից, բոլոր ազգերի մէջ գերի ու կալանաւոր են։

Ժամանակ է Մարգարէի այն խօսքն ասել, թէ.—«Թրթուրի թողածները մարախը կերաւ, մարախի թողածները՝ ջրեակը, ջրեկի թողածները՝ գրուիճը[1]»։ Այս բոլորն էլ մեզ են վերաբերում, որովհետև մեզ վերայ կատարուեցան մարգարէների գուշակած բոլոր խօսքերը։ Այժմ այն մարախն ու թրթուրն անցել են, իսկ ջրեակն ու գրուիճը սրանք են, որոնց համար պատմութիւնս սկսուած է։ Առաջին անգամ երբ եկան Պարսիկներն ու ուրիշ հեթանոս բարբարոս ազգեր, մարդասպանութեամբ ապականեցին շատ գաւառներ, և շատ կողոպուտ ու գերի առնելով գնացին իրանց աշխարհը, աւեստիք տալով իրանց ազգերին ու թագաւորներին. և հրաւիրելով նրանց՝ ասացին Մարգարէի նման, թէ.—«Անապատի գազաններ, եկէք, կերէք այս անտառի մէջ եղածը»[2]։ Միւս տարին ազնուաւոր և սուսերաւոր անհամար զօրքեր ժողովեցան ինչպէս արծիւները կերակուրի վերայ. և մեծ խրախուսանքով շտապ մատն

1, Մարգ. Յովել. Ա. 4։ 2, Եզ. ԺԹ. 9։

մեր աշխարհը, Սեպտեմբեր ամսում սուրբ Խաչի տօնի Չորեքշաբթի օրը։ Այստեղ ողբերի և վայնասունի պատմութիւն է մեզ համար. և պատմութեանս գրուածքը բոլորին հրաւիրում է կոծալու։ Եթէ Նինուէի 90) բնակիչները Մարգարէի սպառնալիքի վերայ, մանաւանդ որ, մի օտար, անծանօթ ու աննշան մարդ էր քաղաք մտնողը, այնքան սարսափեցան, որ թագաւորից սկսած մինչև ջրաղացպանը, հաւասարապէս կոծեցին, ամենքը մազեղէն հագած, սևազգեստ, կերակուրներից կտրուած, իրանց անձերին հարկադրում էին ողբով առատանալ. նաև լալկան կանանցն էլ հրաւիրում էին իրանց ձայնակից լինելու.—«Թերևս, ասում էին, Աստուած գթայ և նրա բարկութիւնը հեռանայ մեզանից[1]»։ Մեր կեանքը որքան առաւել ողբերի արժանի է, որ չէ թէ միայն սպառնալիք, այլ բարկութեան պատիժը հասած ու կատարուած, մենք խիստ տանջուած, աւերուած, աշխարհին տեսարան եղած. մեր յեռևից ազգէ ազգ տխուր պատմութիւն ենք թողած. այդպիսի խօսքեր Առաքեալը սրբերի մասին է խօսում։ Մեր քաղաքները աւերուած են, տները այրուած, ապարանքները հնոց դարձած և թագաւորաշէն սրահները՝ մոխիր։ Այր մարդիկ հրապարակներումն են կոտորուած, կանայք տներիցը գերի տարուած, կամենա-

1, Յոնան. Գ. 6—10.

կեր ոգանները քարի զարկուած և պատանեակների գեղեցիկ դէմքերը դունատուած։ Կոյսերը հրապարակներումն են խայտառակուած, երիտասարդները ծերերի առաջ սրով սպանուած. ծերերի պատուական ալիքները արիւնի մէջ՝ սիրտ չը դիմանալու ձև ստացած և նրանց դիակները թաւագլոր ընկած։ Թշնամիների սրերը բթացան, նրանց ձեռքերն ուժից ընկան, նրանց ոգեղների լարերը կտրուեցան և կապարճներից նետերն սպառուեցան. նրանց անձերը ձանձրացան, բայց սրտերում գութ չընկաւ։

Ո՞վ քո ողորմութեանն, Աստուած, որ այնքան ներեցիր անօրէններին, խրոխտալ քո եկեղեցու հօտի վերայ։ Միաքդ բեր քո այն ժողովուրդին, որին քո Միածին Որդու զարտեան սկզբից ստացար և Օծեալիդ արիւնովը փրկեցիր։ Ինչու բոլորովին երեսից ձգեցիր մեզ, Աստուած, բարկացար քո սրտմտութիւնով և մատնեցիր մեզ անօրէն, խիստ և ապստամբ մարդկանց ձեռքը։ Մի յիշիր մեր մեղքը և մի դարձնիր քո երեսը մեզանից մեր մեղքերի համար. այլ յիշիր քո հզօր ձեռքը և քո բարձր բազուկը, որով տիրում էիր մեզ և քո անունը կոչուած էր մեր վերայ։ Ահա այժմ դու բարկացար, և մենք մեղանչեցինք վասն որոյ գերութեամբ թափառական եղանք շատ ազգերի մէջ և բոլորս էլ զար-

շելինների նմանուեցանք։ Հողմերը ցրուեցին մեզ և մէկը չը կայ, որ օրհնէ քո անունը և մտածէ յոյսը դնել քեզ վերայ. որովհետև գարձրիր քո երեսը մեզանից, և մեզ մատնեցիր մեր մեղքերի համար։ Յաւիտեան մի բարկանար մեզ և ժամանակին մի յիշիր մեր մեղքերը։

Աւաղ այն օրուայ լուսանալուն. որովհետև այն լոյսը, որ առաջին օրն անմարմին կերպով Աստծու խօսքով ստեղծուեցաւ, և չորրորդ օրում մարմնի հետ միացած՝ լուսաւորների բաժանուեցաւ, ցերեկին և գիշերին իշխան գառնալով՝ անվերջ ճանապարհորդներ եղան, մինը մարդու արթնացնում, վեր է հանում գործելու, և միւսը գազաններին համարձակութիւն տալիս, այսօր կէսօրին մեզ համար խաւար փոխուեցաւ ու մթնեցաւ։ Հեթանոսների ազգը, որոնք վաղուց իրանց տեղերում մռնչում էին, Մարգարէի ասածի նման, և Աստծու ժողովուրդից իրանց կերակուր փնտռում, այդ օրուայ խաւարելու ժամանակ վեր կացան, տարածուեցան երկրի երեսը. շատ որս գտան և կերակրուելով կշտացան, ու շատ տարիներ էլ բաժին թողին իրանց որդւոցը։ Այժմ, թէպէտ ամենայն տեղ նրանց համար բաւական որս պատրաստուեցաւ, որովհետև փափկութեան գրախտի նման երկիրը լիառատ պտուղներով նրանց առաջն էր։ Բայց աւելի Մանանայի գաւառը և

այն լեռը, որ Սմբատաբերդ է կոչում։ Ըստ-
որում այնտեղ էին հաւաքուած անթիւ փախըս-
տականներ և անհամար անասուններ։ Անօրէն-
ները յարձակուեցան նրանց վերայ, աւերեցին
նրա բերդերը և ներս մտնելով՝ բոլորին սրակո-
տոր արին։

Այն տեղ էր տեսնելու ցաւալի և շատ ար-
տասուքի արժանի տեսարան. որովհետև ժողո-
վուրդից ոմանց, որոնց ձեռք էին բերում, սրով
էին սպանում, որոնք քարքարոտ տեղերն էին
մտնում և ամրանում, նետերով էին խոցոտում
ու սպանում և շատերին՝ քարայրերի վերայ
բարձրացած, մեծ քարերով էին մեռցնում, ու
նրանց դիակները փայտահատների կոյտերի նման,
գլորելով իրար վերայ դիզած՝ ձորն էին լցնում։
Վայ ու աւաղ այն օրուայ տխուր լուսին. որով-
հետև քաջերը զէնքով պատրաստուած և բար-
կութեամբ բորբոքուած էին, երկչոտները թալկա-
նում, կանանց նման թուլասիրտները խելքներն
էին թռցնում և երիտասարդները քաջի նման
կամենում էին յառաջ գնալ, բայց ոչ մի ելք,
հնար չէին կարողանում գտնել։ Ամենայն կող-
մից թշնամիները շրջապատել էին նրանց. այն-
տեղ չկար սիրելիների սէր և բարեկամների ափ-
սոսալ. հայրը մոռացաւ որդւոց գութը, և մայ-
րը՝ նորածին մանուկների սէրը։ Այնտեղ չէր

կարող միտքը բերել նոր հարար փեռայի սէրը, և ոչ այլը՝ իւր ամուսնու ցանկալի գեղեցկութիւնը. պաշտօնեանների երգերը պակասեցան, և սաղմոս ասողների շրթունքների ձայները լռեցին. առհասարակ ամենին պաշարեց երկիւղն ու սարսափը։ Խիստ տագնապից՝ լղի կանայք վիժում էին իրանց մանուկներին. և այսպէս բոլոր լեռը խիստ շրջապատել էին, որսորդների ուռկանով թակարթուածների նման, մինչև որ ամենն էլ թուլացան և ուժից ընկան։

Իսկ երեկոյին, թշնամիներն առնելով կողոպուտն ու գերին և սպանուածների ունեցածները, հեռացան այն տեղից։ Բայց նրանց գնալուց յետոյ՝ այնտեղ տեսնուում էր ցաւալի և առաջինից աւելի վշտալի և շատ ողբերի արժանի տեսարան։ Բազմատեսակ էին մահի օրհասները. ըստորում ընկածներից ոմանք դեռ շունչ ունէին և նրանց լեզուները ծարաւից պապակած, նուազ, հազիւ լսելի ձայնով ջուր էին հայցում և տուող չը կար. իսկ կէսը սաստիկ վիրաւորուած, ձայնը նուազած, ծանր շունչ էին քաշում. ուրիշները կոկորդից մորթուած՝ կիսամեռ լինելով, հազիւ խռխռում էին. իսկ ոմանք ծանրը վէրքերից խիստ կսկիծ ստացած՝ ոտներով և ձեռներով գետնին էին զարկում և ճանկռտում։ Բայց նրանց մօտ ուրիշ սոսկալի տեսարան էլ էր

տեսնում, որ քարերին ու միւս անշունչ արարածներին անգամ շարժում էր լալ ու հառաչել։ Որովհետև երբ անօրէնները գերիներին սարից իջացրին, տղաներին, ծնողների գրկից խլելով գետնի վերայ ձգեցին, այնպէս որ, նրանց շառաւիղներից բոլոր բանակի տեղը եռում էր։ Նրանցից ոմանց քարին զարկելով մեռցրին, կէս մասի կողերը պատռած, աղիքները գետին թափեցին. իսկ կենդանիների վայնասունը ո՞ր ականջները կարող էին լսել ու դիմանալ։ Որոնք կարող էին ոտով գնալ, այստեղ այնտեղ ընկնելով իրանց մայրերին էին որոնում. նրանց բարձրաձայն լալու ձայնի հետ լեռան արձագանքն էր միանում. իսկ միւսները, որոնք դեռ չէին կարողանում ոտների վերայ կանգնել, ծնկների վերայ սողալով՝ սաստիկ հառաչում էին. բայց վերջիններից աւելի փոքրահասակները ոտներով գետնին էին զարկում և սողալուց ձայները նուազած՝ չէին կարողանում շունչ արձակել։ Այսպիսի ցաւալի ձայներով և անվերջ աղաղակով՝ այն գառներին էին նմանւում, որոնք դեռ նոր ծնած՝ մայրերից հեռացած, զգացմունքի կրքից անհամբեր վերև ներքև են անում. նրանք անդադար ձայներով օդն էին խոցոտում և լսողների ականջները ձանձրացնում։

Քո գառն պատմութիւնները սրանք են, ո՞վ

Սմբատի ամուր լեառն. քեզ վերայ Աստուած չհաճեցաւ բնակիլ, այլ արիւնի ոռնակոխութեան և կոխատեան լեառը։ Արժան չէ քեզ լեառն անուանել, այլ երկրի բոլոր բնակիչների կոխատի ազմոտ խորխորատ. քեզ վերայ գազաններն են գիշերում, և գիշակեր ուրուրներն ու անգղները բնակւում. քեզ վերայ ազուէսները խմբուած՝ ուրախացել են կերակուրով կշտացած։ Ո՞վ լեառն, Հերմոնի նման քեզ վերայ իջած երկնքի ցողիցը չը պարարտացար, այլ կոտորուածների գիակների արիւնից ու ճարպից։ Ո՞վ լեառն, Սինայի 91) նման Մովսէսի՝ Աստծու հետ ունեցած խօսքերին միջնորդ չեղար, այլ շատ քահանաների լուեցրիր սազմոս ասելուց, որոնք աղօթքով միշտ խօսակցում էին Աստծու հետ։ Եղիան, մահից վախենալով, Եզաբելից փախած՝ Քորեբ սարը գնալով փրկուեցաւ. իսկ սրանք քեզ վերայ ապաստանելով՝ արի մատնուեցան ու ազուէսներին կերակուր դարձան։ Ո՞վ լեառն, քեզ նման եմ տեսնում Գեղբուայ 92) այն սարը, որի վերայ մեռան Իսրայէլացիների ազատները։ Վասն որոյ ինձ ժամանակ է Գաւթից՝ դէպի այն լեառն ասած խօսքերը քեզ համար կրկնել։ Սմբատի լեռները, թող չիջնի ձեզ վերայ անձրև ու ցող. որովհետև դուք խմեցիք ձեզ վերայ յոյսը դրած հաւատացեալ այր և կին մարդկանց արիւնը։ Բայց այն լեռան մասին գառն

տեղեկութիւն ունեցող այս պատմութիւնը թող դադարի. թէպէտ շատերից մի քիչ պատմեցի։ Այս տեղ դէպի մեզ պէտք է ուղղեմ պատմութեանս շարունակութիւնը, կարողութեանս չափ ընդարձակելով, որպէս զի ամենքի արտասուքը շարժեմ։ Երեմիայի նման կոչում եմ լալկան կանանցը, որ ինձ հետ ողբեր յօրինեն. որովհետև չէ թէ լեռներին, քայլայլերին և անապատ տեղերին եմ պատմութիւն անում, ուր փախչող վախկոտ մարդկանց մնացորդները գնացին, բնակեցան։

ԺԲ. ԳԼՈՒԽ։

Արծն 93) Հաղորդ անողոմ Հոտորածը։

Արծն քաղաքը փառաւոր և լեռան գլխին շինուած քաղաքի նման, բոլոր աշխարհին երևելի ու անուանի էր։ Ծով ու ցամաք աշխատում էր և սիրտը վառում կրել այս տեղ իւր կարողութիւնը. ինչպէս մեծ Եսայիան մարգարէանում էր Երուսաղէմի համար։ Սա նախնիքների ժամանակ, երբ բարիքների առատութեամբ լցուած էր, ամենայն ինչ ցանկացածի պէս էր. սա նման էր այն նորահարս կնոջը, որ իւր գեղեցկութեամբն ու զարդերով ցանկալի է լինում ամենին։ Սրա իշխանները մարդասէր էին, դատա-

ւորներն՝ արդարադատ ու անկաշառ։ Վաճառականներն՝ եկեղեցի շինող ու զարդարող, կրօնաւորներին ընդունող ու հանգստացնող և աղքատներին ողորմող ու խնամող։ Վաճառքի մէջ խաբէութիւն չը կար, և ոչ էլ խարդախութիւն տուրևառիկ փոփոխմունքների մէջ։ Համբաւանքների էր ենթարկուած վաշխերի ու տոկոսների օգուտները. անընդունելի ու անարգուած էր նրանց տուրքը ընծաների յիշատակների մէջ։ Ամենքն էլ բարեպաշտութիւն սիրող ու գործող էին. նրանց քահանաները արբակաց ու ազօթասէր և եկեղեցական ծառայութեան խոնարհ ու հնազանդ, այս պատճառով էլ սրա վաճառականները փառք, պատիւ ունեցող և թագաւորներն ազգերին օգնող էին։ Եւ մի պատուական ակի նման, լուսանման պայծառութեամբ բոլորովին գեղեցիկ, բոլորովին զարդարուած՝ փայլում էր մեր քաղաքը բոլոր քաղաքների մէջ։ Բայց երբ որ մտան Սեքարացիներն ու Պիհռոնացիները մեր եկեղեցիները, արդարութեան օրէնքն անիրաւութեան փոխուեցաւ. արծաթասիրութիւնն աւելի յարգուեցաւ՝ քան աստուածսիրութիւնը և մամոնայն՝ քան Քրիստոս։ Այն ժամանակ բոլոր կարգերի համեստութիւնը խանգարուած՝ անկարգութեան փոխուեցաւ։ Սրա իշխանները գողերին գողակից, վրէժ առնող և արծա-

թի ծառայող եղան. սրա դատաւորները կաշառակեր, կաշառի համար արդարութիւնը ծածկող. որբերի դատաստանը չէին անում և այրիների իրաւունքը չէին ընդունում։ Վաշխերի և տոկոսների համար օրէնքներ գրուեցան. ցորենի փոխատուութեան համար բազմապատկութիւն սահմանուեցաւ, որով երկիրը պղծւում է և արգելում իւր արգանդը, որ ժամանակին պտուղ տայ և մարդկանց կերակրէ։ Ընկերին խաբողը պարծենում էր, որ խելացի է. և յափշտակողն ասում էր.—«Ես զօրեղ եմ»։ Դրացի աղքատների տներն ու արտերի սահմանները հարուստներն էին յափշտակում։ Աստծու ծառայ Մովսէսի ձեռքով գրուած Աստուածապատուէր անէծքը չէր մտնում նրանց ականջները.—«Անիծուած է նա, ասում է, որ յափշտակում է ընկերի արտերը[1]»։ Կամ մեծ Եսային բողոքելով սաստում է այնպիսիներին.—«Վայ, ասում է, նրանց, որոնք տունը տանը և արտը արտին են միացնում, որ ընկերին հեռացնեն։ Մանաւանդ որ զօրութեանց Տէրը լսեց այդ ամենը[2]»։ Չէին մտաբերում նրանք Նաբովթի այգին և Եզաբելին, որ այն յափշտակեց, թէ ինչ ստացաւ, որ մինչև այսօր փողի նման հնչում է ամենքի ականջներում։ Վերացաւ քահանաներից էլ երկիւղն ու սուրբ ընտրութիւնը. համարձակւում են այն սեղանին մո-

1, Երկ. Օր. ԺԷ. 18։ 2, Ես. Ե. 8։

ռենալ, և անճառելի խորհուրդին ծառայել, որ հրեշտակներին զարհուրելի է, ուր մնաց մարդկան. և այն՝ արծաթի և ոչ Աստծու ձեռքով. մոռացուեցաւ Սաղմոսի այն երգը, որ ասում է.— «Թող անարգուին—չքանան նրանք, որոնք արծաթով են ընտրուել»[1]։

Կանանց մասին եղած բողոքի համար ինչ պէտք է ասեմ. բաւական են Նայի Մարգարէի սաածները. մեր խօսքերը հարկաւոր չեն։ Որովհետև նա Երուսաղէմի կանանցը զարդասէր լինելուն համար այսպէս է յանդիմանում.— «Ասորում, ասում է, Սիոնի դուստրները հպարտացան և գնացին ամբարտաւանութեամբ[2]»։ Նախ բոլոր չարիքների արմատին է սկսում, այսինքն՝ ամբարտաւանութիւնից, որովհետև նա է ամեն չարիքների մայրն ու սկիզբը, որ մարդկանցից գևեր է շինում և նրանց տանջանքներին մատնակից անում։ Ամենին էլ միտսակար է ամբարտաւանութեան ախտը, բայց ևս առաւել կանանց սեռին. վասն որոյ առաջ նրանց է դատապարտում և յետոյ կարգով յիշում է այն անարգ իրերը, այն է՝ գինտերը, մատանիները, ապարանջանները, բազուկների և կանանց միւս բազմատեսակ զարդերը, որոնք նրանց դէպի երկիր ենքաշում (ստորացնում)։ Ցեռ, ունկնդիր, և նրանց

1, Սաղ. Կէ. 32։ 2, Ես. Գ. 16։

գառաստանը.—«Ոսկի գարդերի փոխանակ, ասում է, գլխի կնասութիւն»։ Որովհետև գլուխը գարդերից մերկացրած, մազերն էին խուզում՝ ծաղրելով նրանց։—«Ոսկի կամարների փոխանակ՝ չուանէ գօտի. և պատուական՝ հանդերձների փոխանակ՝ մազէ հանդերձ»[1], որովհետև գերութեան համար պատրաստուեցան, գերոզներն էլ այդ տուին նրանց։

Այս բոլորը զուր տեղը չը պատմեցի ես, այլ որ ցոյց տամ, թէ մեր մեղքերն էլ նրանց նման են, նրանց նման էլ կամ աւելի ևս պատիժ պէտք է ստանանք մենք էլ։ Եթէ նրանք առանց օրինակի այն պատիժն ստացան, մենք որքա՞ն աւելի պատժի արժանի ենք լինելու, նրանց օրինակը և Քրիստոսի խրատն ունենալուց յետոյ, որ աղաղակում և ասում է.—«Թէ որ ձեր արդարութիւնը չաւելանայ գրիչների և Փարիսեցիների արդարութիւնից աւելի, չէք մտնիլ երկնքի արքայութիւնը»[2]։ Եւ մենք ոչ միայն արդարութեան, այլ և մեղքերի մէջ ենք աւելի գտնուում և որպիսի՛ թողութեան. ներողութիւն պէտք է ստանանք։

Այժմ տեսնենք արդար ու արժանի հատուցումները։ Պարսիկներն յարձակուեցան Երուսաղէմի վերայ, յարձակուեցան և մեր վերայ. աւերեցաւ Երուսաղէմը, աւերուեցան և մեր քաղաքները։ Հեթանոս-

1, Եսայ. Գ. 24. 2, Մատթ. Ե. 20։

ները մտան Երուսաղէմի սուրբ Տաճարը, կողոպտեցին նրա զարդարանքները և պղծեցին սուրբ Տաճարը. մտան և մեր եկեղեցիները. որ անմատնելի էին նրանց, պիղծ ոտներով պղծեցին նրանց Սրբութիւնները և կողոպտելով թալանեցին նրանց զարդերը: Կրակով այրուեցաւ Երուսաղէմի սուրբ Տաճարը. այրուեցան մեզանում մէկ տաճարի փոխանակ շատ եկեղեցիներ. Հրէաների քահանաներն առանց թուելու կոտորուեցան սրով, մեր քահանաների թիւը ո՞վ է ցոյց տալիս: Ժամանակ է ինձ Դաւթի խօսքերին հետևիլ և նրա ձայնով մեր ողբերը յօրինել:

—«Ինչո՞ւ, ո՛վ Տէր, անիրաւի անօրէնութիւն գործելու ժամանակ քո սուրբ տաճարներում և քեզ առողների պարծենալիս քո տօների օրում, հեռու մնացիր, և մեր նեղութեան ժամանակ աչքից ձգեցիր մեզ[1]»: Որովհետև ահա Հեթանոսները մտան քո ժառանգութիւնը և պղծեցին քո սուրբ Տաճարը. կրակով այրեցին քո սրբութիւնները և քո եկեղեցու փառքը գետին ձգին. քո ծառաների արիւնը թափեցին ջրի նման, չէ թէ այն ժամանակի պէս միայն Երուսաղէմի շուրջը, այլ բոլոր մեր երկիրը լցուեց սպանուածների արիւնով. իսկ նրանց թաղածների հաշիւը ո՞վ միտք կը բերէր:

1, Սաղմ. Ժ. 1.

Բայց մեր քաղաքի բազմատեսակ ու անսա-
նելի չարիքները ով կարող է գրել. որովհետև
ինչպէս Սոդոմացիների համար գրուած է, թէ.
—«Արեգակը ծագեց երկիր և Տէրը թափեց Սո-
դոմի վերայ կրակ ու ծծումբ և այրեց նրան[1]». այնպէս էլ այստեղ արեգակը երկիր ծագելու ժա-
մանակ, քաղցած շների նման՝ անօրէնները վրայ
թափուեցան և շրջապատեցին քաղաքը. մտան
արտ հնձողների նման և սրով կոտորեցին, այն-
պէս որ, կենդանի մարդ չը մնաց քաղաքումը։
Տները կամ եկեղեցիները փախչողներին՝ կրակով
անխղճաբար այրեցին, բարեգործութիւն համա-
բելով այդ գործողութիւնը, ինչպէս յառաջուց Փրկիչն ասել էր.— «Կը գայ ժամանակ, ով որ ձեզ սպանէ, Աստծուն ծառայութիւն անել կը համարէ[2]»։ Եւ պատճառն էլ ինքն է յայտնում.—«Եւ այն գործը ձեզ կանեն իմ անունի համար, որովհետև ինձ չը ճանաչեցին»։

Նաև օդն էլ ձեռնտու եղաւ այդ աւերող
օրուան. որովհետև քամին սաստիկ փչելով, բոր-
բոքում էր բոցը, մինչև ծուխը բարձրանալով
երկինքն էր հասնում. և կրակի բոցի կայծերը
ծածկում էին արեգակի ճառագայթները։ Այն-
տեղ էր տեսնել ցաւալի և շատ զարհուրելի տե-
սարան. քան որում բոլոր քաղաքն սպանուած-

1, Ծննդ. ԺԹ. 23—24։ 2, Յովհ. ԺԶ. 2։

ների դիակներով էր լցուած, թէ վաճառականները, թէ նրբափողոցները, թէ նրբափողոցներն ու լայն բակերը։ Իսկ այրուածներին թիւ չկար. որովհետև որի շողալուց փախչողները և տներում թաքչողները բոլորը կրակով այրուեցան։ Եկեղեցիներում քահանաներին բռնած՝ կրակով վառեցին. եկեղեցիներից դուրս գտնուածներից ոմանց սպանեցին և մեծ խոզերը գրկերը դրին մեզ նախատելու և խայտառակելու համար. բայց այն քահանաների թիւը, որոնք սրով ու կրակով մեռան, մի հարիւր յիսունից աւելի էր, և որոնք ժողովուրդի և եկեղեցու տէր էին. իսկ օտարների, ուրիշ երկիրներից այն տեղ եկածների թիւն անյայտ է։

Սրանք են քո պատմութիւնները, ով երջանիկ, երանելի, հարստութեամբ լիքը և աշխարհների մէջ նշանաւոր քաղաք։ Այժմ բարձրացրու քո աչքերը, և տես քո՝ գերի քշուած որդուցը, անխիղճ կերպով քարի զարկած քո տղաներին, կրակով այրուած քո երիտասարդներին, հրապարակներում սպանած մեծապատիւ ու պատկառելի ծերերին։ Զով երկրում բնակուած փափկակեաց կոյսերն ու կանայքը խայտառակուած և ոտքով գերի տարուած։ Մեր վերայ կատարուեցան Դաւթի ողբերի երգերը.—«Մատնեց, տուա՛մ է, գերութեան նրանց զօրութիւնները, և նրանց

գեղեցկութիւնը՝ թշնամիների ձեռքը»[1]. և հեռուեալը. բայց (այժմ) Քրիստոսն ուշացնում է արթնանալը և չէ թէ այն ժամանակուայ պէս։

Արծն քաղաքի համար այս տխուր պատմութիւնն թող այս տեղ գագարի. որովհետև բոլոր աղէտների անցքերը մենք չը կարողացանք գրել, բայց մեր թողածները ցանկացողը թող աւերակներիցը սովորի։ Այս ցաւալի պատմութիւնը լեռանն ու քաղաքինն է, որը մեր աչքովը տեսանք և աղէտների փորձանքներիցն անցանք, այն միայն գրեցինք. իսկ միւս գաւառների և քաղաքների աղէտների դիպուածները ում միտքը կը բաւէ։ Նրանք շատ խօսքերի և երկար ժամանակի հարկաւորութիւն ունին. մենք մեր կարողութեան չափ համառօտապէս գրեցինք։

ԺԳ. ԳԼՈՒԽ։

Այն մեծ պատերազմը, որ Բաբելոնա մեծ քաղաքում եղաւ, և որ յաչքառէցան Հռոմէրը։

Նայի մարգարէն, երբ Եգիպտոսի աւերուելու մասին մարգարէանում էր, այս խօսքերն էր ասում.— «Ցայտնու 94) իշխանները յիմարացան,

1, Սաղմ. Հէ. 61։

որոնք թագաւորի իմաստուն խորհրդականներն էին[1].»: Սա մեզ հանդիպեցաւ: Հռոմոց հեծելազօրքը, որոնց բանակի թիւը քիչ չէր, վաթսուն հազարի էր հասնում, և արևելեան կողմի աշխարհի պահապանն էին, նրանց գլխաւորներն էին Կամենասը, որ կրակ է թարգմանւում և որը Հայոց աշխարհի իշխանն էր. Բուլզարի որդի Ահարոնը, որ Վասպուրականի կողմի իշխանն էր և Հայ իշխան Գրիգորը, որ Մագիստրոսութեան պատիւ ունէր: Եւ որովհետև Սուրբ Գիրքն ասում է, թէ՝ բազմիշխանութիւնը տակնու

խնդրելու համար։ Եւ այս նրանց գործիցն է յայտնի, որ Լիպարիտին95) էին ազաչում օգնութեան գալու։ Նրանք Սաւուղի նման կախարդի մօտն էին գնում. կամ Հրէաների նման՝ ուղտերի վերայ բառնալով իրանց գանձերը, տանում էին մի ազգի, որից օգնականութեան ոչինչ յոյս չը կար։ Մտքերը չը բերին Դաւթի դէպքը Հսկայ Գողիաթի հետ, որ մեծ յանդգնութեամբ նախատում էր Իսրայէլին և միմիայն Դաւթի պարսաքարը բաւական եղաւ Գողիաթի գլուխը ջարդելու. կամ չմտաբերեցին Եզեկիային, որ միայն աղօթքով Ասորիների հարիւր ութսուն հազար զօրքը Հրեշտակի ձեռքով՝ անհրաժեշտ սրով գետնի վերայ կռնակներին փռեց։

Եաւ աղաչանքով և առատ գանձերով վարձատրուած՝ եկաւ Լիպարիտը և ոչինչ չը վերջացաւ նրանով. որովհետև նոյն իսկ իրանք իրանց չը համաձայնեցան։ Ուստի՝ պատերազմի ժամանակ, Բուլղարի որդի Ահարոնը փախչելով՝ վստահութիւն տուեց թշնամիներին, որոնք մեծ ազաղակով իրար քաջալերելով՝ Լիպարիտին իւր քաջ մարդկանցով շրջապատեցին. ոմանց սպանին, ոմանց ձիերի ջլերը սրով կտրելով՝ ձերբակալեցին։ Միւս զօրքերն այս տեսնելով՝ փախան. թշնամիները նրանց յետևից գնացին և անթիւ կոտորածներ արին. ոմանց սրով սպանին, շատե-

ին, ըստորում իրիկուայ մութը կոխեց, քարանձաւներից և բարձրութիւններից ձգեցին. և մնացածները, մերկ, կողոպտուած, ոտով ուր կարողացան գնալ, այնտեղ մնացին։ Իսկ թշնամիները՝ չափից դուրս աւար ու կողոպուտ ձեռք բերելով, ուրախացան. բայց մերոնք վայնասունով էին լցուած։ Այն օրից մինչև այժմ, գիշակեր շների, կամ արաբացի գայլերի նման՝ երբէք չը կշտացան քրիստոնեաների արիւնով, մինչև սպառեցին և մէջ տեղից վերցրին։ Բոլոր երկիրը հունձք հասած արտերի նմանուեցաւ, որ խուրձերը վերցնողները հնձողների յետևից են գնում և մնացած հասկերն ու խոզանն են միայն թողնում անասուններին արածելու համար։

Յաղթութեան պատերազմից յետոյ՝ Պարսիկներն առնելով կողոպուտն ու գերին, գնացին իրանց աշխարհը և անթիւ աւարով լցրին բոլոր երկիրը։ Իսկ Վրաց իշխանին 96) տարան տուին Խալիֆային, իբրև մի մեծ գանձ և բոլոր գերիներից հաճելի։ Շնորհակալութեամբ ընդունելով նրան, մեծ պարգևներով խաղաղութեամբ ճանապարհ ձգեց իւր երկիրը։ Այս մասին այստեղ այսքան։

ԺԴ. ԳԼՈՒԽ։

Թէ որչափ հաց Պետրոս Հայրապետը Կոստանդնուպոլսոմ էր որպէս քիրտարար։

Հռոմոց թագաւորը՝ տեսնելով Պետրոս Հայրապետին, մեծ պատուով ու յարգանքով ընդունեց և հրամայեց առատ ռոճիկ տալ նրան։ Բայց իւր մօտ պահեց նրան երեք տարի. որովհետև կասկածում էր ճանապարհ գնել դէպի Հայաստան, իբր թէ գնալով կ'ապստամբեցնէ Անիի բնակիչներին։ Իսկ Սենեքերիմի որդի (Աստոմը 97), առնելով նրան իւր երաշխաւորութեան տակ, բերեց իւր Սեբաստուպոլիս քաղաքը 98), նրան բնակութեան տեղ տուեց Սուրբ Նշանի տունը, որն ինքն էր շինել խիստ յարմար զարդարանքով և երևելի գեղեցկութեամբ. այստեղ ապրելով երկու տարի՝ վախճանուեցաւ։ Պետրոսի տեղը հաստատում են նրա քրոջ որդի Խաչիկին 99), որը վաղուց էր ընդունել Հայրապետութեան ձեռնադրութիւնը։ Թագաւորը, երբ այդ լսեց, պատգամաւորներ ուղարկեց և տարաւ նրան իւր մօտ՝ թէ այնտեղ, և թէ Հայաստանում եղած գանձերն էլ. որովհետև Պետրոսը գանձ շատ էր սիրում, սրա համար էլ շատերը

պախարակում էին նրան։ Բայց երեք տարուց յետոյ՝ Տէր Խաչիկն արձակուեցաւ թագաւորական քաղաքից և գալով երկրորդ Հայոց սահմանի Տարնաս 100), կոչուած գաւառը, այնտեղ բնակուեցաւ. ըստորում թագաւորը հրամայեց նրան նոյն տեղում բնակուել։

Իսկ նրա Կոստանդնուպոլսում յուշանալու պատճառն այս է, որ Հարկի տակ էին ուզում ձգել Հայրապետին. իսկ նա յանձն չէր առնում, թէ ինչ բան, որ մինչև իմ ժամանակը չէ եղած, ես չեմ կարող ընդունել։ Եւ յետոյ Հարցուփորձի ենթարկելով, սպառնալիք էլ էին տալիս, թէ այս տեղից չես կարող դուրս գալ, մինչև մեզանից հրամայուածը յանձն չառնիս։ Իսկ այն երանելի մարդը և Լուսաւորչի փոխանորդը բնաւ չը վախենալով նրանց խօսքերից, հաստատ մնաց իւր ասած նոյն խօսքերի վերայ։

Սրանից յետոյ Հռոմներից երկու մարդ՝ մէկն իշխան և միւսը վանական, նրան փորձելու կամ գըրգռելու համար, թէ ճշմարիտ մտքով՝ չը գիտեմ, յառաջ գալով պահանջեցին իրանց տալ եկեղեցու վերակացութիւնը՝ խոստանալով պահանջուած հարկը հաստատելու. նրանք երկուսն էլ դառն մահով սատակեցան։ Այս թագաւորը զղջալով՝ արձակեց Խաչիկ Հայրապետին առանց հարկի, տալով նրան գրով և թագաւորական կնքով Հայաս-

տանում ունեցած իրանց տեղերը և երկու վանք էլ Ցարնտայում։

ԺԵ. ԳԼՈՒԽ։

Թէ ինչպէս եկաւ էրզրում հոկտեմբեր Կարս 101) քաղաքը։

Կարս քաղաքը, վաղ ժամանակից սկսուած, ազգանների փորձ չէր առել. նրա համար բնակիչներն անհոգ ու անկասկած էին ապրում, ծովից ու ցամաքից ամբարած շատ կարողութեամբ հարստացած։ Քրիստոսի յայտնութեան մեծ տօնի այն գիշերը, երբ քահանաների դասը բազմախուռն ժողովուրդների հետ ուրախ ձայնով նոյն օրուայ պաշտօնն էր կատարում, յանկարծ վրայ հասան անօրէն Պարսիկների զօրքերը։ Որովհետև քաղաքը գիշերուայ պահապաններ չունէր, նրանք ներս մտնելով՝ սուրը քաշած, անողորմ կերպով կոտորեցին ամենին, որ շատ ողբերի արժանի է այս պատմութիւնը։ –

Քաղաքներին օրէնք է, որ Տէրունական տօներին այր, կին, ծեր, տղայ, գարնան ծաղկանոցների նման, իրանց կարողութեան չափով շատ վայելուչ կերպով զարդարուին։ Թշնամիները սրանց այսպէս էլ գտան և յանկարծակի լա-

ցով ու կոծով լցուեցաւ քաղաքը։ Քահանաներին իրանց պաշտամունքներից լռեցրին, ուազմուսացներին՝ սազմուսական երգերից. օրհնութեան երգը կարուեցաւ դպիրների և տղաների բերաններից։ Այնտեղ էր տեսնել ցաւալի տեսարան, որ քարերին ու անշունչ արարածներին անգամ շարժում էր լալ և ողբալ, ուր մնաց թէ զգայուններին և կենդանիներին. որովհետև մեծապատիւ ու պատուական վաճառականները դառն մահով սպանուած, երիտասարդներն ու քաջ կռուողները փողոցներում սրակոտոր եղած, ծերերի պատուական ալիքները արիւնաշաղախ՝ նրանց մօտ ընկած։ Այսպիսի գործողութեամբ քաղաքի բոլոր մարդիկը կոտորուեցան։ Ով որ կարողացաւ քաղաքի վերևը գտնուած բերդը հասնել, նա միայն ազատուեցաւ։ Եւ թշնամիներն ամբողջ օրը մնալով նոյն տեղում, որոնելով քանդեցին տները, և ապա կրակ տալով՝ այրեցին քաղաքը ու իրանք առնելով գերին և քաղաքի ունեցածը՝ գնացին իրանց աշխարհը։

ԺԶ. ԳԼՈՒԽ։

Սոլոնի ֆոլը։

Այս պատմութիւնից յետոյ, հետևեալ տարին մեր թուականի հինգ հարիւր երեքն էր,

նոյն ամիսը և ամսու նոյն թիւը, երբ մեր նշանաւոր աշխարհը գերի տարան, Արծն քաղաքն ու միւս քաղաքներն ու գիւղաքաղաքներն այրեցին։ Շարժուեց մահաբեր, արիւն խմող և մարդասպան գազանը՝ Սուլտանը անթիւ զօրքերով, փղերով, կառքերով, երիվարներով, կանանցով, որդիքներով և շատ պատրաստութեամբ։ Արճէշն ու Բերկրին թողնելով, եկաւ բնակուեցաւ Ապահունեաց գաւառի Մանազկերտ քաղաքի շուրջը, և բոլոր ընդարձակ դաշտավայրերը բռնեց։ Ասպատակներ ուղարկեց աշխարհի երեք կողմը, դէպի Հիւսիս՝ մինչև Ափխազների բերդը և մինչև Պարխար 102) սարն ու Կովկաս լեռան ստորոտը. դէպի արևմուտք՝ մինչև Ճանէթի անտառը, իսկ դէպի Հարաւ՝ մինչև Սիմ անուանուած սարը. արտի հասկերը հնձողների նման բոլոր աշխարհը բռնեցին։

Այն ժամանակի աղէտները, որոնք նրանք հասցրին այս աշխարհին, ո՞վ կարող է գրչով գրել, կամ ո՞ր միտքը կարող է թուել. որովհետև բոլոր աշխարհը լցուած էր դիակներով. շէն ու անշէն, ճանապարհներն ու անապատ տեղերը, քարայրերն ու ժայռերը, անտառախիտ ու քարքարուտ տեղերը և բնակութեան բոլոր վայրերը կրակ ձգելով՝ աւերեցին տներն ու եկեղեցիները, որոնց կրակի բոցը աւելի էր բարձրա-

նում, քան Բաբելոնինը. և այսպիսի վարմունքով աւերեցին մեր աշխարհը, ոչ թէ մի անգամ, այլ երեք անգամ իրար յետևից կրկնելով՝ մինչև բոլորովին վերջացան երկրի բնակիչներն ու լռեց անասունների ձայնը։

Այս գործը տեսնելով՝ երկիրը սուգ առաւ ու կործանուեցաւ. որովհետև քանդուեցան նրա բնակիչները, բոլոր երկրի երեսից վերացաւ ուրախութիւնը. ամենայն տեղ ողբ ու հառաչանք, ամենայն տեղ լաց ու կոծ։ Ոչ մի տեղ չէին լսւում քահանաների երգերն ու Աստծու փառաբանութեան ձայնը։ Ոչ մի տեղ չէին բացւում գրքերը՝ խրատելու և լսողներին մխիթարելու համար. որովհետև կարդացողները սրով մեռած՝ հրապարակներումն էին ընկած և լսողներն էլ այրուած ու մոխիր դարձած։ Ոչ մի տեղ չի լսւում հարսանիքի ձայն և նոր ծնուած մանուկների մասին աւետիք։ Ծերերն աթոռով չեն նստում ժողովուրդի մէջ, և մանուկները չեն խաղում նրանց առաջը. չեն խմբւում անասունները արօտներում և չեն թռչկոտում գառները դաշտերում։ Հնձողները չեն լցնում իրանց գիրկը խրձերով, և ճանապարհորդներից չի լսում գովութիւն. կալերը ցորենով և հնձաններն առատ գինեով չեն լցւում. այդ ժամանակ չեն լսւում ուրախութեան ձայներ և պահարան-

ները չեն ծանրանում սափորներով։ Այս բոլորը վերացաւ, կորաւ ու չի երևում։ Ո՞ր Երեմիան պէտք է ողբայ մեր աւերումը, ճանապարհներից և լեռներից երգելով ողբեր. ո՞ր Եսայիան չը պէտք է լսէ մխիթարողներին, որ ողբերով կշտանայ։

Վա՛յ է ինձ, որ պատմում եմ սրանք. Հիմենացի երիտասարդի[1], նման գուժաբեր եղայ, ոչ թէ մէկ գիւղի, կամ մէկ քաղաքի, այլ բոլոր աշխարհներին ազգէ ազգ մինչև աշխարհի վերջը. որովհետև չկայ մի ժամանակ կամ գործ, որ կարողանայ մեր պատմութիւնը հնացնել, բացի անապատի գարշելուց, որի մասին գիրքն զգուշացնում է։ Այժմ ինչ անեմ, ձեզի խնայելու համար չը պատմեմ այն անտանելի աղէտները, որոնք եկան քրիստոնեաների վերայ, որ չը շարժեմ ձեր ամենի արտասուքն ու սխուվախը, որ այս դժոխային պատմութեանը մասնակից էք. բայց գիտեմ, որ կը կամենաք լսել. ուստի ես էլ հեռացնելով անձիս ձանձրոյթը, գլխաւոր տեղերի վերաբերութեամբ մանրամասնաբար պէտք է գրեմ այն անտանելի աղէտները։

Խորձեան ու Հանձէթ 103) գաւառները ու նրանցում կատարուածները, երբ որ յիշում եմ, ձեռներս դողում և չեմ կարողանում պատմութիւնս շարունակել։ Անթիւ մարդիկ վերի գա-

1, Ա. Թագ. Դ. 12։

ւառներից այնտեղ էին ժողովուել տեղի ամբուխեան պատճառով. վրէժխնդիր գազանների նման՝ անգութ կատաղութեամբ բորբոքուած, անօրէնները շուտով յարձակուեցան նրանց վերայ՝ թռչունների պէս, և որոնելով քարայրերում, խիտ տնկուած մայր ծառի անտառում անյաղ կերպով կոտորեցին գտածներին. այնպէս որ, սպանուածների դիակների արիւնը, գարնան ժամանակի օդի տաքութիւնից հալուած ու ծորուած ձիւնի առուների նման հոսելով՝ երկրի հողը իւր յետևից փոսացնում էր գառիվայր տեղերում:

Բայց դու այն ժամանակում կատարուածը միքգդ բեր. այնտեղ պատահած կրօնաւորների և քահանաների դասը, ծերերի խումբը և երիտասարդների բազմութիւնը, որոնց նորաբոյս մօրուքները գեղեցիկ նկարի նման երեսներն էին զարդարում, և մազերի խոպոպաւոր գանգուրները, վարդի նման ճակատի վերայ փայլելով, երեսների կերպարանքը զուարթ գունով գեղեցկացնում, թէ ինչպէս թշնամու սրից՝ որպէս կարկտից՝ յանկարծակի կոտորուած, գետնի վերայ թաւալուելով՝ գլորում: Մէջ բեր և տղաների թիւը, որոնց, ծնողների գրկից խլելով, գետնի վերայ էին ձգում. նրանք սրտակուր լացով ծնողներին էին որոնում. իսկ ծնողներին ծեծե-

լով՝ շտապով բաժանում էին նրանցից։ Ո՞ր քարեղէն սիրտը, լսելով այս, արտասուքով չի լը-ցուել այն բազմատեսակ աղէտների ծանրութեան ներքև։ Կոյսերը խայտառակուած, նոր հարսերն ամուսիններից բաժանուած և գերի տարուած. մի վայրկենի մէջ այն երկիրը, որ բազմամարդ քաղաքի նման առատութեամբ լցուած էր, ամայի ու անբնակ դարձաւ, երկու մաս բաժանուած՝ կամ սրով կոտորուած կամ գերի։ Զարմանք քո այն ժամանակի ներողութեանը, ով Քրիստոս. վայ մեր աղէտներին. որքան դառն մահի մատնուեցանք։

Իսկ Դերջան 104) և Եկեղեաց գաւառներումն ու նրանց սահմանների մէջ եղած կոտորումը ոչ ոք չէ կարող գրել. բայց գու պատմածներովս չափիր այն։ Իսկ Ցայոց երկիրը մտնող թշնամիները, բոլոր աշխարհը բռնած՝ հասան մինչև Ճորոխ 105) կոչուած մեծ գետը և նրա ընթացքովը գնացին Խաղտեաց աշխարհը, և նոյն գաւառը կողոպտելով ու գերելով՝ յետ դարձան և եկան մինչև Բաբերդ 106) կոչուած բերդաքաղաքը։ Զօրքերիցը մի գունդ պատահմամբ այնտեղ հանդիպեցաւ Հոռոմներին, որոնք Փրանկ են կոչւում և կռուի բռնուեցան։ Սատծու ողորմութեամբ Հոռոմոց զօրքերը յաղթեցին թշնամիներին և զօրավարին շատերի հետ ըս-

պանին և միւսներին փախցնելով բոլոր կոզապուան ու գերին ազատեցին· բայց փախչողների յետևից երկար գնալ չը վատահացան, որովհետև վախեցան, թէ գուցէ բազմաթիւ զօրքերի հանդիպին: Իսկ այն գերիները, որոնք ազատուեցան, Աստծուն գոհութիւն տալով գնացին իրանց տները: Բայց Հայերի վերայ գնացողները, որոնց որ գտան, սպանեցին և գերի տարան, ու շատ աւար առնելով կրկին յետ դարձան ու եկան Վանանդի սահմանները: Աբասի որդի Դագիկի քաջագն իշխանները կռուելով նրանց հետ, նոյն տեղում մեծ կոտորած արին: Անօրէնների զօրքերը, նրանց վրայ հասնելով, շրջապատեցին. և որովհետև պատերազմի երկարելու պատճառով ու այն սարսափելի կոտորածից Հայոց զօրքերն ու իրանց ձիերն ուժից ընկել էին, ուստի՝ չը կարողանալով թշնամիների շղթայն պատռել և գնալ, թշնամիները՝ սուր առնելով, կոտորեցին ազատներից երեսուն մարդ:

Իսկ ազատներից Թամթուլ 107) անունով մէկին, որ քաջ ու պատերազմասէր մարդ էր, բռնելով տարան Սուլտանի մօտ: Որովհետև Պարսից Աբասերան ամիրայի որդուն Թամթուլը սատիկ վիրաւորել էր, ուստի՝ Սուլտանը, երբ նրան տեսաւ, ասաց.—«Եթէ դա ապրի, կազատեմ քեզ. ապա թէ մեռնի, կը հրամայեմ, որ քեզ

գրան մատաղ անեն»։ Նա քիչ օրից յետոյ մեռաւ։ Իսկ Թամիւլը պատասխանեց.—«Թէ իմ զարկածն է, չի ապրիլ. թէ ուրիշի է, այն ես չը գիտեմ»։ Սուլտանը, երբ լսեց թէ մեռաւ, հրամայեց նրան սպանել և նրա աջ բազուկը կտրելով, ուղարկեց Արտուրանին մխիթարելու համար, թէ քաջ մարդու ձեռքով է մեռել քո որդին։

Այժմ ինչ հարկաւոր է ինձ քրիստոնեաների անկանգնելի կրծանումը միրատմիջէ գրի առնել, որ ատատիկ քամուց ահագին ծփանքներով ալեկոծուած, փրփրագէզ կուտակներով ամեն կողմից գալիս է տակնուվրայ լինելու, այնպէս էլ մեզ հանդիպեցաւ. մեր բոլոր աշխարհը յանկարծակի շփոթումեամբ լցուեցաւ և ոչ մի ապաւէնի տեղ չը կար. որովհետև անտանելի ազէտների պատճառով ապրելու յոյսը վերացաւ բոլոր մարդկանցից։ Այս Փրկիչն էլ շատ յառաջ գուշակեց, եղեռնաւոր ազէտները ծովի ալեկոծումիւններին նմանեցնելով, որոնց մէջ մարդկանցից շատերը երկիւղից թափկացած՝ չէին կարողանում իրանց ուշքը վրայ պահել։

Բայց դու, թողնելով այս, եկ, զարմացիր Սուլտանի անմտութեան ու Աստծու բազմապատիկ իմաստութեան վերայ. նրա անմտութեան վրայ, որ ինքն իրան ամենակալ էր հռչակում և Աստծուն ամենակից. և Աստծու իմաստու-

թեան վրայ, որ մի տնով խաղ արաւ նրա հետ և անարգանքով լիքը դարձրեց իւր աշխարհը։ Այժմ լսիր ասածներիս։ Առաջին անգամ երբ Սուլտանն եկաւ և անթիւ զօրքով շրջապատեց Մանազկերտ քաղաքը, քաղաքացիները թէ մարդկանց և թէ անասունների կողմից անպատրաստ էին, եթէ տասն օր պաշարած լինէր, կառնէր քաղաքը. բայց Աստուած, որ բոլորովին չէ բարկանում և յաւիտեան ոխ չէ պահում, և ոչ էլ մեր մեղքերի չափովն անում, նրա միտքը սխալ խորհուրդ է ձգում։ Երեք օրից յետոյ բոլոր բանակովը վեր կենալով, գնում հասնում է Ծուարածատափ 108) և այն տեղից գնում Բասենի ընդարձակ դաշտը, Աէնիկ 109) կոչուած անառիկ բերդի մօտ, ուր տեսաւ բազմաթիւ մարդ ու անասուն և ոչինչ հոգ չարաւ. որովհետև միայն նայելով հասկացաւ, որ անառիկ է։ Նրա մօտից անցնելով գալիս է Բասենի գլուխը, այն գիւղի մօտ, որ կոչւում է Դու 110)։ Եւ այն տեղից անգիտութեամբ քիչ մարդկանցով ելնելով այն բարձրութեան վերայ, որ նայում է դէպի Կարին, տեսաւ, որ քաղաքը զինուորուած է բոլոր պատրաստութեամբ. երկար ժամեր նայելով կրկին յետ դարձաւ։ Իսկ Մանազկերտի բնակիչները, առանց կասկածելու քաղաքից դուրս ելնելով, մարդկանց և անասունների համար

առատ պաշար պատրաստեցին. որովհետև հրնձերի ժամանակն էլ էր։ Եւ երբ Սուլտանը սրան նրան հեռանալուց յետոյ կրկին յետ դարձաւ, նրանք ապահովուած էին. ապա նա սաստիկ բարկութեամբ լցուած՝ գալիս պատերազմում է քաղաքի հետ։ Իսկ քաղաքի կառավարիչ իշխանը, որ բարեպաշտ մարդ էր, օգնականութեան համար Ամենակալ Աստծուն էր աղաչում, պասով ու աղօթքով կրթելով իրան, և նրանով զինուորուած՝ հաւատով սաստիկ արիանում էր և դէպի Աստուած սաղմոսելով՝ ասում.—«Չեմ վախենալ ես չարիցը, որովհետև, Տէր Աստուած, ինձ հետ ես[1]»։ և միւսը, թէ.—«Ես չեմ վախենալ նրանց բիւրաւոր զօրքերից, որոնք իմ շուրջն են[2]»։ և հետևեալը։ Քաղաքի բնակիչներին ու զօրքերին խրախուսելով՝ ասում է.—« Քաջալերուեցէք, իմ ընկերներ և եղբայրներ. քաջալերուեցէք ու մի վախենաք. այս մի գիւրին գործ է Աստծու համար։ Նրանք գալիս են մեր վերայ կառքերով ու երիվարներով. մենք մեր Տիրոջ անունը յիշենք ու Աստուծով պարծենանք յաւիտեան և նրա անունը հաւատանք, որ կը տայ իւր ժողովուրդին զօրութիւն ու հաստատութիւն, և նա է օրհնուած յաւիտեան»։

Քահանաներին յորդորում էր աղօթել և սաղ-

1, Սաղմ. ԻԲ. 4. 2, Նոյն. Գ. 7.

մոս ասել, որոնք անդրելի ձայնով գիշեր ու ցերեկ Աստծուն էին աղաչում, խաչով և բարձրաձայն գանգակահարութեամբ. նրան էին պաղատում պարիսպների վերայ՝ վտանգի մէջ գտնուածներին օգնելու համար: Բռնաւորի ականջները ձանձրացած նրանց ձայներից, հարցնում էր.—«Այն ինչ անվերջ աղաղակ է»: Գիտեցողները պատասխանեցին, թէ Աստծուն են աղաչում:

Մի ամիս ժամանակ քաղաքը պաշարեց և իւրաքանչիւր օրը երկու անգամ, մինը լուսանալու ժամանակ, միւսը՝ երեկոյին, կռւում էր քաղաքի հետ: Բայց դու տես Աստծու իմաստութիւնը, թէ ինչպէս գիտէ թշնամիներից էլ օգուտ յառաջ բերել: Երբ քաղաքն այդ տարակուսութեան ու վտանգի մէջն էր, նա մի բարի խորհուրդ է ձգում Սուլտանի շատ մտերիմ իշխաններից մէկի սիրտը, որ Սուլտանի մտածածները յայտնում էր քաղաքին, կամ խօսքով կամ գրով: Շատ անգամ թղթի վերայ գրելով նետի սլաքին էր կապում և պատերազմի ձևով պարսպին մօտենալով, նետը քաղաքն էր ձգում, և նրանով պատերազմի բոլոր նախագիծը յայտնում քաղաքացիներին, թէ վաղը այսպիսի, կամ այնպիսի ձևով է լինելու կռիւը. կամ թէ այս ինչ տեղում գիշերը կամենում են պարսպի

տակը փորել և ներս մտնել. բայց դուք ամուր կացէք և այն տեղերի վրայ հսկեցէք։

Այս գործն Աստուած է կատարում, որ գիտէ հեռուից հիմ ձգել մեծ գործերի։ Նա, որ Բաղաամին Բաղակի մօտ մարգարէ արաւ՝ ժողովուրդին կառավարելու համար,[1] և անխօս անասունին մարդու լեզուով խօսացնել տուեց[2]. Եղիային Փիրիաթի ձորում երեք տարի սովի ժամանակ ագռաւներով կերակրեց[3]. ինչ զարմանալի է, որ այս տեղ էլ թշնամիների ձեռքով այն քաղաքի փրկութիւնը կարգադրեց։

Այսպէս լինելուց յետոյ՝ ո՛ր կողմում նրանք պատերազմ սկսեցին, թէ՛ ցերեկ և թէ՛ գիշեր, քաղաքացիները զինուորուած՝ պատրաստ այնտեղ գտնուեցան։ Սրանից յետոյ թշնամիները մեքենաներ կանգնեցնելով՝ նրանցով էին պատերազմում։ Իսկ մերոնցից մի ծեր քահանայ, որ լաւ տեղեակ էր այն արուեստին, իւր համար մի Փելիկուան (պատերազմական մի գործիք, որ ունի մեծ պարսատիկ) շինեց. և երբ նրանք քար դնելով մեքենայի պարսատիկում, ձգում էին դէպի քաղաքը, քահանան իւր քարն ուղիղ դէպի նրանց քարն էր ձգում. որ գիպչելով անօրէնների ձգած քարին, իրանց վրայ էր ձգում։ Անօրէններն եօթն անգամ այս անելով, ոչինչ չը կարացին

1, Թուոց ԻԲ. 2, Նոյնն ԻԳ. և ԻԹ. 3, Գ. Թագ. ԺԷ. 4.

կատարել. որովհետև քահանայի ձգած քարն աւելի գօրեղ էր նրանց քարից։

Յետոյ պատերազմական ուրիշ գործիք պատրաստեցին, որը իրանք Բարան էին անուանում, որ շատ մեծ էր. այնպէս որ, ասում էին, թէ չորս հարիւր ծառայողներ կային նրան, պարանները քաշելու համար. և վաթսուն լիտր ծանրութեամբ քար գնելով նրա պարսատիկի մէջ, քաղաքն էին ձգում. թշնամիները նրա առաջը պարիսպ քաշեցին բամբակի բեռներով և ուրիշ նիւթերով, որ չը լինի թէ քահանայի ձգած քարը նրան հասնի։ Եւ երբ այս այսպէս պատրաստեցին, մի քար ձգեցին, որ սաստիկ գիպչելով պարսպին, փլցրեց և անցք բացեց. քաղաքի բնակիչներն այդ տեսնելով, սաստիկ վախեցան և մեծ ոգով գէպի Աստուած էին աղաղակում, իրանց օգնութեան գալու համար։ Իսկ անօրէնները շատ ուրախացան։ Բայց երկրորդ օրը լուսանալիս, Արտիմեզ անունով զօրավարը, իւր զօրքն առնելով, եկաւ և կուում էր մերոնց հետ, որովհետև քաջ մարդ էր. գալով պարսպի անցք բացուած տեղը, կամենում էր ուժով ներս մտնել և յանկարծ ինքնիրան գնալով ընկաւ։ Իսկ պարսպի վերայ լինողները, երկաթէ ճանգ ձգելով բռնեցին նրան և քաշելով ձգեցին պարսպի ներսը նրա զօրքերը տեսնելով արամութեամբ լցուած՝

գարձան բանակը, իսկ քաղաքի համար մեծ ուրախութիւն էր։

Այն ժամանակ Հռոմոց զօրքերից մէկ սրատա մարդ նաւթով ու ծծումբով կրակ պատրաստելով ապակեղէն մի ամանում, քաջասիրտ արիութեամբ նստելով նժոյգ ձիու վերայ, միայն թիկունքը վահանով ամրացրած՝ քաղաքի դռնից ելնելով՝ մտնում է պլպզեաց բանակը իրան թղթաբեր ձայնելով. Բաբանի մօտից անցնելիս յանկարծակի թափեց շիշը Բաբանի վերայ. իսկոյն կրակը բորբոքուելով՝ ծիրանի բոցը դուրս ելաւ և ինքն շտապով դարձաւ քաղաքը։ Անօրէններն այդ տեսնելով՝ զարմացած՝ հեծան ձիերը և ընկան յետևից, բայց չը կարողացան հասնել։ Նա անվնաս մտաւ քաղաքը, Աստծու օգնականութեամբ ոչ մի վէրք էլ չստացած։ Իսկ Սուլտանը, եղածը տեսնելով, խիստ բարկութեամբ հրամայեց պահապաններին սրով կոտորել։

Տեսնում ես Աստծու մարդասիրական խնամքը, թէ ինչպէս մօտ է իւր երկիւղածներին նրա փրկութիւնը։ Տեսնում ես, ինչպէս գիտէ փոքր քանով մեծամեծներին յաղթել. ինչպէս Մովսէսի ժամանակ Բասանի թագաւոր Հսկայ Ովգին, որի բարձրութիւնը ինն կանգուն էր, Հսկայ մարդու կանգունով, կործանեց[1]. կամ մանուկ Դաւթի

1, Թուոց ԻԱ. 33. Բ. Գ. Դ. 2. † ԻԹ. 7. † ԼԱ. 4։

ձեռքով Գողիաթին[1], կամ այլազգների հսկայազն Սիսարային 111). Քաբերի կին Յայէլի ձեռքով[2], կամ Հոզեփեռնէսին, մի այլ կնոջ ձեռքով[3]։ Այս ասացի, որ չը յուսահատուինք, երբ որ անտանելի փորձութիւնների մէջ ընկնինք։ Որովհետև Աստուած սովոր է թողնել առ ժամանակ այնպիսի վտանգաւոր նեղութիւնների մէջ, որ հաւատարիմներն արժանի լինին փառքերի պակին և անօրէններն ստանան իրանց չարութիւնների հատուցումը արդարագատ դատաստանից։ Այդ կատարուած ենք տեսնում հնոցում մանուկների վերայ. որովհետև Աստուած թոյլ տուեց, մինչև որ թագաւորը իւր խիստ բարկութեան բոլոր զայրութիւնը յայտնեց, հնոցը պատրաստուեցաւ, որի բոցը քառասուն և ինն կանգուն էր բարձրանում. և նա իւր խիստ ամբարտաւանութեամբ ասում էր, թէ.—«Այդ որ Աստուածն է, որ պէտք է փրկէ ձեզ իմ ձեռքից[4]»։ Տես նրա մօտ և մանուկների հաստատ հաւատը, թէ ինչպիսի զգանի հետ ասենում կանգնած, բբռնաւորի սատիկ արհամարհելով աւելի համարձակ պատասխան էին տալիս.—«Ոչինչ պէտք չէ մեզ, ասում են, այդ խօսքերի համար քեզ պատասխանել[5]։ Եւ յետոյ ինչ է լինում։ Երբ որ թա-

1, Ա. Թագ. ԺԷ. 49։ 3, Յուդիթ. ԺԳ. 10։
2, Դատաւորաց Դ. 21։ 4, Դան. Գ. 15։ 5, Նոյնն 16։

գաւօրի սպառնալիքները վերջացան, և նրանք կապանքներով ձգուեցան հնոցը, այն ժամանակ Աստուած արագապէս հասաւ օգնութեան, որ չի ամաչացնում ճշմարիտ հաւատով իրան աղաչողներին: Տե՛ս այստեղ Աստծու իմաստութեան մեծութիւնը, որին ոչ մէկը չէ կարող հասնել. որովհետև կրակը Քաղդէացիներին 112) երկուս բաժանեց, որին գտնում վառում էր, իսկ մանուկներին հրեշտակն էր զովացնում, որ ամենևին կրակը չէր մօտենում նրանց, չէր տրամացնում և նեղացնում. և այդ՝ այն բարբարոսին զգաստացրեց, որ Աստծու այն անպատմելի սքանչելիքներին հաւատալով ասաց.—«Գո՛ւրս եկէք, Աստծո՛ ծառաներ, որ ես էլ ձեզ հետ օրհնեմ նրան, որ յաւիտեան օրհնուած է 1, նոյնպէս և այստեղ աննշան մի մարդու ձեռքով ցոյց տուեց մեծամեծ սքանչելիքներ: Այժմ սա մեզ խրատ ու դաս թող լինի:

Իսկ Մանազկերտ քաղաքի Վասիլ իշխանը հրամայեց հասարակ ժողովուրդին պարսպի վերայից բարձր ձայնով անարգել ու նախատել Սուլտանին, որ երկու օրից յետոյ բանակովը վեր կացաւ, հեռացաւ այն տեղից, և գնալով հանդիպեցաւ Արծկէ քաղաքին, որ Բգնունեաց 113) ծովի մէջն է և իւր մօտ ունի մի ամուր ու անառիկ բերդ: Քաղաքացիները բերդի և ծովի վերայ յոյս դնելով

1, Դան. Գ. 93:

անհոգութեան մէջ էին գտնուում։ Իսկ այն արիւնխմող գազանը, ծովի մէջ ծանծաղ տեղ գտնելով, թէ որ և իցէ մէկի առաջնորդութեամբ և թէ իրանց հնարագիտութեամբ, մտան քաղաքը և որով ամենին կոտորեցին ու քաղաքը թալանելով և գերելով, գնացին նոյն տեղից։ Եւ այս Սուլտանի սրտին դուր եկաւ, բայց մեծ տրտմութեամբ գնաց իւր աշխարհը. որովհետև ինչ որ կամենում էր, չը կարողացաւ կատարել։

ԺԷ. ԳԼՈՒԽ։

Մոնոմախի Ռոգոտորոմէան վէրջը։

Սողոմոն երջանկայիշատակ թագաւորը գրում է, թէ.—«Արդար թագաւորն աշխարհն է շինում հաստատում, իսկ անօրէնը կործանում[1]»։ Մեր իսկ աչքովն այդ տեսանք սրա վրայ կատարուած։ Թագաւորներին օրէնք է աշխարհի խաղաղութեան ու հաստատութեան համար հոգ տանել. ինչպէս Աստուած իրան բոլոր ստեղծածներին նախախնամում է։ Իսկ սա այնպէս չէր, այլ միշտ ուտելու և խմելու հետևելով, աղբիւրներն էր մեծացնում. և գանձերը, որ բոլոր աշխարհի հարկերից էր ստանում, որը պարտաւոր

1, Առակ. ԻԹ. 4։

էր հեծեալ զօրքերին բաժանել և հեծելազօրքը շատացնել թշնամիների դէմ, որպէս զի աշխարհը խաղաղութեան մէջ կարողանային պահել, թշնամիներին յաղթելով, ինչպէս անում էր Երանելի Վասիլը յիսուն տարի թագաւորելով, որ թշնամիներից ոչ ոք նրա աշխարհը չվտահացաւ մտնել։ Իսկ սա ժողոված գանձերը անառակների ապրուստի վերայ էր ծախսում և աշխարհի աւերումը բնաւ ցաւ չէր իրան։ Նա այնքան պոռնիկ և անառակասէր էր, որ Կոստանդնուպոլսի կանանցով չը բաւականացաւ, այլ հեռու աշխարհներից կանայք բերել տուեց և ամբողջ օրը նրանցով էր զբաղւում։ Այս պատճառով թշնամիները վստահանալով, քաղցած գայլերի նման, որոնք, երբ գտնումեն հօտը առանց պահապանի, անխնայ կոտորում են, նոյնպէս էլ սրա ժամանակը արևելքից և արևմուտքից առհասարակ քրիստոնեաների կոտորանումն եղաւ, որը վերևը փոքր իշատէ նշանակեցինք։ Սա այսպիսի կեանքով իւր օրերն անցկացնելով մեռաւ. որ տասն երեք տարի թագաւորեց ոչինչ բարի յիշատակի արժանի չեղած։

Իսկ Կոստանդին թագաւորի դուստր Թէոդորը թագաւորութիւնն առաւ, իբրև իւր հայրենի սեպհական ժառանգութիւն. որին ոչ ոք չը պէտք է կարողանայ հակառակել։ Տաճիկների Սուլտանը

գեսպան է ուղարկում նրա մօտ և հրամարակ գրում այս ձևով.—«Կամ տուր այն քաղաքներն ու գաւառներն ինձ, որոնք քո նախնիքը խլել են տաճիկներից, կամ տուր ամենայն օր հազար դահեկան»։ Իսկ նա տուեց ձիեր և ապիտակ ջորիներ, շատ գանձեր և ծիրանի հանդերձներ էլ ուղարկեց նրան։ Սուլտանը հարևանցի կերպով ընդունելով գանձը տարողին արգելեց իւր մօտ. և նրան էլ հետն առնելով ճանապարհորդեց Բաբելացւոց աշխարհը, մեր թուականի հինգ հարիւր չորս տարում։

Այն թուականին Պարսից զօրքերն եկան Հայոց աշխարհը Սուլտանի անունով, բայց ասում են, թէ Ապուսուարի զօրքերն էին, որ Դուինի ու Գանձակի 114) իշխանն էր, և ինքն էլ Հայոց Աշոտ թագաւորի փեսան։ Նրանց ասպատակների երեսից մարդիկը փախչելով Անի քաղաքը ժողովուեցան, բայց ամենքն էլ չը կարողացան ներս մտնել, որովհետև մուտքը կոխեց և քաղաքի դռները փակեցին։ Իսկ Պարսից զօրքերը գիշերը գնալով քաղաքի դուռը բռնեցին և սրով անտանելի կոտորած արին անօգնական ժողովուրդին. և նրանց կողոպուտն ու գերին առած գնացին իրանց աշխարհը։

Իսկ Տարօնի կողմերում Ահարօնի որդի Թէոդորոսը, որին Աւան էին կոչում իրանց լեզուով,

գաւառի իշխանն էր, բայց առանց Հաստատուն գրի, նրա մօտ Թուրքաստանից մի գունդ գալով միաբանուեցան և կամենալով հաւատարմութիւն ցոյց տալ, մտան Խլաթի գաւառը՝ շատ աւար առնելով բերին Տարօն: Իսկ Պարսկաստանից և Թուրքաստանից ժողովուած զօրքերին ուղարկեցին Թէոդորոսի մօտ ասելով, թէ.—«Կամ այդ ապստամբներին յանձնիր մեզ, կամ թէ ոչ՝ քո երկիրը գերի կը տանինք»: Թէոդորոսն այդ առաջարկութիւնը յանձն չառնելով, կռուեցան միմեանց հետ երկու երեք անգամ. Թէոդորոս իշխանը մեծ քաջութիւն անելուց յետոյ՝ սաստիկ վիրաւորուած՝ քիչ օրից յետոյ վախճանուեցաւ: Շատ ցաւալի էր նրա մահը, ըստորում մանուկ Հասակումն ու գեղեցիկ կերպարանքովը Դաւթին էր նման և քաջութեամբ շատերից առաւել, որ տարաժամ Հասակում մեռաւ:

Իսկ ձմեռը, Քրիստոսի ծննդեան և մկրտութեան տօնի օրերում, անօրէնների զօրքերը գիշերը ճանապարհ ընկնելով՝ եկան Հարք գաւառի Մանկան Գոմ կոչուած գիւղաքաղաքը. երբ բնակիչները գիշերային պաշտօն էին կատարում, անհաւատները բռնելով նրանց, սրով կոտորեցին, թէ նրա և թէ նրան շրջապատող գիւղերի բոլոր բնակիչներին. և գերին ու աւարն առնելով՝ գնացին Արածանի գիւղը, որովհետև նոյն իսկ

այնտեղից էին անցնում։ Գերիներին ու աւարը հանեցին սառույցի վերայ. սառույցն յանկարծ կոտրուելով, իւր վերայ բոլոր գտնուածներին տակովն արաւ։

Ո՜վ, որքան ցաւալի և ողբերի արժանի է այս պատմութիւնը. մէկը գուցէ մեղադրէ մեզ, թէ մինչև երբ վշտերի ու նեղութիւնների պատմութիւն գնես մեր առաջը։ Մարգարէները որքան սպառնական խօսքեր էին գուշակում, որոնք ժամանակից յետոյ էին կատարուելու. ժողովուրդը դրա համար նեղանում էր. իսկ ես չէ թէ սպառնալիքներ եմ քարոզում, այլ եղած ու կատարուած գործերն եմ պատմում, որպէս զի բոլոր լսողների արտասուքը թափեմ, թէ ինչքան դառն ժամանակի հանդիպեցանք։ Մեր այս կեանքը՝ կեանք չեղաւ։

Եթէ մեր Հայրերի մեղքերը մեզ հասան, ինչպէս Մարգարէն իւր ժողովուրդի մասին գանկատում էր, ուրեմն վայ մեզ, որ մենք մեր Հայրերի պարտքերն ենք վճարում։ Եւ ուր է այն, որ Աստուած Եզեկիէլի հետ խօսելով ասում էր.— «Որդի՛ մարդոյ, ի՞նչ է այն առակը, որ ասում են Իսրայէլացիների մէջ, թէ՝ «Հայրերն ապուխ կերան և որդւոց առամներն առնուեցան»։ «Կենդանի եմ ես, ասում է Տէրը, թէ այդ առակը կատարուի Իսրայէլացիների մէջ. որովհետև բո-

լոր անձերն իմն են, ինչպէս Հօրը՝ նոյնպէս և որդու անձը»[1], և որդուն ազատեց Հօր պարտքից։ Եթէ մեր մեղքերի համար այս ամենը եկան մեր վերայ, ուրեմն բոլոր մարդկանցից թշուառ ենք։ Ընդհանուր աշխարհը խաղաղութեան մէջ է բնակւում և մենք կալանաւոր գերիներ ենք, որով կոտրուած, տնաւեր և բոլոր կարողութիւնից զրկուած։

Հայաստանն ունէր թագաւորութեան չորս աթոռներ, բայի Կիւրապաղատութեան իշխանութիւնից, որը Հռոմներիցն էր։ Ունէր մեծ, ու բոլոր ազգերին նախանձելի Հայրապետութիւն, ճշմարտախօս վարդապետներ, առաջին վարդապետների նման գիտութեան խորը հասած։ Նրանց խօսքերից հերձուածողների գունդը ամօթահարուած՝ գետնին էր նայում և չէին կարողանում հաւատացեալների հօտի փարախը մըտնել. որովհետև գռնապանն էլ, որ ճանաչում է իրաններին և ճանաչւում իրաններից, չէր ընդունում նրանց։ Մեր եկեղեցիները նոթահարսի նման ամենայն բարեկարգութեամբ զարդարուած էին անմահ փեսային հաճոյ լինելու համար։ Մեր Մայր—սուրբ եկեղեցու մաքուր արգանդից նոր ծնուած մանուկները, ազաւնիների ձագերի նման խմբուած, լիառատ ձայնով հրեշտակների երգն էին երգում։

1, Եզեկ. ԺԸ. 1—5։

Այժմ եկ, տես այն գառն ու անմխիթար փոխարէնը, որ ընդունեցինք։ Մէր են թագաւորների ամառները, այժմ չեն երևում. ուր է զօրքերի բազմութիւնը, որ թանձրամած ամպերի նման, նրանց առաջը գարնանաբոյս ծաղիկների պէս՝ գոյն գոյն Հանդերձներով էին փայլում. չը կան և այլ ևս չեն երևում. ուր Հայրապետական այն մեծ ու Հրաշալի ամառը, որը՝ Աստծու երանելի մարդ մեծ Գրիգորիսը իջնելով խոր վիրապը, ծանր չարչարանքով տասն և Հինգ տարի ջանք արաւ և գրեց Առաքելական ամառի տեղը. այսօր տեսնում է թափուր և Ամառակալից գաստարկ, գարդերից մերկացած, փոշով և սարդիոստայնով լցուած և Ամառի ժառանգը կալանաւոր ու գերու նման օտար աշխարհ հեռացած։ Վարդապետների ձայներն ու քարոզութիւնները լռուած, և Հերձուածողների խումբերը, որոնք նրանց ժամանակ ծակերը փախչող մկների նման այստեղ ու այնտեղ էին թաքչում, Հալածուելով նրանց աստուածաբանական խօսքերից ու ուղղադաւան վարդապետութիւնից, այսօր առիւծների նման Հզօր կերպով, բերանաբաց դուրս են գալիս իրանց բներից, թէ անմեղներից ում կուտան։ Ի՞նչ պէտք է ասեմ եկեղեցու Համար, որ յառաջ այնպէս զարդարուած, վայելուչ, բազմաձնունդ, ամենա-

երջանիկ էր, որ մարգարէին հիացրեց, իսկ այսօր նստում է անշուք, անզարդ, անորդի, այրի կնոջ նման բոլոր գեղեցկութիւնից ու զարդերից մերկացած, պատուից ընկած, պատռած հանդերձով անմխիթար նստած. այնպէս էլ այստեղ է տեսնւում. ջահերը մարած, ճրագներն անցած, խնկերի բուրումներն ու անուշահոտութիւնն ապառուած, Տէրունական սեղանի սպակը փոշուով ու մոխրով ծածկուած։ Սրանից ծնուած մանուկները, որոնք սրա դռների առաջն էին բնակւում և Դաւթի սաղմոսարանը ձեռներն առած՝ նրա երգերն էին երգում, այսօր դիւաբնակ մրգկիթների դռներում կաքաւում, սովորելով Մահմէտի ասած խօսքերը։ Նաև պարկեշտ ու ողջախոհ կինարմատները, որոնք օրինաւոր ամուսնութիւնը իրանց ամուսիններից մեծ թախանձանքով էին ընդունում, այսօր անառակ ու այլանդակ խառնակութիւնների են վարժուել։

Այժմ եթէ այս բոլոր պատմածներս մեր մեղքերի համար են հասել մեր վերայ, ձայն տուէք երկնքին, նրա մէջ և նրա վրայ գտնուածներին. ձայն տուէք երկրին և նրանում գտնուած կենդանիներին. ձայն տուէք լեռներին ու բլուրներին, այլատեսակ և անտառախիտ մայր ծառերին, թող լան ու ողբան մեր աւերումը։

Մարգարէներն էլ ուրախութեան ժամանակ լեռներին և բլուրներին հրամայում էին ուրախանալ, գետերին՝ ծափ զարկել, ծովին ու մայր ծառերին՝ զուարճանալ. որովհետև սրանք ամենը մեզ ցեղակից են, մեր ուրախութիւններին ուրախակից են լինում, մեզ պարտաւոր են, ոգին էլ հազորդ լինել. ինչպէս և առաջինների ժամանակ՝ մեր չարչարանքների ու խոնարհութեան օրը, որ իսկապէս մեր համար եղաւ, մեզ հետ խոնարհեցան։

Բայց այս օգուտ չէ մեզ՝ մխիթարութեան համար, որովհետև մեռելին թէպէտ շատ ժամանակ լալիս և ողբում են ու խաւարի մէջ փակում, բայց ոչինչ օգուտ չէ բերում նրան։ Երեմիայի լացը Հրէաների համար ինչ օգուտ եղաւ, և Քրիստոսինը՝ Երուսաղէմի կամ Յուդայի. ասա՛ ինձ. և ոչինչ։ Ուստի՝ այս հասկանալով՝ պարտաւոր ենք մեր անձերի ուղղութեամբ հաշտեցնել Աստծուն. թէ որ այս կատարուի, թշնամիների սուրն էլ բոլորովին կը պակասի, գժուարինները մեզ դիւրին կը լինին և քարքարոտ տեղերը՝ հարթ ճանապարհ ու ամենայն մարդ կը տեսնի Աստծու փրկութիւնը։ Թէ որ Աստուած մեր կողմը լինի, ո՞վ է կարող մեզ հակառակել։ Որովհետև ինքն օրէնքների մէջ հրամայեց, թէ.—«Քո թշնամիներին թըշ-

նամի պէտք է լինիմ և քեզ ատողներին պէտք է սատակեմ[1]»։ Եւ դարձեալ, թէ.—«Քեզ չեմ թողնիլ և վայր չեմ ձգիլ[2]»։ Միայն թէ Աստծու հետ հաշտ պէտք է լինինք. նրան անկեղծ սրբությամբ ապաչենք, բարի գործեր կատարենք, այն ժամանակ հակառակներից մի բան չը կայ, որ մեզ կարողանայ նեղացնել։ Աստծունն է և այս խօսքը, որ Եսայի մարգարէի գրքի մէջն ենք գտնում, թէ.—«Դեռ դու չը խնդրած՝ ես կը լսեմ քեզ. և երբ խօսիս, ասելու եմ, թէ ինչ ես խնդրում[3]»։ Այս խօսքը ջերմ գութ ունեցող բոլոր ծնողներից գերազանցում է։ Իսկ անարժաններից հեռանալով՝ ասում է.—«Իմ անձը չը պէտք է լինի նրանց հետ»։ Եւ դարձեալ.—«Գուցէ թէ ինձ ապաչէք և ես չը լսեմ ձեզ. պէտք է փնտռեն ինձ չարերը և չը գտնին[4]։» Եւ դարձեալ.—«Երբ որ դէպի վեր բարձրացնէք ձեր ձեռները, երեսս դարձնեմ ձեզանից. և եթէ անվերջ աղօթք անէք՝ չը լսեմ ձեզ[5]»։ Որովհետև ինչ միաբանութիւն կայ լոյսին խաւարի հետ։

Վախենանք, եղբայրներ, և պատկառինք երկնային պատգամներից. Աստծու անծանօթներիցը չը լինինք, որ չասէ թէ.—«Չեմ ճանաչում ձեզ[6]».

1, Բ. Օր. ԼԲ. 41։
2, Երբ. ԺԳ. 5։
3, Եսայի. ԿԵ. 24։
4, Առակ. Ա. 28։
5, Ես. Ա. 15։
6, Մատթ. ԻԵ. 12։

այլ լինինք նրա բարեկամների կարգումը, որ ասէ մեզ.—«Եկէք, իմ հօրից օրհնուածներ, ժառանգեցէք անպատմելի կեանքը [1].»:

ԺԸ. ԳԼՈՒԽ:

Թէոդոսի Լաֆաորոլինը, որ Ասորածպորոյ է Լարքմանառամ:

Մանոմախի մահից յետոյ՝ առիւծանման կատաղութեամբ մռնչաց մատակ առիւծը (նրա կինը) իւր բնակարանում. այն՝ որ յառաջ երևեցաւ Դանիէլ մարգարէին իւր տեսիլքի մէջ [2].: Նա կոչելով քաղաքի գլխաւորներից և իշխաններից մեծամեծներին, ասաց նրանց.—«Ով որ ձեզանից կը վստահանայ զօրքով գնալ դէպի արևելք ու վերջ տալ Պարսիկների խրոխտալուն ու կռուին, և աշխարհը խաղաղութեան մէջ պահել, այն ժամանակ թող գայ համարձակ թագաւորէ. Աստծու օրէնքով նա է արժանի թագաւորութեան. իսկ եթէ մէկը յանձն չի առնիլ ասածներս, տեղապահ ես բաւական եմ»: Մեծամեծներն այս լսելով՝ առանց պատասխան տալու, ամեն մէկը գնաց իւր պալատը:

Իսկ թագուհին՝ Սուլտանին, ինչպէս քաղ-

1. Մատթ. ԻԵ. 34: 2, Դան. Է. 4:

ցած գազանի, առատ տուրքերով կշտացրեց. այնպէս որ, նա մոռացաւ մեր վերայ յարձակումը. այլ կրկին դարձաւ դէպի Բաբելոն և նրա կողմերում կռիւ էր մղում, որովհետև սաստիկ սատերազմասէր մարդ էր։ Բայց մեր սահմանակից ու դրացի ազգերը գրգռուած՝ ամառ ու ձմեռ չը հանգստացան Հայոց աշխարհն աւերելուց։ Լրտեսներով որոնում էին և լսում, ուր որ բնակիչներ կան, գիշերը գնալով՝ յանկարծ վրայ էին թափւում և չը տեսնուած ձևով, անխղճաբար անխտիր կոտորում էին ամենին. և աներկիւղ ու անկասկած շատ օրեր մնում էին այնտեղ, մինչև տները լաւ փնտռելով, եթէ մէկը մի բան պահած ունէր, գուրս հանելով՝ բոլորովին տակն ու վրայ արած նոյն տեղը, աւարն ու գերին առնում և գառնում էին իրանց աշխարհը։

Եւ որովհետև Բասեն գաւառի Ծիրանիս կոչուած տարի տորառում բազմամարդ ու հարուստ Օկոմի անունով մի գիւղաքաղաք կար, Աստուածայայտնութեան մեծ տօնի օրն անօրէնները գիշերով գնացին նրա վերայ։ Ըստորում նոյն դաշտի սաստիկ ցրտից մարդանման գազանների ձեռներն ու ոտները սառել էին, երբ որ հասան աւանի մօտ, տեսան անասուններին կերակրելու համար դիզուած շատ խոտ, այրեցին այն. կրակի բորբոքուելուց բոլոր դաշտը կէսօրուայ նման

լուսաւորուեցաւ. նրա մօտ կանգնելով՝ տաքացան իրանք և իրանց երիվարները։ Ապա աղեղները լարելով ու զէնքերը մերկացնելով յարձակուեցան Օկոմի գիւղաքաղաքի վերայ. նրանց գործը ամառուայ նման հեշտացաւ. որով կոտորեցին մօտ երեսուն հազար հոգի։ Նոյն տեղի բնակիչներից ոչ ոք չմնաց, բացի ուրիշ տեղ ճանապարհորդածներից։ Երեք օր կացան այնտեղ. եզների, իշերի և ձիերի վերայ բառնալով ամբարների ցորենը, կարողութեան մթերքը և մի քիչ էլ պէտքական բաներից գերելով՝ գնացին իրանց աշխարհը։ Բայց այնտեղ գործած բազմատեսակ չարիքները ով կարող է գրի առնել. այսպիսի գործողութիւնով բոլոր երկիրն ամայացաւ բնակիչներից. ոչ մէկը կենդանի չը մնաց, բացի ամրոցներում պաշտպանուածներից։

Իսկ թագուհին, երկու տարի թագաւորելով՝ խորին ծերութեան հասած՝ հիւանդացաւ և նրանով էլ մեռաւ։ Դեռ չմեռած, քաղաքի գլխաւորները գալով նրա առաջը, խնդրում են, թէ քանի որ կենդանի ես, մէկին թագաւոր արա, որպէս զի մեր քաղաքը մնայ առանց խառնակութեան։ Թագուհին հաւանելով այդ առաջարկութեանը, հրամայեց բերել քաղաքի գլխաւորներից Միխայէլ անունով մէկին, որ թագուհու հայրերի ժամանակ նոյն պալատի պաշտօնեանե-

րից մէկն էր. նա ծերացած շատ հարուստ մի մարդ էր. քաղաքի հաւանութեամբ նրան թագաւոր նստացրեց և ինքն երեք օրից յետոյ գնաց այն ճանապարհով, որտեղ ամենայն երկրի թագաւորներն ու ազգատները միասին են, Դաւթի երգին համաձայն։ (Մեռաւ)։

Իսկ աշխարհների մեծ և փոքր իշխանները, երբ որ լսեցին Միխայէլի թագաւորելը, բոլորը հնազանդուեցան նրան։ Նա պարտաւոր էր քաղցր խօսքերով և առատ պարգևներով ամենին ուրախացնել և իւր իշխանութեան ներքև հնազանդութեան մէջ պահել, բայց ամարդի լինելով, Ռոբոամի նման չիմարացած՝ իշխաններից ոմանց առանձնացրեց, իշխանութեան անարժան համարելով, իսկ մեծամեծների հետ խօսելով՝ ասաց.—«Կամ ելէք Պարսիկների դէմ պատերազմելու և թող մի տաք երկիրն աւերել, կամ թէ չէ, ձեր ռոճիկը Պարսիկներին հարկ կը տամ և երկիրը խաղաղութեան մէջ կը պահեմ»։ Իշխանները չը-հաւանելով այդ խօսքին, թագաւորի մօտից գնացին առանց պատասխան տալու, և բոլորը միասին ուխտելով, ծոմն անցան։ Անթիւ զօրքեր ժողովեցին այնտեղ։ Նրանց առաջնորդներն էին Կամիանոսը, որ և թագաւոր եղաւ և Կամինատը։ Միխայէլից ապստամբելով, երդուեցան չհնազանդել նրա թագաւորութեանը։ Այս գործը կատա-

բուեցաւ մեր թուականի հինգ հարիւր վեց տարում, երբ Հռոմոց Դիքտիոնի 115) տասն էր։

Վաչ այն տարուոյն, վաչ աշխարհաւեր այն խորհրդին, երբ կործանուելով աւերուեցան երկրի բնակիչները. որովհետև երկիրն առաջին անգարգուեթեանը փոխուեցաւ աշխարհապատում խօսքին համաձայն,—«Երկիրը, ասում է, ամայի ու անպատրաստ էր [1], մարդ չը կար, որ հողը մշակէր [2].»։ Ընտրում ինչպէս մարդու գեղեցիկ դէմքը ծաղիկ հասակում սիրուն և տեսնողներին զուարեկան է երևում, իսկ երբ գեղեցկացնող հոգին մահով բաժանուում է նրանից, առաջին պայծառ ու գեղեցիկ գարդերից զրկուած՝ երկիւղալի ու անարդ է երևում տեսնողներին, նաև զուրծն էլ է կորուում դէպի նա. ըստ այնմ թէ,—«Մոռացուած եղայ ես որտիցը մեռածի նման [3].»։ Այդպէս էլ երկիրն է տեսնւում. որովհետև երբ նա մարդաբնակ շինուեթեամբ է հարստանում, այն ժամանակ երկրագործներն առատ սերմերով լցնում են անգաստանները, որոնք երբ բուսնում են, կանաչագարդ գեղեցկուեթեամբ դաշտերը զարդարում և շատ առատուեթեամբ դէպի վեր ծլում, բարձրանում. և երբ հասկերի կերպարանքը իրանց գագաթների վերայ ցոյց են տալիս, այն ժամանակ իրար վերայ դասաւորուած

1, Ծնող, Ա. 1։ 2, Նոյեն Բ. 5։ 3, Սաղմ. ԼԱ. 13.

բարձրութեամբը՝ տեսնողներին ամպաձև է երևում, և մեղմ շնչող օդից ճօճում, ճեմում է ծովային ալիքների նման։ Այսպէս էլ արածող անասունների հօտերը դալարաբոյս հովիտներում, սառն աղբիւրակների մօտ, խայտում, խաղում են. և երկիրը՝ դալեկի նման գեղեցիկ դէմքով նրանցով զարդարւում, ըստ այնմ, թէ.—«Դաշտերը և նրանցում գտնւող ամեն ինչ պէտք է ուրախանան[1].»։

Այժմ նրա հակառակն ենք տեսնում. երկիրն աւերակ, բնակիչներից թափուր. քաղաքները կործանուած, անդաստանները բերքից կտրուած ու փշալից, անցաւորներին ահռելի ու զարհուրելի են երևում։ Նաև քաղցրաձայն թռչունների տարմերը, որոնք իրանց մարդասէր բնաւորութեամբ մեր ազգին ընտանի լինելով, քաղցրանուագ եղանակներով գաշտերն են կենդանացնում, և առաւօտեան ժամերում ճռուողական երգերով և քաղցրաձայն կարկաչով երկրագործներին քնի թմրութիւնից, ինչպէս խթանով, զարթնացնելով, իւրաքանչիւրին իւր գործին էին պատրաստում. քայց այժմ շինութիւններն աւերակ, ամայի ու անմարդ են և նրանց բնակուելու տեղ չկար, որ այնտեղ արագիլները բոյն շինեն և թռչուններից տկարները նրանց ապաւինեն[2], սաղմոսի խօսքին

1, Սաղմ. ՂԵ. 12։ 2, Նոյեն ՃԲ. 17։

համաձայն. և կամ որտեղ ծիծառը պատրաստ է իւր հոգացողութեան նիւթ եղած բոյնը, իրան ձագերին աներկիւղ պահպանելու։ Այժմ այս խօսքերը թող այստեղ դադարին. մենք սկսենք այս գժուարալուր ու տխուր պատմութիւնը։

Երբ Յունաց թագաւորութիւնը երկուս բաժանուեցաւ և երկաթէ գաւազանը՝ եղէգնէ գաւազանի նման ջախջախուեցաւ, որի մասին Ասորեստանցին Եգիպտացիների թագաւորութիւնը նախատելով՝ այսպէս էր անուանում։ Երեմիային երևեցած եռացած կաթսան, որ այն ժամանակ եռալու ցնցուղները հիւսիսից դէպի հարաւ էր ձգում, այժմ սարսափելի բորբոքումով հարաւում և հիւսիսում այրելով ոչնչացրեց քրիստոնեաների ազգերին։ Տիրոջ հրամանին համաձայն՝ բաժանուած թագաւորութիւնը չի կարող մնալ, այլ կործանուած է. արդարև, իսկապէս կատարուեցաւ։ Ասորում, երբ Պարսիկներն իմացան սրանց կռիւն ու հակառակութիւնը միմեանց դէմ, համարձակապէս եկան մեր վերայ, անդադար անցուդարձ անելով՝ աշխարհաւեր կործանումը վերջին ծայրը հասցրին։

Արդ, նոյն տարին սկսուելու ժամանակ, որի յիշելը վայով արինք, գիշակեր գայլերի նման, որոնք անհոմիւ հօտին հանդիպելիս, ոչ թէ իրանց կշտանալու չափ բաւականանում են կոտո-

բել, այլ աշխատում բոլորն ոչնչացնել։ Պարսից կողմից եկած զօրքերն էլ չէ թէ աւարով էին կշտանում, այլ մեզ կոտորելու անկուշտ քաղցն ունէին. որովհետև աչքերով տեսածը, անհնար էր որ, նրանց ձեռից ազատուէր, արածները մեծ բարեգործութիւն համարելով։

Հռոմների պատերազմի ժամանակ, Լիպարիտի որդի Իվանէին, որին պատուի համար տուել էին բնակութեան տեղ Հաշտենից գաւառի Երիզա 116) մեծ գիւղաքաղաքը նրան շրջապատող շինուածներով. երբ որ լսեց, թէ թագաւորութիւնն երկուս է բաժանուել, գնաց և խաբէութեամբ առաւ Եղանց Բերդ կոչուած ամուրը, և այն իւր ձեռի տակ առնելուց յետոյ՝ դարձաւ Աղօրի գաւառի Հաւաճիչ անուանուած բերդը. քաղաքի բնակիչները բարեկամաբար գիմաւորեցին նրան։ Այն իշխանը, որ արևելեան կողմի կառավարիչն էր, այդ ժամանակ այնտեղ պատահեցաւ, Իվանէն, երբ նրան տեսաւ, հրամայեց շուտով բռնել։ Անչափ գանձ, ձիեր, ջորիներ և արևելեան կողմից բոլոր ժողովածները առաւ, իրան էլ Եղնուտում 117) բանդարկեց ու ինքը շատ շտապով գնաց Կարնոյ ամուր քաղաքի վերայ։ Փիչ միջոց խաբէութեամբ աշխատեց քաղաքն առնել, ասելով, թէ.—«Թագաւորից հրաման ունիմ. այդ քաղաքն իմն է. գռները բացէք որ մտնեմ»։ Եւ

երբ չը կարողացաւ հնազանդեցնել, ապա կռուով ուզեց տիրել քաղաքին. իսկ Կարին քաղաքի իշխանը շուտով յայտնեց Անի քաղաքում նստող իշխանին, որ Մագիստրոսութեան պատիւ ունէր։ Նա, երբ լսեց, գլխաւորներից մէկին զօրքով ուղարկեց Իւվանէի վերայ։ Բայց սա երբ որ իմացաւ նրա գալը, երկիրն ասպատակելով՝ դարձաւ իւր տեղը, և մարդ ուղարկեց Պարսկաստան իրան օգնականութեան համար զօրք բերել։ Այս եղաւ այն անտանելի աղէտների սկիզբը, որոնք մեր վերայ եկան։

Անօրէն Պարսիկները, երբ որ Իւվանէի հրաւէրը լսեցին, իրար ձայն տալով, իսկոյն մի տեղ հաւաքուած, շտապով նրա մօտ եկան. իսկ նա երբ տեսաւ զօրքերի բազմութիւնը, վախեցաւ. որովհետև ոչ ոք գիմադրող չը կար, ըստորում Կարնի այն իշխանը, որի պատճառով անօրէններն եկան, երբ որ նրանց գալու շխրատոցը լսեց, մտնելով մեծ բերդը՝ ամրացաւ։ Այն ժամանակ զօրքերն ասացին. մեզ աւարի ճանապարհ ցոյց տուր. դատարկ յետ մի՛ դարձնիր. իսկ նա անճարացած՝ իւր մարդկանցից առաջնորդ տուեց նրանց, որոնք վեր կենալով գիշերը գնացին անապատ տեղերից և յարձակուեցան Խաղտեաց գաւառի վերայ. բնակիչներին անհոգ գտնելով, իրանց արիւնխմող բնաւորութեան համաձայն, պատահած

բոլոր մարդկանց սրով սպանին, մինչև Ճանեթի Խրթի կոչուած անտառը. և անթիւ աւար ու գերի առնելով, մեծ յաղթութեամբ յետ դարձան և գալով չարիքների այն առաջնորդի մօտ՝ մեծ ընծաներով շնորհակալութիւն տուին նրան այն յաջողութեան համար, որ իրանց հանդիպեցաւ. ապա գնացին իրանց աշխարհը: Եւ որովհետև երկիրն անտէր տեսան ու առանց պահապանի, սրա համար շուտով դարձան գնացին չարի արբանեակները դէպի այն, և մտնելով Մանանազու գաւառը, երկու մաս բաժանուեցան: Մի մասը գնաց դէպի Եկեղեաց գաւառը և գիշերով յարձակուեցաւ քաղաքի վերայ, որը գտան անպատրաստ ու անհոգ. այդ քաղաքին հասած ազէտագին չարիքները կարողութիւն չունիմ գրի առնելու, որովհետև առաւօտը լուսանալիս ցաւալի և ալէկոծուած էր քաղաքի գրութիւնը, որ քարերի և անշունչ արարածների անգամ լացը էր բերում. ըստորում տեսնողներից ում սիրտը չէր կտրատուիլ և անձը չէր դողալ ու աչքերի տեսութիւնը խաւարով մթնանար. հրապարակները, տները, ընդարձակ սրահները, նրբափողոցներն ու այգիների ցանգերը լիքն էին դիակներով. և համարեա քաղաքի բոլոր սահմանները ներկուած էին սպանուածների արիւնով. այնտեղ շատերին էլ դեռ տեսնում էին հոգիքը

չաւանդած, ձայնը կտրուած՝ հագիւ շունչ առնելով. միւսներին՝ անխիղճ կերպով սատակ վիրաւորուած, ամանց փորոտիքը թափուած, լեարդը հանած բերանը դրած. դեռ կենդանի եղածին էլ հարկադրում էին ուտել։

Զարմանալի է, ով Աստուած, քո այն ժամանակի ներողութիւնը և մեր չարութեան առաւելութիւնը. որովհետև ահա տասն երեք տարի է, որ այսպիսի անտանելի աղէտներ են կրում քրիստոնեաների ազգերը, և չը պակասեցաւ քո բարկութիւնը, այլ դեռ ևս ձեռքդ բարձրացած է՝ աւելի խիստ պատիժ հասուցանել մեզ։ Դեռ չի շարժւում քո ձեռը դէպի ներումն ու գութը, այլ շարժւում է տաելիներին հասուցանելու համար։

Քաղաքն ու նրան շրջապատող գիւղերն ու ագարակները այնպիսի աղէտներով պաշարեց, մինչև որ մի մարդ կենդանի չը մնաց, բացի որ և է բերդերում եղածներից։ Իսկ անօրէններն աւարով կշռացած ու լիացած, այրեցին քաղաքը, առնելով դաւառի գերին ու կողոպուտը, կրկին յետ դարձան։ Ո՜վ քաղաք, այլ ևս ապաստանի քաղաք չես, այլ քո մէջ բնակողների կորստեան խորխորատ։ Սրանք են քո ցաւալի պատմութիւնները բազմատեսակ աղէտներից մի փոքրը նշանակուած։

Անօրէնները գալով, Հասան Կարնոյ գաւառի Բլուրս կոչուած գիւղի մօտ. նոյն տեղի բնակիչները պարապով շրջապատելով Բլուրսը՝ Հողի վրայ դրին նրա հիմքը, Տէրունեան առակին համաձայն. վասն որոյ յորդ հեղեղի նման անօրէնները նրան բաղխելիս, չը կարողացաւ մի վայրկեան դէմ կանգնել՝ այլ յանկարծակի կործանուեցաւ և նրա կործանումն եղաւ աշխարհին լսելի և անմոռանալի մինչև աշխարհի վերջը։ Այժմ որը նրանք փրկութեան յոյս և ապաւէնի տեղ էին կարծում, իրանց կոբբատեան գուբ եղաւ. որովհետև Եփրատ գետի այս կողմը գտնուած գիւղերի ու վանքերի բնակիչները բոլորն այստեղ էին հաւաքուել. նաև Արծն գիւղաքաղաքից շատերը. թշնամիները նրանց վերայ յարձակուելով՝ իսկոյն կործանեցին նրա ամրութիւնները. ներս մտնելիս, փայլուն սրերից և ազեղների լարերի ձայներից բոլորը երկիւղով սարսափած՝ ինչպէս շղթաներով կապուեցան, մնացին։ Եւ որովհետև նրանց իշխան և առաջնորդ չըկար, որ սատեալով կամ խրախուսելով սիրտ տար ու պատրաստէր թշնամիների դէմ քաջութեան հոգւով պատերազմելու և նահատակուելու, ինչպէս օրէնք է բոլոր պատերազմողներին. ուստի անզլուխ լինելով, թշնամիներին միայն տեսնելով յուսահատուեցան, շփոթուեցան, սարսափեցան և իրանց բոլոր խելքը կորաւ ու սկսեցին

միմեանցից իրանց անձերը ծածկել. ոմանք գիշերը պարապից իջնելով՝ փախստական եղան, միւսներն էլ կամքով անձնատուր. իսկ ներքը մնացողները պատերազմի հոգսը թողած՝ փոս փորելով հողի տակը ծածկուեցան։ Անօրէնները յանդգնաբար յարձակուելով նրանց վերայ, սկսեցին կոտորել բնակիչներին, ոչ թէ պատերազմի կարգով, այլ բակում փակուած ոչխարների նման, ոմանց բռնելով ու առաջ բերելով՝ գլուխն էին կտրում։ Երկու տեսակ մահով էին մեռնում նրանք. սրի շողալով իրանց վերայ, որ մահից աւելի դառն է և մահի վճռով. պատահածներից ոմանց վերայ գազանաբար յարձակուելով՝ սուրը սիրտն էին կոխում և իսկոյն սպանում. թանձրամարմին ու լայնաթիկունք մարդկանց ծնկի վերայ չոքեցրած, ձեռները պարզելով՝ գետին ամրացրած ցցերից կապում և կաշին եղունգների հետ միասին այս կողմի և այն կողմի բազուկից, թիկունքովը մինչև երկրորդ ձեռի ծայրը բռնի կերպով քաշելով հանում էին ու ազեղներին լար շինում։ Աւա՜ղ, որքա՜ն ցաւալի է այս պատմութիւնը։

Իսկ երէցների և կրօնաւորների կրած—ը տեսնուած աղէտները որ ականջները կարող են տանել. նրանց կրծքերից վերև կաշին քերթած երեսիցը վերցնելով, գլխի վերայից յետ էին շրջում և այնպիսի անտանելի տանջանքներով

չարչարելուց լեռոյ էին ապանում։ Սրանից աւելի դառն ու անտանելի ինչ տանջանքներ մէկը կարող է լսել. որբերի վկայութիւնների մէջն էլ մի տեղ կատարուած չի տեսնւում այդ։

Արդ՝ այս ձևով բոլորին կեանքից զրկեցին. մինչև անգամ փնտռելով կենդանի թաղուածներին, այն է՝ հողի տակ պահուածներին, նիզակներով չարաչար ծակծկոտելով ապանեցին. այնպէս որ, տանջուածների վայնասունները բոլոր լեռների մէջ արձագանք էին տալիս։ Եւ երբ բոլորին ապանեցին, ապա մեռածների կշտերը ծակելով, լեղիները հանած՝ ամաններում հաւաքեցին, որ գերի կանայքը իրանց հետ տուն տանին։ Այսպէս վերջացաւ այն կործանուելու բանը—Բլուրը։ Այսպէս մատնուեցանք չար և անողորմ մարդկանց ձեռքը. և մեզ այլելութիւն չեղաւ Աստծուց, որովհետև, երբ մենք խաղաղութեան մէջ էինք, նրան չը լսեցինք։ Նա կանչում էր մեզ ազերբայջան ձայնով մարգարէների բերանով.— «Եկէք, ասում է, լսեցէք ինձ, և ձեր անձերը բարութեան մէջ կը լինին. և եթէ սիրով լսէք ինձ՝ երկրի բարութիւնները կը վայելէք [1]»։ Մենք նրա խօսքերը բանի տեղ չը դրինք. վասն որոյ նա չը լսեց մեզ նեղութեան ժամանակում, այլ իւր երեսը դարձրեց մեզանից. և մատնուեցանք մեր

1, Եսայ. ԾԵ. 2—3։

թշնամիների ձեռք ու մեզ առողները առնչեցին մեզ։ Նրանց սուրը մեր պատերազմող մարդկանց ընկած վիրաւորների միսը կերաւ և իրանք յաղթուելեամբ գնացին իրանց աշխարհը։ Սպանուածների և գերիների թիւը եօթը հազար առացին, ու կրնաւորներինը՝ վաթսուն։

ԺԹ. ԳԼՈՒԽ։

Մինչ գէտ 118) Երէրի աւերածները և նրանում գտնուած տաղտկների անվիս խոտորածը։

Յառաջ լիշեցինք թէ, երբ Պարսիկները մատն Մանանազու սահմանը, երկու մաս բաժանուեցան. առաջին մասը գործեց այն, ինչ որ վերևը գրեցի. իսկ երկրորդը՝ ձիարշաւ արագ ճանապարհորդելով դէպի Հանձէթ և Խորձեան գաւառները, աջ կամ ձախ չը ծռուելով, այլ աղեղնաւորի ձեռքից դուրս մղուած նետի նման, որ սատակ գնալով նպատակին է հասնում, նոյնպէս էլ նրանք, քուն ու դադար չունենալով՝ գիշերը շարունակեցին իրանց ճանապարհը. յանկարծ անսպասելի ժամում քարախառն կարկտի նման թափուեցան Հարաւի կողմի քաղաքի բնակիչների վերայ։ Եւ որովհետև քաղաքը պատսպարուելու տեղ չունէր, նրա համար բնակիչները ծովի ալիքների

նման ալէկոծւում էին յետ ու յառաջ, բայց հնար չէին գտնում։ Աւաղ, այն ազէտներին. որոնք այն ժամանակ այնտեղ գործուեցան։ Անօրէնները սրով կոտորեցին նրանց. մօրը՝ մանուկի մօտ, և որդուն՝ հօր առաջը. իսկոյն գեղեցկաշէն քաղաքը արիւնի գուբ եղաւ։ Սաստիկ շփոթից և իրարանցումից ու յանկարծահաս մահից մոռացուեցաւ բարեկամների սէրն ու ազգականութեան գութը. ամեն մէկը հնար էր որոնում, որ գուցէ կարողանայ ազատել իրան այն գժոխաբորբոք բարկութիւնից. ուստի փախան քաղաքի շրջակայ այգիները և նրանց տերևախիտ խաղողենու տակը թագկացան. անօրէններն այդ իմանալով՝ որոնեցին և տէգերով ծակոտելով սպանեցին. նրանց արիւնով ներկուեցան խաղողի ողկոյզները։ Կենդանի մնացածներն իրանց մեռելներին գտնում էին խաղողենու տակը, և թաղում նրանց հողի ներքև։ Բայց խղճերն իրանց տանջում էին խաղողը քաղել կամ նրանից ուտել, ասելով որ, մարդու արիւն են նրանք։ Իսկ անօրէնները կոտրածից դադարելով՝ դարձան դէպի քաղաքը և տների մէջն էին փնտռում։ Եթէ մէկը իւր ունեցածը մի տեղ կամ առանձին գաղտարանում պահել էր, մեծ հնարագիտութեամբ դուրս էին հանում. ապա կրակ տալով քաղաքին, աւերեցին և աւարն ու գերին առնելով՝ հեռացան այնտեղից. նոյնպէս էլ նրան

շրջապատող բոլոր գիւղերն ու գիւղաքաղաքները սրով, կրակով և գերութեամբ աւերեցին. այնպէս որ, մի կենդանի չը մնաց, որ բերանը բանար ու ձայն հանէր։

Ի. ԳԼՈՒԽ։

Կոմիանոսի Ռոֆոսրոսիանը։

Կոմիանոսը, որ առատաձեռն ու գանձերով հարուստ մարդ էր, իւր համար շատ զօրք ժողովեց։ Թագաւորը, երբ որ տեսաւ թէ, յարմարութիւնները նրան յաջողւում են, խիստ աղաչելով սկսեց դեսպաններ ուղարկել։ Պարգևներ էր խոստանում տալ նրան և արևելքումն էլ Կիւրապաղատի իշխանութիւնը, ասելով, միայն թէ հաշտուիս ինձ հետ, որ քրիստոնեաների արիւնի վրէժն առնինք. բայց նա չհաւատաց և յանձն չառաւ։ Այս դեսպանների ընդհատուելուց յետոյ՝ թագաւորի հաւատարիմներն աշխատում էին պատերազմի յաղթութեամբ հնազանդեցնել նրան։

Ժողովելով շատ զօրքեր, եկան նրա վերայ, և իրար հասնելով՝ պատերազմեցան։ Այնտեղ շատ արիւնհեղութիւն եղաւ, որի մասին ասում են որ, այնպիսի կոտորուած Հռոմում մի տեղ ոչ ոք չէ տեսել. երկու կողմի զլխաւորներից շատերը մեռան նոյն տեղում, բայց Կոմիանոսի

զօրքը յաղթեց։ Եւ որովհետև պատրիարքը Կոմիանոսի կողմն էր, որ քաղաքի մեծամեծներից շատերին միացրեց իրանց հետ, ուստի Կոմիանոսին ներս տարան և թագաւորացրին. և Միխայէլին աբեղայ անելով կղզի ուղարկեցին. բայց ասում են թէ՝ ինքը յօժարութեամբ գնաց։ Այս բոլորը սոյն աշխարհաւեր տարում կատարուեցաւ։

ԻԱ. ԳԼՈՒԽ։

Մէջքնա շահասպան տաշտի իրծանումը։

Աստուած առաւ իւր ձեռք Թուրքատանն 119) ու Պարսկատանը, չէ թէ խրատելու, այլ տանջելու գաւազան, և նրանց ձեռով պատժեց մեզ իւր արդար դատաստանին համաձայն։ Որովհետև խրատելու գաւազանը հայրական է, իսկ տանջելունը՝ դատաւորի, ինչպէս Դաւիթը մեղաւորների տանջանքի մասին ասում է.—«Մեղաւորներին շատ տանջանքներ կան[1], և քո խրատը ինձ պէտք է ուսուցանէ[2]»։ Սրան համաձայն Պօղոսն էլ Եբրայեցիներին է գրում.—«Եթէ խրատի կարգի մէջ մնաք, ասում է, Աստուած ձեզ մօտեցել է, ինչպէս իւր որդուցը[3]»։ Արդ Քրիստոս

1, Սաղմ. ԼԱ. 10։ 3, Եբրայ. ԺԲ. 7։
2, Նոյնն ԺԷ. 36։

իւր փրկարար քարոզութեամբ իւր երկնաւոր Հօրը մօտեցրեց մեզ՝ նրան ընտանի լինելու համար, և պատուիրեց ամեն բանով նրան նմանիլ և ընաւորութեան քաղցրութեամբ հաստատուն պահել ազգականութիւնը. բայց մենք անհնազանդ գտնուեցանք մեր քաղցր ու բարի Հօրը և ընտանութիւնից օտարացանք։ Վասն որոյ մեր չարչարանքի ու նեղութեան ժամանակ աչքից ձգեց մեզ և մատնուեցանք օտար ազգի ձեռք։ Մեր թշնամիները գօրացան մեր վերայ և մեզ ստրկները աւերեցին մեզ։ Հողի հետ հաւասարուեցան մեր անձերը։ Ինչպէս Մովսէսի ժամանակ ասան պատիժներով տանջելով Եգիպտացիներին, ասում էր Աստուած. այս է իմ մեծ զօրութիւնը. այժմ բոլորը մեզ հանդիպեցաւ։ Նրանց ջուրը արիւն փոխուեցաւ, մեր գետերն ու լճերը և համարեա երկրի բոլոր հողը մեր արիւնով ներկուեցաւ։ Նրանց մարմինների վերայ ուռոյցներ դուրս եկան, մեր մարմինները սրակոտոր լինելով անդամ անդամ—մաս մաս եղան։ Նրանցում շանաճանճ ու մժեղ երևեցաւ, որ երեսների տիրական գէմքերը խայթոցներով ծակծակելով էր ապականում, իսկ մեզ նետերի յարձակմունքներն աւելի ցաւալի կերպով վիրաւորեցին։ Նրանց երեք օր լոյսը խաւար փոխուեցաւ, իսկ մեզ համար լոյսը բոլորովին մարաւ, որովհետև

նոյն իսկ լոյսի ընդունարանը մահով մեռաւ և այլ ևս տեսնելու չէ Աստծու բարութիւնը իւր կեանքում։ Նրանց տները զգուելի ժժմակները սողալով էին մտնում, մեր տներն ու եկեղեցիները, որ սարսափ է գալիս ինձ վերայ, ասել, աւերիչ ցաւերով, այլ և զգուելի կերպով հոտելով ապականուեցան։ Նրանց անգրանիկների վերայ ցաւում—գոռգոռում է (խնալում է) կոտրող հրեշտակը, մեր տան բոլոր բնակիչները սատակեցան։ Մեզանից միայն ծոմն էր պակաս. բայց թէ որ գործին համաձայն մտածես, այն էլ մեզանում եղած կը տեսնես։ Որովհետև որ անյատակ անդունդը Թուրքաստանից կամ տիեզերքի եզերքից աւելի խոր է, ուր հեռանալով կորան մեր գերիները. ինչպէս Իսրայէլացիները Կարմիր ծովում, որ նրանց գերիների արիւնով էր ներկուած։ Նրանցից ոսկեղէն զարդ և հանդերձներ խնդրեցին Իսրայէլացիներն այն ծառայութեան փոխարէն, որ արին Եգիպտացիներին. մեզ ամեն բանից կողոպտեցին ու զրկեցին և մենք նրանց դէմ ոչինչ չենք գործել։ Ո՜հ, աւա՜ղ ու վա՜յ այս անմխիթար աւերման մասին։ Եգիպտացիներին երկու տեսակ էր պատժի արդարութիւնը. մէկ՝ խիստ ծառայութեան համար, որով նրանք Իսրայէլացիներին նեղեցին. որոնց պատժելու համար Աստուած դատի եկաւ. և

երկրարդ՝ որ ծառայեցին արարածներին և ոչ Արարչին, որ յաւիտեան օրհնուած է։ Մենք խոստովանող լեզու ունինք, թէպէտ բարի գործերից զուրկ ենք ու նրանց վարքն ունինք։ Արքան ցաւալի ու ողբերի արժանի ենք։ Ո՜վ Տէր ու ստեղծող Աստուած, մեզ ինչի բոլորովին մերժեցիր[1]. Հեթանոսների ոտների տակը ձգիր ու մեր թշնամիներին ծաղրի տեղ արիր[2]։ Զարթիր ու զարթեցրու քո զօրութիւնը և եկ մեզ փրկելու[3]։ Զօրութեանց Աստուած, դարձիր դէպի մեզ և տուր մեր գրացիներին եօթն անգամ աւելի[4]։

Արդ, ուրիշ քաղաքների և գաւառների աւերելու ժամանակը տաս, կամ քիչ աւելի կամ պակաս օրերի մէջ վերջանում էր, իսկ այս քաղաքը, որի մասին է մեր խօսքը, երբ շէն էր, երեք տարեկան երինջ լինելով՝ երիտասարդական քաջ ոյժ ունէր, Մովսէսի 120) նման փափուկ և զեր։ Երկրի մեծանուն վաճառականներն և սրան օգնողներն՝ ազգերի թագաւորներն էին, որոնք փղոսկրէ աթոռների վերայ էին հանգըստանում, միշտ գուսան գինի խմում և հոտաւէտ իւղով օծւում։ Եւ որովհետև ամեն չարիքների սկիզբն այստեղից է լինում, ինչպէս և Մովսէս բողոքում է Իսրայէլացիների մասին.—

1, Սաղմ. ԼԳ. 1.
2, Նոյնն ԼԸ. 4
3, Սաղմ. ԼԹ. 3.
4, Նոյնն ԼԸ. 12.

«Գիրացաւ, ասում է, հաստացաւ ու ամբարտաւանեցաւ, թողեց իւր ստեղծող Տէր Աստծուն[1].»: Նաև Սոդոմայեցիները այսպիսի կեանքի չարաչար հետևելով, ընկան անտանելի չարութեանց մէջ, ինչպէս Եզեկիէլն իսկ յայտնում է նրանց՝ հացի առատութիւնից և կեանքի յղփութիւնից զմայլուած. նաև առաջին մարդն էլ դրախտի բարիքները—մի օր չը կարողացաւ անարատ վայելել: Եւ որովհետև մեր բնութեան չափն այս է. աղքատանալու ժամանակ տրտնջում ենք և մեղադրում Աստծուն, հարստանալիս գոռոզանում և անմահների նման աշխարհն ենք ամուր բռնում, այս պատճառով փոփոխակի սովորացնում է մեզ, մեր անձերը չափի մէջ պահել, մեր չափից աւելի չը բարձրանալ, որ աւելի մեծ անկում չունենանք: Հողից՝ անարգ ու ցած ուրիշ ինչ բան մէկը գիտէ. մեր սկիզբը նրանից է և կրկին դէպի նրան պէտք է դառնանք: Մեր բնութեան Արարիչը չէ կամենում, որ մէկը կորչի. սրա համար ոչ մէկին ազատ չի թողնել. որքան խրատի հարկ լինի, քաղցրութեամբ ու հօր նման է խրատում. և երբ խրատը չ լսենք, տիրական իշխանութեամբն է տանջում: Մեղաւորներից կիսին այստեղ է դատում, որ այնտեղ աւելի թեթևացնէ տանջանքները.

1, Բ. Օր. ԼԲ. 15.

կիսին հանդերձեալին է պահում, և կան, որոնք այստեղ էլ են տանջւում, այնտեղ էլ. ինչպէս Սոդոմացիները. կան, որ միայն այստեղ, ինչպէս Ղազարոսը. կան, որ միայն այնտեղ, ինչպէս մեծատունը։ Բայց այս խօսքերը թող այստեղ դադարին. մենք դառնանք պատմութեանս կարգին։

Արդ, նոյն ցաւալի տարուայ աշնանը, երբ Հռոմները թագաւորների շփոթութեամբ էին պաշարուած՝ Արեգ ամսին դարձեալ ութիշ գօրք Պարսկաստանից եկաւ, առաջիններից էին, թէ նոր՝ չը գիտեմ. անապատ տեղերից այնպէս զգուշութեամբ եկան, որ ոչ մէկը չը կարողացաւ իմանալ, մինչև Հասան Կամախ կոչուած գաւառը. ապա այնտեղ երկուս բաժանուելով՝ կէսը գնաց մինչև Կոդոնիա 121), և իրանց սովորութեամբ երկիրը կողոպտեցին։ Մենք դառնալու ժամանակ նրանց անցնելն իմացանք։ Իսկ կէսը՝ ուշադրութիւնը դարձնելով դէպի Մելիտինէ, գիշեր ժամանակ յարձակուեցաւ նրա վերայ. և որովհետև Հռոմներից մի գունդ հեծելազօրք կար քաղաքին պահպանող, ասպատակների հասնելիս, յանկարծ բազմութեամբ դուրս ելան. միմեանց հանդիպելիս, երկու կողմից էլ շատ կոտորած եղաւ։ Պատերազմի ժամանակ քաղաքից ով որ կարողացաւ դուրս ելնել, նա ազատուեցաւ. մնացած կռուողներն էլ փախչողների յե-

տեղից գնացին. իսկ քաղաքում բռնածներին, ամենին սրով կոտորեցին։ Պարսիկները մնացին քաղաքում տասներկու օր, և հիմքից փորելով աւերեցին քաղաքը և նրա շրջակայ շինուածները։ Այս եղաւ նրանց գոռոզութեան փոխարէնը անկաշառ և արդարադատ Աստծուց, որ ամեն մէկին արժանաւոր հատուցումն է տալիս իւր գործին համաձայն։

Բայց Եկեղեաց գաւառից ներքև գտնուած գաւառները, որտեղից գիշեր ժամանակ անցկացան թշնամիները, երբ որ իմացան Մելիտինէ քաղաքին հասած ազէտները, աղեղնաւորների շատ զօրքեր ճանապարհի կիրճը բռնեցին։ Իսկ անօրէնները, որովհետև ուրիշ ճանապարհ չը գիտէին, նոյն սարերն էլ ձիւնը ծածկեց, անճարացած՝ հինգ ամիս ամբողջ ձմեռն այնտեղ մնացին մինչև Նաւասարդ ամիսը և երկրի բնակիչներին կեանքի յոյսից կտրեցին։ Այն անտանելի չարիքները, որ այնտեղ գործեցին, ազգից ազգ յիշատակ թողին։ Որովհետև տղաներին և միւս գեռահասակներին խայտառակելուց յետոյ՝ տէգերով և նետերով խաղալով, չարաչար վիրաւորելով սպանում էին. և նրանց սրտերի մէջ ողորմութեան գութ չէր ընկնում։ Չեմ ուզում ասել այն տղաների մասին, որոնց՝ ծնողների գրկերից առնելով, քարի էին զարկում.

իսկ այն համեստ կանանցն ու աղջիկներին, որոնք սենեակի մէջ էին պահպանուել, խայտառակելը ինչ հարկաւոր է մեզ գրի առնել։ Ցեղնում ես այն չարիքների չափը, թէ որքան անտանելի է, երբ Աստուած ձեռքից է թողնում։

Եւ որովհետև մարդկանց ու անասունների կերակուրը պակասեցաւ, թշնամիները կարիքի սաստկութիւնից հարկադրուած, գնացին Խորձայն գաւառից դէպի վեր. ըստորում նրանց երկիրդից ճանապարհներն կտրուած էին, և ձիւնը թանձր կերպով դեռ գետինը ծածկում էր, նրանք ճանապարհը կրկնում էին. յառաջ ձիերն ու ջորիները խմբելով՝ դատարկ էին քշում, և ճանապարհ բաց անում, ապա գերին և ունեցածը տանում. և այն ընթացքով եկան մինչև նոյն գաւառի Մորբանս կոչուած գիւղը։ Որովհետև այդ գիւղը բերդ ունէր, նոյն տեղի բոլոր բնակիչները հաւաքուել էին այնտեղ։ Իսկ Պարսիկները, երբ որ հասան այնտեղ, բանակ գրին, ըստորում կարծեցին թէ, հեծելազօրք կայ բերդումը. փոշ հնչեցրին և պատերազմի պատրաստութիւն տեսան։ Պարսիկների գլխաւորը մօտենալով բերդին, սկսեց մի քանի խօսքեր խօսել բերդի իշխանի հետ։ Նա շատրուան կոչուած վարագուրի նման գոյնզգոյն զարդարուած փռոցով ծածկել էր ձիւնը. նրանց վրա նստած՝ աս-

պարն առաջն ունենալով, գոռոզ ամբարտաւանութեամբ անլսելի տխուր խօսքեր էր խօսում։ Բերդի իշխանը, որ յարմար միջոցի էր սպասում, նրա վահանի մի կողմ ծռուելու ժամանակ, նետով զարկեց գոռոզի կոկորդիցը և իսկոյն սատակեցրեց։ Եւ որովհետև Հոռոմների աշխարհից զօրք էր գալիս յետևից, որոնք իսկոյն փողերը հնչեցրին. Պարսիկ անօրէններն այդ լսելով՝ փախստական եղան. իսկ բերդում գտնուածները դուրս ելնելով, որքան կարողացան գերի ու աւար ներս տարան. բայց Հոռոմները չէին հասել։ Պարսիկները, երբ որ տեսան թէ ուրիշ զօրք չը կայ, դարձան և աւար առնողներից, որոնց պատահեցան, կոտորեցին. մնացածներն էլ առան ու դարձան։ Երբ հասան Եղնուտի սահմանների մօտ, նրա բնակիչները դէմ ելան և կռուելով խլեցին շատ գերիներ ու աւար, և առնելով բերդը մտան։ Իսկ անօրէնները յաղթուելով ամաչեցան. նրանք Ծարօնի սահմանները՝ մտնելիս, Սիմ 122) կոչուած տարիցը իջան զօրքեր, որոնց Սանասունք է ասում աւանդութիւնը իրանց նախահօր անունին համաձայն, և պատերազմելով յաղթեցին ու կոտորեցին ամենին և աւարն ու գերին ազատելով դարձան, ուրախութեամբ փառաւորելով Աստծուն։

Այն տարում այրեցին Սուրբ Կարապետի

գեղեցիկ շինութիւնները, որոնք մեծ աշխատութեամբ շինել էր Վասակի որդի մեծ Գրիգորի գործակալներից Հրահատ անունով մէկը, երբ որ այդ երկրի տէրն էին. այրեցին այն ժամատունը, որ Սուրբ Կարապետի առաջն էր, որը գեղեցկայարմար պատրաստութեամբ զարդարեց մեծ վկայի ու Քրիստոսի Կարապետի պատուի և փառաւորութեան համար. նա և միւս շինութիւններն ու փայտաշէն եկեղեցին, որը Սուրբ Գրիգոր են անուանում: Մեր թուականի հինգ հարիւր եօթն տարին էր, երբ այս ապակէս կատարուեցաւ

ԻԲ. ԳԼՈՒԽ:

Թոնդրակէցւոց չար ալանդը, որ էրնէցու Հարց քարտուղար, և շատերին շփոթէց:

Յակոբոս անունով մի եպիսկոպոս, որ Հարք գաւառի եկեղեցիների վերակացուն էր, իւր իշխանութեան սկզբում առաքինի էր ձևանում. նա քուրձ էր հագնում, պահք պահում և բոկոտն շրջում: Նա ընտրեց իւր համար քահանաներ, որոնք միշտ իւր հետ էին շրջում: Կոշտ ու անպատճոյճ շորեր էին հագնում, համեղ կերակուրներից իրանց զրկում և միշտ սաղմոս ասում: Այս ձևով զարմացրեց հեռաւորներին և մերձա-

ուրներին և ամեն մէկը ցանկանում էր նրան տեսնել։ Նրանք, որոնք իշխանութեան շնորհիւ շատ գոռոզացած էին ամբարտաւանութեամբ, այնքան հնազանդուեցան նրան, որ եթէ նրանց հրամայէր հոգիքը հանել, ոչ մէկը չէր հակառակել, կամ վատահանար բերան բանալ և ձայն ու ծպտուն հանել։ Բայց կեղծ էր նրանց կեանքը, և ոչ ճշմարիտ. որովհետև ծառը ծանօթացնողը պտուղն է՝ ինչպէս Տէրն էլ ասաց։ Նաև Առաքեալը նրան համաձայն գրելով, ասում է, թէ.—«Եւ նոյն իսկ սատանան լուսոյ հրեշտակ է ձևանում. ինչ զարմանք, եթէ նրա պաշտօնեաները Քրիստոսի առաքեալների կերպարանքն ընդունեն 1.»։ Որովհետև ինչպէս մահացու գեղերը ընտանի կերակուրներին են խառնում, և որանք որ առնում ու կերակուրի նման ուտում, նոյն մահացու գեղից էլ թունաւորուում են. այսպէս և կարթով ձուկ որսացողները կերակուրով թաքցնում են կարթերը, որ ձուկը՝ կերակուրից խաբուած, կարթի վերայ բռնուի, նոյնպէս էլ նոյն անօրէն մշակները. ըստորում իրանց կորուստնով վիհը չեն վատահանալ մէկին յայտնի կերպով ցոյց տալ, որովհետև խելքից ստատիկ զրկուածն էլ չէր կամենալ կամքով խորասուզուել նոյն խորխորատում, որից հնար չը

1, Բ. Կորնթ. ԺԱ. 13—16.

կայ գուրս գալու։ Այդ պատճառով մեր բարեպաշտ կրոնքովն են կերպարանում նրանք, պարզամիտներին խաբելու համար և քաղցր խօսքերով անմեղների մտքերն են պղտորում. որովհետև նրանց խօսքերը կերցաւի նման են ճարակում։ Ինչպէս այն ցաւը բժշկելն է դժուարին, այնպէս էլ նրանցից պղտորուածները հազիւ կարող են ուղղուել։

Նոյն իսկ նրանց համար պատուիրում է Յիսուս իւր կենարար աւետարանում.—«Զգուշացէք այն սուտ մարգարէներից, որոնք գալիս են ձեզ մօտ ոչխարների հանդերձներով և ներքուստ յափշտակող գայլեր են [1]»։ Նաև Առաքեալն էլ նոյնն է սովորացնում Փիլիպեցիներին 123), Տէրունական հրամանից սովորելով.—«Զգուշացէք այն շներից, զգուշացէք այն չար մշակներից [2]»։ Որովհետև արտաքին թշնամիներից հեշտ է զգուշանալ։ Ցեղակիցների պատերազմից դժուարին է ազատուել, ինչպէս Հաբելին և Յովսէփին պատահեցաւ։ Այժմ եթէ որանք այլալեզու որ և իցէ ցեղից լինէին, հեշտ էր մեզ զգուշանալ. բայց ինչպէս երանելի Յովհաննէսը գրում է, թէ.—«Մեզանից ծնան, բայց նրանք բոլորը մեզանից չէին [3]»։ Եւ այս հասկանալ դժուարին է։

1, Մատթ. Է. 15. 3, Կաթող. Յովհ. Բ. 19։
2, Փիլիպ. Գ. 2.

Նրանք համալեզու և համացեղ են. մի ակնից գուրս եկած քաղցր և գառն ջուր։ Թէպէտ Սուրբ Յակոբը անհնարին համարեց այս, բայց մեր ժամանակում կատարուեցաւ։ Սոյն քաղցր ակից, Հայաստան աշխարհի Լուսաւորիչը խոր Վիրապն իջնելով, տասն և հինգամեայ քրտնալի չարչարանքով վիրապի խորութիւնից բղխեցրեց մեզ համար, յորդահոս գետի պէս, Եզեկիէլի մարգարէութեան համաձայն, պարզ և յստակ ապրիւր, որին հերձուածական թունաւոր առուները չեն կարող պղտորել, որովհետև ճշմարտութեան շինուածքը հաւատի Վիմի վերայ հաստատապէս ամրացել էր մինչև վերջին ժամանակները։ Նոյն իսկ մեր Լուսաւորիչը մարգարէական հոգւով տեսաւ, որ գառները գայլեր դարձան և շատ արիւն էին թափում. այս եղաւ երկրի վերայ մարդկանց անօրէնութիւնը բազմանալիս, և ցորենը սերմանող բարի տանտիրոջ ննջելիս, երբ թշնամին հնար գտնելով՝ Աւետարանի առակին համաձայն՝ որոմը ցանեց ցորենի մէջ։ Գառն մրուրը խառնուեցաւ այն կենարար ջրի հետ, որ Տիրոջ տանից էր բղխում. բայց շուտով յայտնուեցաւ եկեղեցու վարդապետներին, որոնք միաբանակար որոմն արմատահան արին մեր հաւատի անդից և գառն մրուրը քամելով հեռացրին։ Ճշմարտութեան աղով ջուրը մաքրեցին սուրբ Եզի-

սէ մարդարէի նման։ Եւ այս այսքան։ Բայց ժամանակ է դառնալ դէպի պատմութեան բակիզբը, որպէս զի ստոյգ լինի ասածս։

Արդ, բոլոր չարեաց հօր հետ եղած անդրանիկ արբանեակը, (այն է՝ Յակոբոսը) երբ որ նոյն կեղծաւորական բարի համբաւը, որ ոգէտ մարդիկ տարածեցին նրա մասին, աշխարհումը հաստատուեցաւ, սկսեց կծու և սուր խօսքերով մեր հաւատը պախարակել. որովհետև նա ստատիկ ճարտարախօս էր, և ճարտարախօսութեամբ շատերի սիրտը գրաւում, կարծում էր սուրբ եկեղեցու հիմքը նրանով կարող է տապալել։ Մի օրը չը բերեց Յիսուսի հրամանն ու անսուտ խոստումը դէպի Պետրոս, թէ.—«Դու ես վէմ, և այդ վիմի (նրա դաւանութեան) վերայ պէտք է շինեմ իմ եկեղեցին, և դժոխքի դռները չը պէտք է կարողանան նրան յաղթահարել[1].»։ Չը հաւատաց սրան, այլ ինչպէս մի մարդու մասնաւոր խօսք ընդունեց. վասն որոյ կռուելով՝ կարծում էր եկեղեցու փառքը կարող էր հեռացնել, ինչպէս հնումը պառնիկ կինը Սամսոնի մազերը սափրեց, որ նրա անպարժելի ոնձը թշնամիներին մատնէ։ Սա էլ ուզում էր սուրբ եկեղեցին մատնել ճշմարտութիւնն ատողներին. այն եկեղեցին՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը իւր պատուական

1, Մատթ. ԺԶ. 18.

արիւնովը գնեց. և ամենայազթ Խաչովը սրակելով զարդարեց, հաստատելով նրա մէջ խորհրդական սեղան, Եդեմ դրախտի Կենաց ծառի նման, որի անմահութիւն տուող պտուղը Կենարարի ճշմարիտ մարմինը ճանաչեցինք, իւր անսուտ հրամանին համաձայն, թէ.—«Ով որ իմ մարմինն ուտէ, յաւիտեան չը պէտք է մեռնի [1].»: Այժմ դու տես նրա չարահնար խորամանկութիւնը, թէ ինչպէս օձանման խարդախութիւններով հնար էր գտնում այն ապականող թոյնը տարածել ճշմարիտ հաւատ ունեցողների մէջ:

Առաջին անգամ սկսեց ընտրութիւն անել արժանաւոր և անարժան քահանաների մէջ. անարժաններին դադարեցրեց. և երբ սրանով շատերին դուր եկաւ, ապա սրա վերայ մի բան էլ յաւելացրեց. արժանաւորներին էլ հրամայեց տարին միայն երեք անգամ պատարագ մատուցանել: Եւ ըստ սրում Նիկիական 124) կանոններում գրուած է, թէպէտ և մէկը խիստ մեղաւոր լինի, պէտք է նրա խոստովանութիւնն ընդունել, Տէրունական Մարմնին ու Արիւնին հաղորդել ու պատարագներին և քրիստոնէական ամեն կարգերին արժանացնել. նա ականջով անգամ չուզեց լսել այս: Այլ այսպէս էր սովորացնում, թէ, ով որ իւր անձովը մեղք գործեց ու

1, Յովհ. Զ. 52—59։

չապաշխարեց, նրան ոչ յիշատակները և ոչ պատարագները կօգնեն. և իր արքանեակներով անասունը յառաջ բերելով՝ կանգնեցնում էր, և հեգնելով ծաղրում այսպէս ասելով.—«Ա՜յ տառապեալ չորքոտանի, ասենք թէ, նա իր ժամանակում մեղք գործեց ու մեռաւ, դու ինչ մեղք ես գործել, որ նրա տեղն ես մեռնում»: Այս բանի համար ժողովուրդն երկու մաս բաժանուեցաւ. ոմանք ընդունեցին այս, և ոմանք ոչ: Կարծես, ամէն մարդ շփոթութեան ու տարակուսանքների մէջ էր և փնտռում այդ գործի հնարը գտնել. նաև որոնք նոյն ժամանակում անապատներում և քարանձաւներում առանձնական ճգնութեամբ միշտ Աստծու կամքն էին կատարում, մեծ հառաչանքով և արտասուալից պաղատանքով բարերար Տիրոջից այցելութիւն էին խնդրում: Այլև երկու անգամ ժողովեցան շատ հայրեր, Հայրապետներ, քահանաներ և ժողովուրդի խառնիճաղանճ անթիւ բազմութիւն. բայց որովհետև նոյն գաւառի բոլոր իշխանները, կարծես, նրա կեղծաւոր ձևերով, ինչպէս շղթայով կապուած, ասում էին պատերազմի եղանակով. յառաջ կը մեռնինք, քան թէ Յակոբոսին ժողովի ձեռքը կը տանք: Եւ նա Նեստորի 125) նման տանը նստած՝ պատգամաւորների միջոցով մեծ ամբարտաւանութեամբ պատասխանում էր ժողովին, իշխանների օգնու-

թեան վերայ յոյսը դրած՝ և ոչ Աստծու։ Զէր յիշում Դաւթի սաղմ երգը, թէ.—«Բարի է յուսալ Աստծուն, քան իշխաններին [1]»։ Աներես անզգամը կարծում էր մարդկանց օգնականութեամբ կարող է յաղթել ճշմարտութեանը։ Բայց Աստուած, որ չի թողնում մեղաւորների գաւազանը արդարների վիճակներում համարձակութիւն ստանալ. որ արդարներն իրանց ձեռները չը պարզեն դէպի չարութիւն, իւր աչը քաշողների կամքը կատարում է և նրանց աղօթքները լսում։ Նա, որ մրրիկները հանդարտացնում է, երաշտութեան ժամանակ անձրև է տալիս, և այն մի մեղաւորի աղօթքով, այցելութիւն արաւ մեզ և իւր ժողովուրդին փրկեց. նա գիտէ իւր անքննելի իմաստութեամբ հեռուից մեծամեծ գործերի հիմք ձգել, այստեղ էլ կարգադրեց, որքան, յիրաւի, աւելի օգտակար էր. և այսպէս եղաւ։

Կարին գաւառից Եսայի անունով մի կրօնաւոր, որ բարեպաշտ տոհմից էր, և որն այն բարի համբաւի համար գնացել, միացել էր Յակոբոսին, երբ որ այսպիսի շփոթութիւններ և խնդիրներ բարձրացան նրա վերայ, ուշադրութեամբ հետևելով՝ նայում էր նրան։ Եսային շատ խելացի մարդ էր. խիստ մտերմութիւն ցոյց տալով Յակոբոսին, նրա հաւատարիմներից մէկն էր երևում. նա տես-

1, Սաղմ. ճԺԷ. 8.

նելով ու տեղեկանալով նրա պղծագործ աղանդաւոր կրօնի մասին, անյապաղ գնաց պատմեց Սուրբ Հայրապետ Սարգսին։ Հայրապետը լսելով և տեղեկանալով նոյն գործին, քաղցր խօսքերով կանչեց իւր մօտ այն թշուառական անձին և արժանաւորութեան չափովն էլ տուեց նրան։ Որովհետև քահանայական կարգից լուծեց և աղուէսադրոշմ ձևով նրա երեսի վերայ խարան* դրած՝ մունետիկը նրա մօտ աղաղակում էր, թէ.—«Ով որ Սուրբ Լուսաւորչի հաւատից մրոնում է անօրէն Թոնդրակեցի մարդադէմ գազանների փարախը և միաբանում նրանց, այսպիսի դատ ու դատաստան պէտք է ստանայ»։ Եւ հրամայեց բանդի մէջ փակել նոյն ամենաթշուառ մարդուն. ըստորում կամենում էր, որ զղջայ և խոստանայ հեռանալ այն պիղծ աղանդից. որովհետև սաստիկ ցաւում էր նոյն կորուսեալ անձի վերայ։

Բայց ըստորում Երեմիայի խօսքին համաձայն ոչ կրակն՝ այրելը կարող է մոռանալ, ոչ հնոտիկը՝ սևութիւնը, և ոչ ինձը՝ խայտուցը [1]. այսպէս էլ ոչ չարը՝ իւր չարութիւնը. որովհետև գիշեր ժամանակ բանդը ծակելով՝ փախաւ գնաց Յունաց աշխարհը և հասաւ Կոստանդնուպոլիս թագաւորական քաղաքը։ Նա չարախօսեց մեր հա-

* Տաք երկաթով այրուածի նշան։ 1, Երեմ. ԺԳ. 23։

ւատի մասին և խնդրեց մկրտուիլ Յունաց դաւանութեան համաձայն։ Իսկ Յոյները իրանց խելացութեամբ տեղեկանալով գործի հանգամանքներին՝ յանձն չառան, այլ ասացին, թէ.—«Ում որ Հայերը մերժել և անարգել են հաւատի համար, մենք չենք կարող ընդունել»։ Եւ երբ նրան այս—չյաջողեցաւ, եկաւ, գնաց Ապահունեաց գաւառի սառանայի բնակարան դարձած, Ատուածուրաց ժողովը և գազանների որջը, որ Թոնդրակ 126) է կոչւում. այնտեղ մի առժամանակ ծածուկ բոյն դրեց. բայց ասում են, թէ նրանք էլ իւր ունեցած չափից դուրս պղծութեան պատճառով չընդունեցին նրան. վասն որոյ գալով Խլաթի 127) լեառը, այնտեղ գտնելով իւր մերձաւորներից ոմանց, որոնք բնակւում էին ագարակներում և բացօթեայ տեղերում, իջևանում է նրանց մօտ։ Եւ այնտեղ իւր օրերն անցկացնելով, գնում է Մուհարկին կոչուած քաղաքը և չարաչար մեռնում։ Սուրբ Գրքի կանոններին համաձայն չը վարուելու և քրիստոնեաներին չը միաբանելու պատճառով, պէտք է ուրանալ նրան։ Վասն որոյ իշու նման մեռաւ, և գէշի նման թաղուեցաւ տխուր անուն թողնելով իւր յետևից. ըստորում ո՞վ որ լսէ այս պատմութիւնը, պէտք է անիծէ նրան։

ԻԳ. ԳԼՈՒԽ։

Թէ ինչպէս Մանանաղա սահմաններում քորքոխուեցաւ այն մոլորուելու հրդեհը։

Կունծիկ կոչուած շնանուն մի աբեղայ բնակւում էր Ների 128) անուանուած բերդաքաղաքի մօտ, որ այժմ էլ նոյն ագարակը նրա անունովն են կոչում. սա ծերացած լինելով՝ ունէր իւր մէջ այն պղծութեան խմորը։ Նա սովորել էր մի շնաբարոյ—անառակ աբեղայից, որ իւր մասին հռչակում էր թէ, Ադուաններից է. բայց նա սատանայի անդրանիկն էր ու նրա (Յակոբոսի) խորհուրդների շտեմարանը, ուստի միշտ բորբոքուած դժոխքի կրակի ծուխը նրա բերանից էր դուրս գալիս, որից շատերը դեղ ընդունելով՝ սատակեցան։ Այս Կունծիկը սատանայի ժիր մշակ դառնալով՝ որսաց Հրանոյշ անունով մի կնոջ, որը նշանաւոր ու պատուելի ազգից էր, կալուածների տէր ու նրան էլ սահմանակից։ Երբ որ Հրանոյշը նրա մահաբեր ազանդովը վարակուեցաւ, չը բաւականացաւ իւր կորուստովը, այլ շատերին իւր մոլորութեանն օգնական պատրաստեց։ Մանաւանդ իւր տոհմակից Ախնի և Կամարայ կոչուած երկու նշանաւոր

կանանցը, որոնք արդարև սատանայի կամակատարներ էին։ Սրանք երկուսն էլ հարազատ քոյրեր էին։ Սրանք իրանց պոռնկական մոլի կեանքովը, ինչպէս Թոնգրակեցիների խմբին յատուկ է, և կախարդական արուեստովը սատանայի վարդապետ դարձան, որոնց մէջ ամենայն չարութեանց հայրը զօրացաւ։ Նրանք—«Սրեցին իրանց լեզուները սուսերի նման, Սաղմոսի խօսքին համաձայն, և իրանց աղեղները լարեցին դէպի վատ գործերը [1]», սրտով մաքուրներին վնասելու համար. նրանք սաստիկ կերպով մեռցրին շատերի անմեղ հոգիքը։ Եւ որովհետև Ախնին ու Կամարան հայրենի ժառանգութիւնից երկու գիւղ ունէին, արին իրանց զզուելի մոլութեանն ու մոլորութեանը բնակարան և նրանց մէջ բոյն դնելով՝ սաստիկ կերպով թափեցին իրանց մաղձը. և իրանց շուրջը բնակողներին նոյն մոլութեամբ ու մոլորութեամբ խմորելով՝ կորստեան պատճառ դարձան։ Սրա մասին գրեց Մովսէսը, թէ.— «Վիշապների բարկութիւնը նրանց գինին է. իժերի սրտմտութիւնը անհնար է բժշկել [2]»։

Վրվէռ անունով մի իշխան, որ այս կախարդ կանանց եղբայրն էր, սրանց կամքը կատարող դարձաւ։ Նա յառաջ ճշմարիտ հաւատի մէջ հաստատ լինելով, բարեպաշտական հանդէս-

1, Սաղմ. ԿԳ. 4. 2, Բ. Օր. ԼԲ. 33.

ներում յառաջադէմ էր. մինչև որ կրօնաւորների վանք շինեց իւր ժառանգութեան մէջ, ճգնաւորներ ժողովեց այնտեղ և ընդարձակ սահմաններովն անկարօտ էր պահում նրանց։ Կրօնաւորների առաջնորդի անունն էր Անդրէաս, որ սաստիկ հռչակուած էր կրօնաւորական ճգնութեանց մէջ։ Ամենայն տարի գալիս էր այս իշխանը սրանց մօտ, մինչև մեծ Զատկի օրերը հանդիսակից էր լինում նրանց. և ուրիշ շատ բարի գործեր էլ էր ցոյց տալիս սրանց սպասաւորութեան համար. մանաւանդ աղքատների խնամարկութեան և քահանաների հնազանդութեան մէջ շատերիցը գերազանցում։ Զարը սրան թակարթեց այս կանանց ձեռքով, որոնք անխարտիր խառնակուեցան Վրվէռի հետ զգուելի սխտով, մտքերը չբերելով ազգականութիւնը։ Այս երկու գիւղերն են նրանց կորստեան որջը։ Սա ինքն է Սոզոմոնի ասած ազրուկի չորրորդ դուռը. սրա համար է պատուիրում Աստուածային Առաքեալը.—«Մի, ասում է, ցանկութեան սխտերում ապականուիք, որպէս միւս հեթանոսները, որոնք չեն ճանաչում Աստուն[1].»։ Տես ինչպէս է գրում նրա համար այն երջանիկ աստուածային Սոզոմոնը.—«Որդեակ, ասում է, պահիր քեզ օտար կանանց խառնակութիւնից, որովհետև անմիտ

1, Ա. Թեսաղոն. Դ. 5։

մանուկներից ում որ գտնում է, քաղցը խօսքերով հաւանեցնում է մնալ իրա մօտ. ըստորում պառնիկ կնոջ շրթունքները մեղր են արտադրում, որ մի կարճ ժամանակ հետևողների բերանը քաղցրացնում է, բայց յետոյ լեղուց աւելի դառն է լինում. որովհետև իւր սիրահարներին չուանով կապուած շան նման քարշում, և անասունի նման մորթելու տանում, և այծեամի նման նետով վիրաւորելով նրա լերդակողմը, չի կարող բժշկուել նրանից, մինչև նրան տանի գժոխքը. ըստորում գժոխքի յատակն է նրա տունը»:

Այն ողբալի Վրվէռը սրանցով թակարթուած, թողեց պարկեշտութիւնը, հեռացաւ հաւատից, թշնամի դարձաւ Աստծուն և նրա սրբերին: Թողեց այն Տիրոջը, որ սուրբ աւազանովն իրան ծնաւ. մոռացաւ Աստծուն, որ իւր Մարմնովն ու Արիւնովը կերակրեց իրան: Տանիցը դուրս եկաւ, պատուիրը զրկուեց, Աստուածեղէն ուխտը մոռացաւ, հեռացաւ ճգնաւորական կարգերի մասնակցութիւնից: Այն տեղը, որ երբեմն կրօնաւորների բնակարան էր, և որ մեծամեծ ծախսով ու աշխատութեամբ էր շինել, ուր սաղմոս ասողների և պաշտօնեաների խմբերը քաղցրաձայն երգերով հրեշտակների ձայնակցութեամբ Աստծուն էին օրհնում, այսօր լռել են: Աւերակ

ու անբնակ է նոյն տեղը։ Եւ սրանից յետոյ ինչ արաւ։ Այն թշուառականը գնաց միաբանեցաւ նոյն չար սատանայ կանանց հետ, և այն գիւղերը, որոնց մասին փոքր ինչ յառաջ յիշեցինք, և որոնք իրանց սեպհական տեղերն էին, ու առնուանում էին Կաշէ և Աղիւսոյ, նրանց բոլոր բնակիչներին իրանց հետ միաբանեցրին և ապա գիւղական կատաղութեամբ գայրանալով, այն եկեղեցիները, որոնք իրանց այդ օձաբնակ տեղերում վաղուց շինուած էին, աւերեցին։ Եւ գիւղերում, ուր յարմար ժամանակ էր լինում իրանց, մեր փրկութեան նշանը և Տէրունական յաղթութեան գէնքը (Քրիստոսի սուրբ խաչը), որով մահի յաղթութիւնը ոչնչացաւ, և կամակոր թշնամու վճիռները վերացան մեզանից, որոնց մէջ երանելի Պօղոս Առաքեալը արարածները թաղնելով նրա գօրութեամբն էր պարծենում.— «Թող չլինի ինձ պարծենալ, ասում է, բայց միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչովը [1].» իրանց հօրը—սատանայի վրէժխնդիր լինելով անամօթաբար ջարդում էին։ Բայց որովհետև խաչն յիշեցի, պատմեմ և մի ուրիշ զարմանալի զրոյց, որ բոլոր լսողներին սարսափեցնում է։

Պատիր լեռան Հատուածներում, որ այժմ Գայլաթագուտ է կոչւում, մեր պապերի մի գիւղաքաղաք

1, Գալատ. Զ. 14։

կար Բազմաղբիւր կոչուած 129), որտեղ աստուածային սուրբ նշանը—Խաչը փառաւոր գեղեցկութեամբ կանգնել էին, այնպէս որ, գիւղի անունն էլ փոխելով՝ Խաչ են անուանում մինչև այսօր։ Պենտէկոստէի տօնի օրը, որ Նոր Կիւրակէ* է կոչւում, սատանայի կամքը կատարող մշակները գիշեր ժամանակ գալով, մրճով Խաչի գլուխը ջարդեցին, գետին ձգին և իրանք ծածկաբար գնալով մատն իրանց օձաբնակ բնակարանները. այդ գործի մասին վերևից երկինքն ապշեցաւ և բոլոր երկիրը զարհուրելով դողաց։ Արուսեակն այս գործը ողբաց և սգաց մթին երեկոն։

Այս այսպէս լինելուց յետոյ՝ սովորական կարգին համաձայն՝ հաւատքսին երեցը վեր կենալով, եկաւ Խաչի առաջը, մեծ կիւրակէի պաշտօնը կատարելու. և նոյն սարսափելի գործը տեսնելով, ձեռներն օձիքը ձգած՝ հանդերձը պատառելով, բարձրաձայն աղաղակով նոյն տեղի բնակիչներին սրտագող հաւաքեց նոյն ժամին, նոյնը տեսնելու համար։ Նրանք՝ տեսնելով այն սարսափելի մեծ գործը, լաց լինելով, կուրծքերին զարկելով յետ դարձան։ Բոլոր այր և կին, ծեր

* Հայկական եկեղեցին Պենտէկոստէի կիւրակէին «Նոր Կիւրակէ» չէ ասում. «Նոր կիւրակէն» Քրիստոսի յարութեան երկրորդ կիւրակին է. երևի ընդօրինակողներից յաւելացած սխալ է։

և ազգ միաձայն ազրում էին։ Երբ նրանք այս տագնապի մէջն էին, յանկարծ ծագեց նրանց մէջ գիտութիւն՝ Աստծու անճառելի իմաստութեամբ։ Այն գիշերը, երբ այդ գործը կատարուեցաւ, յանկարծ ձիւն գալով՝ երկրի երեսն սպիտակացրել էր. նրանով անօրէնների հետքը բռնած՝ տարան նրանց բնակարանը հասցրին։ Այդ ժամանակ յայտնեցին Սամուէլ երանելի Հայրապետին. նա լսելով՝ մեծ բազմութեամբ այնտեղ գնաց. և զաւառի եպիսկոպոսներին, քահանաներին և մեծամեծներին իւր մօտը հաւաքած՝ գնաց այն անօրէնների բնակարաններն այրեց, աւերեց։ Նզովեց նրանց բոլոր ունեցածները, ինչպէս Յեսուն Երիքով քաղաքինը, որ ոչ մէկը չը վստահանայ մի բան վեր առնել։ Նրանցից վեց մարդու, որոնց մասին ասում էին, որ այդ պիղծ ու չար կրօնի վարդապետներն են, բռնելով՝ գալիս է բազմութեամբ Զերմա 130) կոչուած գիւղաքաղաքը և հրամայում է ազուէսանման խարանով նրանց դէմքը դրոշմել, որ անջնջելի նշան լինի, որպէս զի ամենքը պարզապէս ճանաչեն նրանց, որ չը լինի թէ մէկը ոգիտաբար յարաբերութիւն ունենայ նրանց հետ, այլ չար գազանի նման հալածական լինին ամեն մարդուց։ Սրանից յետոյ իրան գործակից եղած ժողովուր-

գին օրհնելով խաղաղութեամբ ճանապարհ է ձգում։

Իսկ ամառը գալիս, թագաւորից գառաւոր է ուղարկւում այն աշխարհի բարեկարգութեան համար, Եղիա անունով մէկը. Եկեղեաց գառաւորը հասնելիս՝ նրան դիմաւորում է ամենաչար Վրվէռը, և բողոքում Սամուէլ պատուական Հայրապետի ու նրա հետ եղած եպիսկոպոսների վերայ, թէ.—«Իմ տունն աւերեցին և գիւղն այրելով կործանեցին»։ Շատ գանձերի և կարգութեան պարտքեր բարդում էր նրանց վերայ։ Այդ երբ որ լսեց գառաւորը, առաւել ևս բարկութեամբ բորբոքուած, զինուորներ ուղարկեց երանելի եպիսկոպոսներին շուտափոյթ բերել իւր մօտ. իսկ նոյն զինուորների գալու ժամանակ՝ Հայրապետը գրեց հրամարտակներ եկեղեցու վիճակաւորներին, երեցներին և անապատականներին, որ անյապաղ իւր մօտը ժողովին։ Լուրը հասնելուն պէս, կարծես, Աստծու տեսչութիւնից է յայտնւում ամենին, առանց ուշանալու՝ մարդկանց բազմութիւնը մի տեղ հաւաքուեցաւ. ոչ միայն քահանաների, այլ և աշխարհականների բազմութիւն, որոնց քանակութեան թիւը գրի չեմ առնում։ Նոյն բազմութիւնը հասաւ Եփրատ գետի եզերը, որտեղ Մանանաղին նրան է խառնւում։ Այդ միջոցում անձրևից և անձրևի

յորդութիւնից Եփրատէսը բարձրացած և մինչև ափերը լիքը լցուած, գալիս էր։ Բայց զինուորները նաև բերելով, շտապեցնում էին անցնել Սամուէլ ծերունի Հայրապետին և նրա եղբօրորդի Թէոդորոսին զետի միւս կողմը գտնուած Կոմիէր կոչուած գիւղաքաղաքը, որովհետև նոյն իսկ դատաւորն այնտեղ էր։ Իսկ ժողովուրդը բռնելով եպիսկոպոսներին, չը տուին զինուորների ձեռքը. բայց զինուորներն ասում են, առաջ սրանց անցկացնենք, ապա ժողովուրդին։ Այս խօսքերով համոզելով ժողովուրդին, եպիսկոպոսներին նաւով անցկացրին միւս կողմը. և նաև արգելելով դատաւորն եպիսկոպոսներին բանդը դրեց։ Ժողովուրդը հասկացաւ նրանց խորամանկութիւնը, որովհետև չը դարձրին նաւը իրանց մօտ, ինչպէս խոստացան. ուստի բարձր ձայնով և յորդորական խօսքերով քաջալերեցին միմեանց՝ մեռնելով ջուրն անցնել, քան թէ դէպի իրանց առաջնորդներն անարգանքի խօսքեր լսել։ Որովհետև օրը մթնել էր և արեգակը ճառագայթներն իւր մէջը ծրարած, դէպի մայրն էր գառնում՝ համարձակութիւն տալով ասողների լոյսին, քահանաների դասը յառաջ գալով, ոչ թէ Խաչի խորհուրդով ջուրը բաժանեցին, այլ նոյն ինքն Տէրունական յաղթութեան նշանը ձեռներում բռնած և ուսերին վերցրած, հաստատուն հաւա-

ռով զարկին բարձրակոհակ ջրերի կոյտին, որի զօրութեամբ, ինչպէս անզուսպ ձին սանձով խեղճացած, ժողովուրդին անցնելու ճանապարհ տուեց, և այնքան բազմութիւնից ոչ մէկը չը մնասուեցաւ։ Նրանք երբ անցան, ամբողջ նոյն օրը Աստծուն շնորհակալութեան երգեր էին երգում, իրանց խմբին առաջնորդ ունենալով անարատ Մարիամը, որ սուրբ Եկեղեցին է. նրանք, թմբուկը ձեռներում բռնելով, այսինքն՝ Հաւատի ճշմարտութիւնը, ոչ թէ հերձուածողական վատթար մեղքերից յաղթուած—ճնշուած, այլ սուրբ Հոգու զօրութեամբ ու շնորհքով զօրացած՝ ուրախութեան երգերով պատրաստ, Դաւթի քնարի կնանատոցով բոլորին լսելի էին անում հետևեալը.—«Օրհնեցէք Տիրոջը, որ հրաշք գործեց[1].». և սրան հետևող խօսքերը։ Այս երգերով ամբողջ գիշերը լուսացրին Աստծուն աղօթելով։

Իսկ գառաւորը, երբ որ լսեց Աստծու անօրէնութիւնն ու սքանչելիքների հրաշքը, հասկացաւ որ, Տէրը այցելութիւն պէտք է անէ մեր ազգին։ Նա, սատանիկ զարմանքից երկիւղի ենթարկուած՝ յոյսը դնում է աղօթքի վերայ և Աստծուն՝ օգնականութեան համար աղաչում, որ չը լինի թէ, ասում է, չհասկանալով, Տէր, խոտորուիմ քո արդարութիւնից։ Եւ նոյն առաւօ-

1. Սաղմ. ՂԵ. 1.

ոը, երբ կիւրակէ էր, գնալով այն եպիսկոպոսարանը, որ Փրրիս է կոչւում, և ճշմարիտ դատաստան կամենալով, ժողով է կազմում ու ժողովի գլխաւորներին է յանձնում, որ դատեն ու վրէժխնդիր լինին։ Դատաւորները հրամայում են անարժան ու մեղաւոր Վրվէռին դալ արդարութեան առեանը։ Որովհետև մի կենդանի կայ, որին Սեպեան են կոչում, որի մասին ասում են, թէ որսորդներից ազատուելու համար ամեն գոյն ստանում է. նոյնպէս էլ նա. ճշմարտութեան զօրանալու ժամանակ, տեսաւ որ, չի կարող դէմ կենալ, ըստորում լոյսը ծագելիս՝ խաւարը կորչում է, և ճշմարտութիւնը յայտնուելիս՝ ստութիւնը. ապա ինչ է անում և ինչպիսի հնարք մտածում. խոստանում է Հռոմ լինել, և կաշառով գրաւելով այն եպիսկոպոսին, որի անունը Եպիսառատ էր, որդեգիր է դառնում նրան։ Եպիսկոպոսը, գալով ատենի առաջ, ազատում է ժողովականներին իւր պատուի համար իրան յանձնել Վրվէռին. դատաւորն էլ նոյնն էր կամենում, վասն զի անօրէն Վրվէռի եղբայրը իշխանական պատուով ու քաջութեամբ թագաւորի ընտրեալներից ու ծանօթներիցն էր, որից շատ էր քաշւում դատաւորը. ուստի և յանձնում է նրան Եպիսկոպոսի պահպանութեանը, ինչպէս և խնդրեց։ Իսկ նրա ընկերներից միւսներին, որոնց որ դատն,

սատիկ տանջանքով ու ծեծով չարչարելով հալածական արին, տներն աւերելով։ Ժողովն օրհնեց դատաւորին ու հանգիստ արտով ցրուեցաւ։

Բայց Աստծու դատաստանը շուտով հասաւ նրան. թէպէտ պատժից ազատուեց, այլ Աստծու ձեռից չը կարողացաւ ազատուիլ։ Որովհետև յանկարծակի խիստ ջերմախտով հիւանդացաւ Հերովդէսի 131) պէս, և ձեռի մատները չորացած՝ չէր կարողանում կերակուր ուտել, և շատ չարչարանքով կերած կերակուրն էլ չէր նպաստում մարմնին. ըստորում կերակրի մուտքը փակուած լինելով, կերածն էլ փսխում էր մինչև մեռնելու օրը. յետոյ էլ մարմինը գոդուիթեամբ ոչնչացաւ։ Բայց նա չ զղջաց և միտքը չ բերեց առաջին բարեպաշտութիւնը, այլ նոյն դիւական ազանդով վարուեց մինչև մեռաւ։ Նրա մարմնի տանջանքները միշտ մտածել էին տալիս դժոխքի յիշատակը, որի մէջ տանջուելու էր։

Սակայն Թոնդրակեցիների զազրալի գործը անվայել համարեցինք գրի առնել, որովհետև շատ ազատեղի է. և ըստորում ամեն մարդ պընդակազմ չէ ականջներով, շատ մեղքերի յիշելը լսողներին գրգռում է և նոյն իսկ գործել է տալիս, սրա համար ես հրաժարուեցայ նրանից։ Այլ ինչ որ յայտնի է նրանցում և մենք կարող ենք ասել, սրանք են։ Եկեղեցին և նրա կանոնները

բնաւ չէին ընդունում. ոչ մկրտութիւնը, ոչ պատարագի մեծ ու ահաւոր խորհուրդը, ոչ խաչ և ոչ պահոց օրէնք։ Բայց մենք սուրբ Երրորդութեան ճշմարիտ հաւատացողներս պինդ պահենք հաստատուն յոյսի խոստովանութիւնը, որ սովորեցանք սուրբ Հայրերից. և նրանց Աստուածուրաց ժողովից երեսներս յետ դարձնենք նրանց վերայ անէծք թափելով։

ԻԴ. ԳԼՈՒԽ։

Աշխարհաշէջ Անի քաղաքի սրով պատուումը։

Այս բոլորից յետոյ մարդկան ազգը շատ գեղերանքների ու ցնորքների մէջ ընկաւ. ցոփութեամբ և մաքերի ամբարտաւանութեամբ իրանց գործերի վերայ յոյսերը դրին. բարձրահասակ ու քաջ հսկաներին, որոնց հետ կռուել ու դիմադրել չէր կարելի, իրանց համար Աստուածորդի անուանեցին։ Ամանք աշտարակով ամրացած՝ անմատչելի համարելով բարձրութիւնը, չը կամեցան Աստծու բարութեան բաժակիցը ճաշակել, ինչպէս այն բազմաշխատ ու հեշտ կործանուող առաջին շինուածը շինել ցանկացողները. այնպէս էլ Երիքով քաղաքի բնակիչները՝ աշտարակների ամրութեան պատճառով չը կարծեցին,

թէ իրանք էլ Քանանացի 132) են, թէ իրանց էլ տիրում է Տիրոջ աջը, կամ իրանց էլ կը մօտենայ Ամենակալի սուրը։ Որովհետև Տէրն է, որ շինում ու քանդում է. բերդերը շարժեցնում և բարձր աշտարակները կործանում. ըստորում և այն աշտարակը, որ Լիբանանի կուրծքի վերայ էր, որը Դաւիթը շինեց և սուսերով ու վահանով ամրացրեց Դամասկոսի դէմ, Սողոմոնին հակառակող Եդերին գիմագիր ու արգելք չեղաւ. որովհետև մարդու սրբութիւնն է աշտարակը կամ բերդը և Աստուածպաշտութեան գործերը՝ ընտիր պարիսպ։

Այժմ դառնանք կրկին նոյն պատմութեանը, յառաջ ասածին համաձայն. թող նրանք փոքր չը համարեն մեղքերը, որոնք չեն զղջում ու ապաշխարում, կամ հեռու համարեն մերձակայ ու սահմանակիցների պատիժը, որ մեղքին համաձայն է հանդիպում. թող ողբայ նոճին մայր ծառի համար, թող ողբայ գժնիկը ձիթենու համար։

Որովհետև չէ թէ բոլորն էլ, որոնց վերայ աշտարակն ընկաւ, մահի արժանի էին Աստծու հրամանին համաձայն, այլ մերձակաների և ուրիշների մեղքերը հասկանալու, ու հեռաւորներին խրատելու և զգուշացնելու համար։ Ըստորում չէ թէ շատ վաղ կատարուած, կամ շատ ժամանակ մէջ տեղից անցանելով՝ ազատեց այն

ազգաների անցքերը, որոնք Արծն քաղաքին հանդիպեցան. վասն զի շատերն աչքով տեսան և ականջով լսելու չը կարօտացան. թէպէտ այն աշխարհն ու քաղաքներն ազատուեցան այդ ասպատակներից, բայց իրանց մտքերում անհնազանդեցան և ամրութեամբն ապստամբեցան, չէ թէ մարդու, այլ Աստծու դէմ, որ բարձր աշտարակները ոտի տակ է տալիս և ամուր քաղաքները հողակոյտ դարձնում: Զը հասկացան և մտքերը չբերին Ծիրոջ ահը և նրանից գալիք պատիժը. բարկութեան մրուրը, որ նրանից իջնում է մեղաւորներին պատժելու համար, վերջացած համարեցին. մանաւանդ Անիի և նրան շրջապատող ամրութիւնների բնակիչներն ամբարտաւանութեան մէջ աւելի վարժուած՝ երկրնքի դէմ էին կռւում, մինչև շարժեց Աստուած Պարսից թագաւորին իրա փոխանակ, տեսնելու, թէ ինչ է կատարուում նրանում: Նա Հայոց երկրում պատերազմեց իւր աշխարհն ընդարձակելու և ուրիշի թագաւորութեան սահմանին տիրելու համար: Այդ եղաւ մեր թուականի հինգ հարիւր տասն երեք տարում:

Եկաւ հասաւ թագաւորը սպառազինուած անթիւ զօրքերով, և մտնելով մեր աշխարհը սարսափեցրեց հեռաւորներին ու մերձաւորներին. ոտի տակ առաւ ու տակն ու վրայ արաւ շատ

աշխարհները, մինչև հասաւ Անի քաղաքը, որ իւր մեղքերի չափը լցրել էր։ Իւր վրանը զարկեց քաղաքի հանդէպ և բանակները տարածեց երկրի լայնութեամբ. աշխատում, հնար էր գործ դնում, որ երկաթէ զուռն ու պղնձէ նիգերը դուրս հանէ, որ իւր թագաւորութեանն արգելք էր լինում. քաղաքի ամրութեան պատճառով յուսակտուր եղած, թէպէտ կռիւը սաստկացնում էր, բայց և ուզում էր հեռանալ։ Եւ չը հասկացաւ, թէ Տէրը ձգեց իշխանների ու պահապանների մէջ երկպառակութիւն և անմիաբանութիւն, շփոթութիւն ու բաժանում. նրանք թողնելով պատերազմի գործը, փախան, և երկիւղիցը վախեցած, տակնուվրայ եղած, ամեն մէկը սարսափով էր պաշարուած. ոչ ոք իւր ազգականներին, կամ կարևոր բարեկամներին չը նայեց։ Զինուորուած գօրքերը, որոնք դրսից կռիւ էին մղում, տեսնելով, որ իրանց հանդէպը պարսպի վերայից ճանապարհ են բաց անում, ծովի ալիքների կոյտերի նման թափուեցան քաղաքի մէջ, և պարսկական սրով ոչ մէկին չէին խնայում։ Իսկ կին և այր մարդկանց բազմութիւնը թագաւորի պալատը դիմեց, որ իրը թէ կարողանան ազատուիլ, միւսները փախան ներքին բերդ կոչուած ամուրը։ Բայց թշնամիները, երբ իմացան թէ քաղաքում ամրացողներն անպատ-

բաստ են, ոչ պատերազմող մարդ, ոչ կերակուր կամ խմելիք կայ, շուտով շրջապատելով սարսափեցրին, մինչև բռնի դուրս հանին։

Այնտեղ տեսնելու էր ամեն մի մարդու վիշտն ու տագնապը. որովհետև մայրերի գրկից յափշտակում էին մանուկներն ու անխիղճ կերպով քարի զարկում և մայրերն արիւնով ու արտասուքով մանուկներին էին թրջում. հօրն ու որդուն միասին էին սպանում. ծերերն ու երիտասարդները, քահանաներն ու սարկաւագները միանման սրի կերակուր դարձան. քաղաքը ծայրէ ի ծայր լցուեց. այնպէս որ, անցուդարձը սպանուածների դիակների վերայից էր։ Այն մեծ ջուրը, որ քաղաքի մօտիցն էր անցնում, սպանուածների բազմութիւնից և անթիւ դիակներից՝ արիւնով էր ներկուում. դիակները կերակուր դարձան ընտանի և վայրենի գազաններին. որովհետև մարդ չը կար, որ թաղէր ու հարկաւոր հողով ծածկէր սպանուածներին։ Այլև նրանում կատարուած անիրաւութեան շատութիւնից կործանուեցան բարձրաշէն ու փառաւոր ապարանքները և բոլոր շինութիւնները հողաբլուրի նըմանուեցան. այն վաշխն ու նենգութիւնը, որ նրանում կար, վերջացաւ։

Անիրաւ քաղաքների բաժինն այս է, որոնք շինուում են օտարների արիւնով, հարստանում

աղքատների քրտինքով, ամրացնում իրանց տներ-
ը վաշխով ու անիրաւութեամբ, և իրանք իրանց
գուրթը փակելով դէպի աղքատներն ու տնանկնե-
ը՝ միայն հեշտութեան և փափկութեան են
ապասում, պիղծ գործերից չեն հեռանում, այլ
միայն թմրած են այն ցանկութիւններով, որ
նրանց կապկապել պաշարել է։ Աւրեմն ինչ կը
պատահի այդպիսիներին՝ Տիրոջ բարկութիւնը
գալու ժամանակ. կապառուին և կոչնչանան ինչ-
պէս մոմը կրակի գօրութիւնից. թէ թագաւոր
լինի, թէ իշխան, ինչպէս հասկացաք գրածից։
Բայց Պարսից թագաւորը, շատ գաւառների տի-
րելով, անթիւ աւարով դարձաւ իւր աշխարհը։

ԻԵ. ԳԼՈՒԽ։

Յառաջ այն Ներքուրը, որ Պարսից Ներքուրից յերբա-
խլուեց։

Այժմ խելք չը հասնելու գործողութիւններ
պէտք չէ պատմել կամ գրի առնել, որի մասին
ոչ մենք ենք ուրիշին նեղութիւն տուել, ոչ
մէկը մեզանից պահանջել և մենք էլ չենք կա-
րող գրել. այս պատճառով շատ հարկաւոր պատ-
մութիւններ բաց թողինք, ուրիշ գիտնական և
ձեռնհաս մարդկանց թողնելով. գուցէ մէկը

պահանջէ նրանցից։ Սրանով կարողութիւն ունեցողների եռանդն եմ շարժում։ Բայց մեծ վնաս համարեցինք այն երկու թագաւորների պատերազմի գործերը զանցառութեան տալ, այլ կարճ խօսքերով մեծ գործերը պէտք է լրացնեմ։

Դիոժէ թագաւորը, որ թագաւորների կարգով մեծն Կոստանդիանոսից յետոյ վաթսունեորդն էր, փոքր ինչ աւելի կամ պակաս, երբ որ տեսաւ, թէ Պարսից թագաւորն իւր թագաւորութիւնից շատ երկիրներ խլեց, Յունաց կուսակալներին փախստական արաւ, ու ինքը մեծ գերութեամբ և աւարով դարձաւ իւր աշխարհը, տասն տարուց յետոյ եռանդով ու կատարեալ քաջութեամբ յանձն առաւ պատերազմել, որ չլինի թէ երկչոտ ու վատ երևի և իրանից յետոյ վատ անուն թողնի։ Նա խրոխտալով և մեծ բարկութեամբ անցաւ Ծովից, ինչպէս ցամաքի վերայից, և բանակ գնելով Բիւթանացւոց 133) աշխարհում, անհուն բազմութիւն իւր վերայ հաւաքեց։ Նա դեռ ունէր լայն ու ընդարձակ թագաւորութեան սահման. Փիւնիկեցւոց 134) հովիտներից սկսած՝ ուր գտնւում է մեծ Անտիոքը 135), մինչև Վան բերդը, և Ռշտունեաց բոլոր երկիրը Հերի հանդէպ։ Երբ որ Դիոժէն տեսաւ զօրքերի այնքան բազմութիւն մի տեղում հաւաքուած, ամբարտաւանութեամբ գոռոզա-

ցած՝ ասաց իւր մտքում, որ երկրածին թագաւորները չեն կարող յաղթել իրան. և մարգարէի խօսքը միտքը չբերեց, թէ զօրքերի բազմութիւնը չէ կարող թագաւորին ազատել և ոչ հսկային էլ՝ իւր զօրութիւնը. այլ Ամենակալի աջն ու բազուկը։

Այժմ մի անվայել խորհուրդ միտքը բերեց. զօրապետների ձեռքով շատ զօրքեր ուրիշ ճանապարհով ուղարկեց, և ինքը մեծ բանակով՝ ճանապարհ բռնած, եկաւ դէպի արևելք ու հասաւ Թէոդուպոլիս մեծ քաղաքը և այնտեղ կազմեց ձիաւոր զօրքը։ Խիստ վատ է մեղքը, և գործողները զրկւում են Աստուածային իմաստութիւնից ու որդեգրութիւնից. բայց առաւել վատ է ամբարտաւանութիւնը, որով վարւում են իշխաններն ու թագաւորները և առաջին ոչնչացած ամբարտաւանների յիշատակովը չեն խրատւում։ Որովհետև ամբարտաւանութիւնը ոչնչացնում է այն ամենին, որոնք ունին այդ վատ սխալը. ըստորում մի ուրիշը չէ ամբարտաւանին գիմագրողը՝ այլ Աստուած, ինչպէս Առակողն ասում է։ Ուստի՝ նա զօրքերին թոյլ չը տուեց հանգստանալ, մինչև որ միւս բազմութիւնները գային ժողովուէին իրանց մօտ. միմեանց խրախուսէին դէպի քաջութիւն ու թշնամիներին սարսափեցնող մեծ բանակ դառնային. այլ միայն իրան մարդկանցով

կամեցաւ պատերազմի յաղթութիւնը տանել։ Շուտով Մանազկերտ գաւառի սահմանների մօտիցը անցնելով՝ հասաւ Պարսից թագաւորի բանակ դրած տեղը. այն տեղ Պարսից զօրքի դէմ իւր թագաւորական վրանը զարկեց. իւր շուրջն ամրացրեց ու պատերազմի օրը նշանակեց։

Պարսից թագաւորն երկիւղիցը խորամանկութեամբ էր կամենում կռուել, որ չը լինի թէ Յունաց ցրուած զօրքերը գալով՝ թագաւորի ոյժը զօրացնեն և կռիւը իւր համար անհնարին լինի։ Լաւ էր համարում դէմ կենալ երկու մասին, քան թէ երեքին։ Շտապեցրեց, մինչև որ թագաւորն ակամայ դուրս բերեց Յունական զօրքը՝ կռուելու Պարսից պատրաստ զօրքի դէմ։ Եւ երբ խրոխտալով իրար վրայ յարձակուեցան, և պատերազմական կարգով կռուում էին իրար հետ ու դեռ չէր երևում և ոչ մէկ գնդի յաղթութիւնը, շուտով մի մեծ գունդ, որոնց մէջ Աստուածպաշտութիւն չը կար, Յունաց թագաւորից ապստամբելով՝ թշնամիների կողմն անցաւ։ Վասն որոյ շատ զօրքեր կոտորուեցան. այնուհետև թուլութեամբ էին կռուում և ոչ քաջութեամբ։ Պարսիկները ոյժ առնելով՝ քաջ ու անյաղթելի դարձան։ Բայց Յունաց թագաւորն անտեղեակ լինելով՝ բարկութեամբ լցուեց Հայոց զօրքի ու ազգի դէմ, և խէթ աչքով էր նայում նրանց։ Բայց

երբ տեսաւ Հայերի հաւատարմութեամբ կռուելը և քաջ մարդկանց նահատակուելը, որոնք չէին վախենում Պարսից աղեղնաւորներից, այլ քաջութեամբ պատերազմի դէմը կանգնած՝ թիկունք չէին դարձնում, ապա թագաւորը չափից դուրս սէր ցոյց տալով՝ չը տեսնուած պարգևներ էր խոստանում Հայերին։ Թէպէտ շատերը թագաւորի հաւատարիմ ծառայութիւնից հեռացան, բայց Հայերը հաւատարմութեամբ մահը յանձն առան, որ մահից յետոյ էլ հաւատարիմ քաջութեան բարի անուն թողնին։

Այնտեղից, ուր նստած էր թագաւորը, վեր նայելով դէպի թշնամիները, տեսաւ, որ իւր զօրքերիցն ոմանք վախեցած փախչում են, իսկոյն կատաղեալ գինուորուած գինուորի հանդերձով, կայծակի նման հասաւ պատերազմի դաշտը, և Պարսից քաջ մարդկանցից շատերի դիակները գլորեց և նոյն զօրքերին սաստիկ սարսափեցրեց։ Միայն նա չէր հասկանում, Աստծու զօրքերի գօրավարը իւր հետ չէ, որ երևեցաւ Յեսուին ու յաղթութիւն տուեց։ Չը գնաց Տէրը մեր զօրքերի հետ զէնքով ու վահանով. թշնամիների դէմ սուր չը բարձրացրեց և նրանց չարգելեց։ Ոչ զօրութեանց Տէրը յայտնուեց և ոչ յաղթութեան կամ փրկութեան յոյս եղաւ։ Այլ իւր զօրութիւնը մեզանից հեռացրեց և մատ-

նեց մեր թշնամիների ձեռը, մեր դրացիներին նախատինք լինելու համար։ Ոչխարի նման զոհելու տուեց. մեր ազգները փշրուեցան, մեր գէնքերը ջարդուեցան, մեր գօրքերը տկարացան ու թուլացան. որովհետև Տէրը վերացրեց իւր զօրութիւնն ու քաջութեան հոգին մեր զօրականներից և իշխաններից. սուրն ու այժը առաւ նրանցից և տուեց թշնամիներին, իրանց անառակ գործերի համար։

Ուստի՝ այն աշխարհակալին ու մեծ իշխանութեան տիրոջը մի վախկոտ, յանցաւոր ստրուկի նման՝ ձերբակալելով Պարսից թագաւորի առաջը կանգնեցրին. բայց Աստուած, որ վիրաւորում և բժշկում է, որի մարդասիրութեան քաղցրութիւնը անսահման է, բոլորովին վայր չի ձգում նրան, ում որ խրատում է, այլ մի քիչ տանջելուց յետոյ՝ ներում է, որ մենք մեր տկարութիւնը ճանաչենք, խնայեց ու պատուեց թագաւորին. Պարսից գազանամիտ թագաւորի սիրտը սէր և խնամք ձգեց, որ նա վարուեցաւ առաջինի հետ, ինչպէս մի սիրելի եղբօր հետ. նա շատ հեշտութեամբ ու սիրով ճանապարհ ձգեց նրան։

Բայց ում որ Աստուած ազատեց այլազգի ձեռքից, իւր ազգայինները նենգութեամբ ու խայտառակութեամբ աչքերը կուրացրին, ապանին

և անջնջելի արիւն թափեցին այն թագաւորութեան վերայ։ Այնուհետև վերացաւ զօրութիւնն իշխաններից և զինուորներից. այդ թագաւորութիւնն այլ ևս յաղթութիւն չը տարաւ. իշխանները նենգութեամբ ու նախանձով էին իրար հետ և գառաստանների արդարութիւնը վերացրին. միայն աշխարհն էին աւերում և ոչ թէ փրկում։ Մինչև որ խստութեամբ բարկացաւ Տէրը և շատ ազգեր ուղարկեց նրանցից վրէժ առնելու համար. Լուսնալեռներից 136) և Հնդկաստանի Հիւսիսային կողմից հոսող մեծ գետից սկսած՝ այլալեզու և անգութ ազգերը մեծ հեղեղի նման թափուեցան մեր աշխարհի վերայ, բանակուեցան Ովկիանոս մեծ ծովի եզերքում, իրանց վրանները զարկելով մեծ քաղաքի հանդէպ, մեր բոլոր աշխարհը արիւնով ու դիակներով լցնելու և քրիստոնէական կրօնն ու կարգերը վերացնելու համար։

Բայց Պարսից Ալիսալան թագաւորը, երբ տեսաւ իւր ձեռով կատարուած այնքան յաղթութիւնը, և այն երեք պատերազմների յաջողութիւնը, որ թէպէտ առաջին անգամ Մանազկերտը չկարողացաւ առնել, բայց շատ աշխարհ սրով ու գերութեամբ տակնուվրայ արաւ. Անին սրով ու կրակով ամայի անապատ դարձրեց, այս պատճառով անվախ ու յանդուգն ձևով եկաւ

Յունաց թագաւորի դէմ։ Նա ուխտեց իւր մրքումը, որ եթէ բռնէ նրան, սիրով ու պատուով ճանապարհ ձգէ դէպի իւր թագաւորութիւնը. և երդումով այդ ուխտը հաստատեց, որ հաշտութիւն լինի Պարսից և Յունաց թագաւորութեան մէջ։ Բայց երբ որ բացճակատ գտնուեցաւ այս պատերազմում, ինչ որ ցանկանում էր կատարուեցաւ, ումից որ դողում և զարհուրում էր կապանքով իւր առաջը ոտի վերայ կանգնած տեսաւ իւր ծառաներից մէկի նման, այն ժամանակ միտը բերեց Աստծու հետ ունեցած իւր ուխտը, վեր կենալով՝ նստացրեց նրան իւր աջ կողմը. հաւատարիմ բարեկամի նման պատուեց նրան և ասաց, թէ այսուհետև չը պէտք է լինի իմ և քո մէջ խռովութիւն. այլ հանգիստ սրտով գաս քո թագաւորութիւնը կունենաս և մենք պարսկական տէրութիւնը։ Բայց ինչ որ պատերազմով առայ, ինձ պէտք է մնայ և այլ ևս չը պէտք է յարձակուինք ձեր աշխարհի վերայ. ու ճանապարհ ձգեց նրան մեծ պատուով։ Սրանից յետոյ՝ երբ տեսաւ, որ Յունաց թագաւորին իւր նախարարները բռնեցին, աչքերից զրկեցին և չարժանացաւ թագաւորութեանը, այլ չարչարանքով մեռաւ, այլայլուած ու բարկութեամբ լցուած՝ կամենում էր իւր սիրելու վրէժը լուծել, բայց մահը հասաւ նրան և գնաց

այս աշխարհի բոլոր երկրածիններին յետևից այնտեղ, ուր թագաւորներն ու ազգատները միասին են։

Գրիգոր Նիշատակոցոնի Բոլանդացուն։

Հարկաւոր համարեցի մեր սիրելի եղբայրներին գրով մատաբերել տալ ծանօթ գործողութիւնների տեղեկութիւնը, ինչպէս պատմութեանը սկզբում բացատրեցի Աստծու այն նախագիտութիւնն ու անբաւութիւնը, կարճ խօսքերով, թէ ինչպէս արագագնաց և աշխարհի վերայ փայլող գեղեցիկ ու լուսաւոր տարրը, (արեգակը) միջօրէի ժամանակ, երբ կատարելապէս լուսաւորում էր երկիրը, մեր բազմաժամանակեայ մեղքերի երեսից սատանի խաւարեցաւ, այնպէս որ, նրա ճառագայթների անխափան լոյսը չերևեցաւ։ Նա, որին մարդու աչքը չէր կարող նայել, աստղերից աւելի նուազ երևալով, միայն շուրջն էր երևում։ Նա իւր օրինակով ցոյց էր տալիս եկեղեցու փառաւոր ու պայծառ կարգերի անշքութեամբ ծածկուիլը և հոգւոց պայծառութեան ու առաքինութեան գործերի աղտեղումը և գագարումը։ Որովհետև նրանից յետոյ, ինչպէս յառաջուց ասացի, երբ որ Հայոց չորս հարիւր ութսուն երկու թուականն էր, մինչև այ-

ժրմ սրբութեան ուխտն ու եկեղեցիների կարգերը քայքայուելով խանգարուեցան. ոչ խաղաղութեան համբաւ լսեցինք, ոչ բարիքների աւետիք. ոչ էլ թագաւորների և իշխանների յաղթութեան մի արձան կանգնեցաւ։ Միայն այդ չէ. նաև կրօնաւորները չկարացան դէմ դնել պատերազմասէր հակառակորդին, այլ տկարացած, ուժից ընկած և անհամբերութեամբ մղորուած, թշնամիների ձեռի տակ ընկան. խռովութեամբ և բարկութեամբ երկիրը թափէթափ լցուեցաւ։ Որովհետև կամաց կամաց ճշմարիտ մարգարէութիւն դարձաւ արեգակի խաւարումը. ըստորում այնուհետև յարձակուեցան թշնամիները մեր վերայ, հագցրին մեզ սգի ու տրտմութեան հանդերձ, և ուրախութիւնը վերացաւ աշխարհից։

Այժմ, երբ տարակուսութեան այնպիսի ազէտներն ու աշխարհին արտասուք պատճառող վրշտերը տարածուեցան բոլոր երկրի վերայ, և բորբոքուեցաւ հարաւային կողմի կրակն ու այրեց բարձր բերդերը, և անմատչելի աշտարակները մոմի նման հալելով ոչնչացրեց. պակասելով նուազեցան թագաւորներն ու իշխանները և փրկութեան յոյսը վերացաւ մեզանից։ Ընդհանրապէս տարածուեցաւ մեր վերայ Տիրոջ բարկութիւնը. որովհետև քանդուեցան մեր սուրբ եկեղեցիները. սուրբ միւռոնով օծուած քարերը՝ այլազգ-

ների պալատների հիմքը ձգուեցան. սուրբ պաշտօնը մէջ տեղից վերացաւ, ծաղր ու նախատինք դարձանք հեթանոսներին. մաշուեցանք ու կորացանք և մեր մէջքերը գետնին կցուեցան. եղանք ցամաքած ոսկոռների նման, որոնց մէջ շնչի կամ կենդանութեան յոյս չը կայ. մեր հայրերի մեղքերը մեր վերայ թափուելով կատարուեցան, պահանջելով մեզանից մեր նախնիքների վրէժի պարտքերը. եօթնպատիկ պատիժ մեր վերայ ընդունեցինք. ըստ որում քրիստոնէութեան անունը նախատինք և կատականքների ծաղր էր համարուած: Արդարութիւնն ու օրէնքը վերացան մեզանից, և մեր արտասուքներին ու հառաչանքներին տեղ չկարվան զի նրանց բարեպաշտութիւնը՝ մեզ զրկելը, կողոպտելն ու ապանելն էր: Վատ էր երևում նրանց այն հարկաւոր զգեստը, որ մեր ամօթանքն էր ծածկում. բայց երբ տեսնում էին մեզ մերկ ու խայտառակ, նրանով աւելի էին ուրախանում: Մեզ պատահած շատ վշտերից հալած, մաշած ու չորացած, ստուերի նման էինք շրջում երկրի վերայ, գողալով ու զարհուրելով: Մեր կերակուրները սնունդ չէին տալիս և խմելիքները դառն էին մեր տէրերի երկիւղից ու սպառնալիքներից. որովհետև չէին կարծում, թէ մեզ Աստուած կայ երկնքում և կամ մեր

աղօթքներն ու խնդրուածքները կը հասնին նը-
բան։ Ըստորում Աստուած կամեցաւ այնպիսի
չարչարանքներով մեզ տանջել, հալածել ու նե-
զել, և բոլոր հասակի մարդկանցն էլ չարչարան-
քի ենթարկել, յանցաւորի ու պատժապարտի
պէս արտաքսել ու հեռացնել իւր երեսից, ցը-
րուել ու տարագիր անել օտար ազգերի մէջ, որ
թերևս կարողանայ մեր յանդուգն, անհնազանդ
և սանձարձակ բնութիւնը զսպել, ձգել մեզ իւր
խրատի գաւազանի ներքև, ինչպէս Իսրայելին՝
Եղիպտի օրերում, և Սամարիան՝ 137) Եղիսէի։
Արդեհետև նրանցում յուսոյ նշան կար, (այսինքն)
թագաւորների և իշխանների վերակացութիւնը,
և որ ամենից գլխաւորն է՝ մարգարէների սուրբ
և ուրախարար խօսքերը, որով զօրանում էին, և
կարողանում նեղութեան փորձութիւնները տա-
նել, ինչ որ ընդունում էին Աստծուց։ Իսկ
մերը աւելի ծանր և աւելի շատ է ամենից, ըստ
հոգւոյ և ըստ մարմնոյ անթագաւոր և անիշ-
խան, անտէր և անվերակացու և չենք կարող
մեզ մի ապաստանի տեղ գտնել. այլ տկարացած
և հնազանդած ենք մնալ հեթանոսների թագա-
ւորութեան ներքև, և նրանց գաւազանի սաստ-
իկ հարուածն օրըստօրէ ընդունել։ Ինչով որ
Տիրոջը չը ծառայեցինք, ծառայում ենք այլազգ-
ներին. ինչով որ արհամարհեցինք Տիրոջ երկիւ-

զը, սրանց երկիւղոմն էլ ամենչում ենք օրըստ-
օրէ։ Եւ որովհետև Աստծու պաշտօնը ծուլու-
թեամբ կատարեցինք, գիշեր ու ցերեկ պէտք է
ծառայենք ու սպասաւորենք նրանց։ Չէ թէ մեր
մեղքի չափովը մեզ խրատեց, այլ գթութեամբ
ու ողորմութեամբ ձգեց մեզ խրատի բովի մէջ,
մեզ զգաստացնելու և պիտանի անելու համար։

Եթէ գնես մեր մեղքերը կշեռքի մէջ, աւելի
ծանր են մեր պատժից, որը ստացանք Քեզանից. և
աւելի թեթև են պատուհասները՝ մեր մեղքերից։
Ծանչանքների ամենայն տեսակները և ալեկոծու-
թիւն ձգիր մեր վերայ, միայն քո երեսից մի
մերժիր մեզ, Տէր. փորձուեցան բոլոր խռովու-
թիւնները բեր մեր վերայ, միայն քո սիրուց մի
կարիր մեզ, Տէր։ Լաւ է ընկնել քո ձեռը և ըն-
դունել Քեզանից խրատ ու պատիժ, քան թէ խը-
րատդ չը լսելով հեռու մնալ Քեզանից։ Լաւ է
մտենալ Քեզ չարչարանքներով ու նեղութեամբ,
քան թէ հեռանալ Քեզանից ու ապրել անդորրու-
թեամբ ու գիւրութեամբ։ Բաւական է մեզ, որ
Քո սուրբ անունը կոչուած է մեր վերայ, մեզի
Քեզ ժառանգութիւն համարելով, նոր ուխտի
պատուական արիւնով անելու մեզ՝ Քեզ ժողո-
վուրդ։ Ուրեմն՝ մի թողնիր մեզ Քո ձեռքից Քո
արարչական սիրով, որ բոլորովին չը չարչա-
ռուինք Քեզ առելի հեթանոսներից. բառում

այս ամենը և գրքիս մէջ գրածից էս առաւել եկան մեզ վերայ մեր մեղքի համար։

Այս այսպէս լինելուց յետոյ՝ բաւական համարեցինք գրել այն բոլոր մեր օրերում կատարուած արկածութեան ծփանքները, և մաս մաս բաժանել, ինչ որ պատահեցաւ իւրաքանչիւր տեղերից, աշխարհներից և քաղաքներից, ինչ որ կրեցինք հեթանոսներից։ Որովհետև ոչ մի օր և ժամանակ անդորրութեան կամ դիւրութեան չարժանացանք, այլ մեր օրերի բոլոր ժամանակը լիքն եղաւ խռովութեամբ ու նեղութեամբ. և օրըստօրէ մեր կեանքն յաւելանում էր չարչարանքների ու տառապանքների մէջ։ Նրանցից ոչ մէկը բարեմիտ չեղաւ դէպի մեզ. թէպէտ շատ տարիներով բնակուեցան մեր մէջ. օձի նման նրանց բարկութիւնը չը հանդարտեցաւ և կրակի նման նրանց ագահութիւնը յագուրդ չտուաց. որովհետև մեր մասին ունեցած նրանց բոլոր խորհուրդները չար են և խօսքերը՝ խաբեբայական։ Ամենայն առաւօտ չտեսնուած ազէտներ էին սկսում. նրանց ամենի մտածմունքն էր մաշել ու ջնջել մեզ՝ հնացած ձորձի նման, և մեր յիշատակները վերացնել իրանց միջից, որ բնաւ չը նայեն ու կենդանի տեսնեն մեզ. այլ մեր գերեզմաններն անհետանան իրանց ոտների տակ։

Վասն որոյ կարօտացանք հին ժամանակա-

գիրների պատմութեանը, որ ըստ արժանւոյն՝ իրանց վայելուչ խօսքերով գրեն այս մատենի պատմութիւնը, ներկայ և անցեալ ժամանակներում հանդիպած իրողութիւնները ճշտութեամբ մի տեղ հաւաքելով, թողնեն իրանցից յետոյ կատարուած գործողութիւնների յիշատակները, ինչպէս ցոյց է տալիս մեր նախնիքների պատմագրութիւնը։ Իսկ ինչ որ սոյն մատենում գրուեցաւ, լիակատար չէ, այլ միայն կատարուած և մեզ պատահած իրողութիւնների սկիզբն է. վասն զի գործերի կատարումը չը կարողացանք բոլորը մտաբերել կամ գրել. բայց այս բոլորը այն պատճառով գրինք, որ կարդաք ու հասկանաք, թէ այս ամենի պատճառը, որ մեզ պատահեցաւ, մեր մեղքն եղաւ. որ դուք, նայելով դէպի մեզ, վախենաք Աստծուց, և դողաք Նրա զօրութիւնից. շտապիք յառաջագոյն խոստովանութեամբ ու ապաշխարութեամբ, քան պատուհասը գալուց յետոյ՝ դէմ դնէք։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ։

1. Լատիվերտը մի գիւղ է Կարին գաւառում, և պատմագրի ծննդավայրը, որ գտնւում է Արծն քաղաքի մօտ։

2. Եկեղեաց գաւառը, որ այժմ Եգնկան է կոչւում, սահմանակից է փոքր Հայքին։ Սա կոչւում է և Լուսաւորչի գաւառ նրա չարչարանքի սկիզբն այստեղ լինելու, կամ թէ Թիլ աւանի պատճառով, որ Լուսաւորչի կալուածն էր։ Այս գաւառը քրիստոնէութիւնից առաջ լիքն էր Անահտի տաճարներով. այստեղ էր և Անահտի անուանի մեհեանը, որը միջին Տիգրանը շինել տուեց և Արտաշէսի Յունաստանից բերած Անահտի ոսկէ արձանը այստեղ փոխադրել տուեց։

3. Ազօրին Տուրուբերան նահանգի մի փոքր գաւառ է. սրանում են Հաւճիշ լեառը և Համանուն աւանը։

4. Ռաուզք Հիւսիսային մի ազգ էր իւր Համանուն երկրով, որ սահմանակից է Սարմատիային. այժմ Ռուսաց մեծազօր թագաւորութիւնն է կազմում այդ ազգը։

5. Երանելի կոչուած անձը Դաւիթ Կիւրապաղատն էր, որի համբաւը Յոյների, Հայերի և

Վրացիների մէջ հռչակուելու և մեծարուելու պատճառով Տայոց իշխանները նախանձեցան նրան և ծերութիւնից ձանձրացած՝ խորհուրդ արին ու Աւագ Հինգշաբթի օրը Հազորդութեան սուրբ խորհուրդին մահագեղ խառնելով կեանքից զրկեցին այն արժանաւոր անձին, որ իւր ամբողջ կեանքում Հայաստանի փրկութեան համար ոչինչ չը խնայեց։

6. Տայոց աշխարհն ընկնում է Գուգարքի արևմտեան, Եգերաց աշխարհի արևելեան, Վրաստանի հարաւային և Արարատեան աշխարհի հիւսիսային կողմը։

7. Սելոմը առողջարար ջրի մի աւազան էր Երուսաղէմում։ Ի ծնէ կոյրն այստեղ բժշկուեցաւ։

8. Տաբելի որդի Հռասիմը Ասորոց թագաւորն էր. Հրէաներն ուզում էին նրան Հրէաստանի վերայ թագաւորացնել Աքազի փոխարէն, ուստի Աստուած Եսայի Մարգարէի բերանով սպառնացաւ նրանց կրելիք պատիժները այդ ցանկութեան պատճառով։ Ե. Է. գլ։

9. Ափխազներն ըստ ոմանց Մկռէլ կամ Մէնկրէլ կոչուած Վրացիներն են. ըստ ոմանց Կախեթու Վրացիները կամ Ապաղիք և կամ Սարմատացոց ազգերից մէկը, որ բնակւում է Վրաստանի հիւսիսակողմում Կովկաս սարի մօտ։ Խոջ.

10. Այստեղ թագաւոր կոչուածը Հռոմոց Վասիլ կայսրն էր, որ թագաւորեց Զմշկիկ կայսրից յետոյ, Հայկական 424 թուականում։ Սրա օրերում Յունաստանից սուրբ խաչի մասը բերելով Հայաստան, դրին Մոկաց գաւառի Ապարանք կոչուած վանքում, ինչպէս սուրբ Գրիգոր Նարեկացին խաչի ճառում գրում է։

11. Յոյները, երբ որ տիրեցին Հայաստանին, Հայ իշխաններից մէկին Կիւրապաղատ անունով կառավարիչ նշանակեցին, ինչպէս Պարսիկները՝ Մարզպան և Հազարապետները՝ Ոստիկան։ Այս անուն կրող կառավարիչներն ունէին թագաւորի կողմից փոխանորդութեան իշխանութիւն, գերագոյն կառավարութիւն, այնպէս որ, անկախ էին որ և իցէ մի իշխանից. նրանք ինքնիշխան հրամայում և կատարել էին տալիս իրանց հրամանը. նրանք իրանց համար յատուկ զօրք չունէին, բացի սակաւաթիւ թիկնապահներից, այլ Հայոց զօրքովն էին կառավարում։ Բայց երբ հարկն ստիպում էր, թագաւորից զօրք էին բերել տալիս։

12. Մագիստրոս կամ Մաժիստռ մեծ իշխանութեան պատուանուն էր, որ Յոյները տալիս էին զօրավարներին կամ ասպետներին։ Այդպիսիներն ունէին իրանց զօրքը և հարկաւոր դէպքում օգնութեան էին հասնում Կայսեր զօրքին պատե-

բազմի ժամանակ։

13. Հարք գաւառն իւր ծագումն առել է Հայկ նահապետից, որ աշտարակի կործանումից յետոյ գարձաւ Հայաստան և առաջին անգամ այս գաւառում բնակուեցաւ։ Այս գաւառը յետոյ ժառանգութիւն ընկաւ Հայկի Մանաւազ որդուն և նրանից զկնի Մանաւազեան ցեղին։ Սա սահմանակից է Ապահունեաց գաւառին։

14. Մանազկերտ կամ Մանաւազակերտը մի գիւղաքաղաք էր մեծ Հայքի Հարք գաւառում Եփրատ կամ Մուրատ գետի ձախ ափում, որը շինեց Հայկի որդի Մանաւազը և որ այժմս կոչւում է Մանծկերտ։

15. Բագրևանդը մեծ Հայքի Արարատեան աշխարհի գաւառներից մէկն է, շինուած Եփրատ գետի մօտ։ Այստեղ էր հին Բագնեաց աւանը։ Բագրևանդն այժմ կոչւում է Ալաշկերտ։ Այս գաւառը հին Աբեղեան կամ Գաբեղեան գաւառի, իսկ այժմ Կաղզուանին սահմանակից է։

16. Ուխտեաց քաղաքը, որ այժմ կոչւում է Օլթի, գտնւում է Տայոց աշխարհում և Նատիմանի հիւսիսային կողմը։

17. Բուլղարներն երկուս են բաժանւում. մինը արևմուտքում գտնւը գետի հարաւակողմը՝ Թրակիոյ մօտ, և երկարաձգւում մինչև Պոնտոսի ծովեզրը։ Ունի Նիկոպոլիս, Սիլիստրիա և

ուրիշ քաղաքներ։ Իսկ միւս Բուլղարները, որոնք Բուլխ էլ են կոչւում, Սարմատացւոց ազգերից մէկն է՝ Կովկաս մեծ սարի հիւսիսակողմը. որանցից շատերը Հայոց առաջին Արշակ թագաւորի օրերում բաժանուելով եկան և բնակուեցան Հայոց աշխարհում։ Պատմագրի յիշատակած Բուլղարներն առաջիններն են։

18. Բագրատունիք մեծ նախարարութիւն ունեցող մի տոհմ էին։ Նրանք Բագարատի անունովն են կոչւում, որ Վաղարշակ թագաւորի իշխանն էր և Արշակունեաց թագագիր եղաւ։ Արշակունեաց թագաւորութիւնը վերանալուց յետոյ՝ Բագրատունիք թագաւորեցին։ Նրանցից ԺԲ. թագաւոր նստան։ Մայրաքաղաքը գլխաւորապէս Անին էր։

19. Գագիկը Աշոտ ողորմած Բագրատունի թագաւորի երկրորդ որդին էր. նրա կինը Սիւնեաց Վասակ իշխանի Կատրամիտէ դուստրն էր. ոյն բարեպաշտ թագուհին լրացրեց Ցիեզերակալ Սմբատ թագաւորի Անիում հիմնարկած Կաթուղիկէ եկեղեցին։ Գագիկն էլ սուրբ Գրիգոր եկեղեցին շինեց Ծաղկոցաձորի կողմը, Ներսէս Շինող Հայրապետի Վաղարշապատում շինած եկեղեցւոյ ձևով։

20. Սարգիսը Սևանայ վանքի միաբաններից ամենից արժանաւորն էր, թէ առաքինութեամբ և

թէ գիտութեամբ և նոյն վանքի առաջնորդը։ Խաչիկ Կաթուղիկոսի մահից յետոյ՝ Գագիկ թագաւորն ազգի հաւանութեամբ նրան ձեռնադրել տուեց Կաթուղիկոս 992 թուին։ Սա Հռիփսիմեանց մասունքներից գտնելով՝ շինեց նրա անունով մի եկեղեցի Անի քաղաքում Կաթուղիկէ եկեղեցու մօտ։ Սրա օրով ծաղկեցաւ Ստեփաննոս վարդապետը կամ Ասողիկը, որ Սրա հրամանովն էլ գրեց Հայոց ազգի պատմութիւնը։ Գագիկ թագաւորի և նրա եղբօրորդի Դաւթի մէջ խիստ խռովութիւն ծագելով՝ վերջինն ապստամբեցաւ և երեք տարի շարունակ երկիրը քանդւում էր կռիւների և խռովութեան երեսից. Սարգիս Կաթուղիկոսը հաշտեցրեց միմեանց հետ։ Սարգսի ժամանակ բորբոքուեցաւ Թոնդրակեցւոց ազանդը. նա 27 տարի Կաթուղիկոսութիւն անելուց յետոյ մեռաւ ու թաղուեցաւ Հռոմոսի վանքում։

21. Սևան կղզին գտնւում է Սիւնեաց աշխարհի Գեղամայ ծովի մէջ. ունի մի վերստ երկայնութիւն և կէս վերստ լայնութիւն։ Կղզու բնակութեան սկիզբը, ինչպէս Հ. Ալիշանը գրում է, անյայտ է. բայց կարծում է Հայկազն Գեղամից սկսուած և յետիններից հաստատուած։ Կղզին Սիւնեաց իշխանների և Աշոտ Բ-ի ապաստանարան էր։ Նրանում գտնուած վանքերի շինութիւնը Լուսաւորչից է սկսուած. Թ-րդ դարի

վերջում պայծառացաւ Մաշտոց Եպիսկոպոսի ձեռքով, որ յետոյ կաթուղիկոս եղաւ։ Գարուռ Վասակի ամուսին՝ Սիւնեաց Մարիամ տիկնոջ օժանդակութեամբ և նոյն իսկ Մաշտոցի վերակացութեամբ շինուեցաւ առաքելոց եկեղեցին 874—80 թուականում. եկեղեցու արևմտեան և հարաւային դռները շինուած են ընկուզի փայտից հրաշալի քանդակագործութեամբ. առաջինը 1176 և երկրորդը 1557 թուին, ինչպէս յիշատակագիրը ցոյց է տալիս։ Կան և ուրիշ եկեղեցիք էլ։

22. Կամրջաձորի վանքը գտնւում է Արշարունեաց գաւառում, այն է՝ Երասխաձորում և շինուած է մեծասանեբորդ դարում. մի ժամանակ ունէր ծաղկեալ գրութիւն 300 միաբաններով, որոնք ապրում էին Սուրբ Բարսեղի կանոնագրութեամբ Առաքելոց սահմանագրութեան վերայ հիմնուած, թէ.—«Էր ամենայն ինչ հասարակաց», ինչպէս Ասողիկն ասում է։

23. Հնձուց վանքը գտնւում է Կարին գաւառում։ Սարգիս անունով մի վարդապետ, որ Հռոմների հալածանքների երեսից Եգեբացւոց աշխարհից փախչելով եկաւ Հայաստան, շինեց այս վանքը և բարեկարգութեամբ զարդարեց։

24. Ստեփաննոս Տարօնեցին Ասողիկ կամ Ասողնիկ կոչուած պատմաբանն է. նա Սարգիս Կաթուղիկոսի հրամանով գրեց տիեզերապատում պատ-

մութիւնը Հայոց ծագումից մինչև Դագիկի թագաւորութիւնն ու Սարգսի Հայրապետութիւնը։

25. Կոգեռն մականուանուած Յովհաննէս վարդապետն ապրում էր Յովհաննէս—Սմբատ թագաւորի օրով. նոյն ժամանակ, երբ արեգակը սաստիկ խաւարեցաւ և ինչպէս Մատթէոս Ուռհայեցին ասում է, աստղերը ցերեկում այնպէս երևեցան, ինչպէս գիշերում, և միևնոյն տարում սոսկալի երկրաշարժ պատահեց, որով կործանուեցան շատ շինութիւններ, թագաւորը սարսափահար եղած՝ իւր երկու նշանաւոր իշխաններին՝ Գրիգոր Մագիստրոսին և Վեստ Սարգսին ուղարկեց Կոգեռն Յովհաննէս Վարդապետի մօտ հարցնելու այդ արհաւիրների պատճառը. իշխանները տեսան նրան, որ սգում և առանց խօսելու արտասուում էր։ Շատ ստիպելուց յետոյ ասաց.—«Ներսէս մեծ Հայրապետի գուշակութեան ժամանակը լրացել է, ինչպէս մինչև այսօր տեսնում էք. աւելի ևս պէտք է սաստկանան դղրդմունքները, պատերազմները և սրածութիւնները Սկիւթացւոց ձեռով և այս կողմերն արիւնհոսութիւնով պէտք է սարսափին». ու ճանապարհ դրեց նրանց։

26. Շատիկ բերդը գտնւում է Ճակատք գաւառում։ Ինչպէս Խորենացին գրում է, Ճակատք կամ Ճակք գաւառը Տայոց աշխարհումն է, բայց

նրան համանուն գաւառ ցոյց է տալիս և Արաբատեան նահանգում, որի մէջն է անուանի Կողբ գիւղաքաղաքը—Եզնիկ պատմագրի ծննդավայրը։

27. Նիկոմիդիան կոչւում է այժմ Իզնիմիտ. նա Փոքր Ասիայի Բիւթանիա գաւառի մայրաքաղաքն էր, որ գտնւում է Մարմարայի ծովի եզրում Կոստանդնուպոլսի մօտ։ Նիկոմիդոս թագաւորը շինելով նրա անունովն էլ կոչուեցաւ։

28. Թէոդուպոլիս. Տէ՛ Ծան. 30.

29. Տէր Պետրոսը Խաչիկ արժանաւոր Կաթուղիկոսի եղբայրն էր։ Սրա ժամանակ Բագրատունեաց թագաւորութեան բարձումն էր պատրաստւում Կոստանդնուպոլսում. սա կամակից գտնուեցաւ Վեստ Սարգսին և փոքրոգի Գրիգոր Մագիստրոսին Անին ու աշխարհը յանձնելու Յունաց Կայսրին։

30. Կարինը մի մեծ ու ամուր քաղաք է և այժմ ռամկօրէն կոչւում է Արզուրում. նա գտնւում է բարձր Հայքի համանուն գաւառում։ Փոքր Թէոդոս Կայսեր Անաստոլիս զօրավարը նորոգելով ամրացրեց այս քաղաքը ուրբ Սահակի և Մեսրոպի օրով և անուանեց Թէոդուպոլիս։ Այս գաւառումն են գտնւում Եփրատ գետի ակունքը։

31. Վաղարշակերտը գտնւում է Բագրեւանդ գաւառում։ Այդ քաղաքն այժմ կոչւում է Ալաշկերտ, ինչպէս և գաւառը։ Նոյն գաւառումն են

գտնուում Սուկաւ (Բեսսա-Տաղ) ու Նպատ պատմական լեռները և Զիրաւ գաշտը, որտեղ Յունաց զօրքերի օգնութեամբ Պապ թագաւորը պատերազմեց ուրացող Մեհրուժան Հայ իշխանի դէմ, երբ մեծն Ներսէս անմահ Հայրապետը Նպատ լեռան գլուխն ազօթում էր և յաղթուեցան Պարսիկները։ Վաղարշ թագաւորը շինեց նոյն քաղաքը, դրա համար էլ կոչւում է Վաղարշակերտ։

32. Բասեն գաւառը բաժանւում է երկուս՝ վերին և ստորին. վերին Բասենը Հիւսիսային մասումն է և հնումը կոչւում էր անփայտ Բասեն. իսկ յետոյ Վունդ անունով մէկը բնակուելով այնտեղ, նրա անունով կոչուեցաւ և Վանանդ ու մօտ է Երրակ գաւառին։ Բայց ստորին Բասենը հարաւային մասումն է. սա ունի Երասխ կամ Արազ գետը և ընդարձակ խոտաւէտ ու հացաւէտ հովիտ։ Այս մասումն է Վաղարշաւան քաղաքը Մուրց և Երասխ գետերի խառնուրդի մօտ. այժմ ունի Հասանղալա և Մժնկերտ։

33. Օկոմի հին գիւղաքաղաքը Մուրց և Երասխ գետերի հարաւային կողմումն էր. այժմ մի գիւղ է, որի մօտն է Եաղան հայաբնակ գիւղը։

34. Տե՛ս Ծան. 32.

35. Պաղակացիս կամ Հիւսիսոյ ծովակ կոչուած լիճը այժմ անուանւում է Զլարը. նա գտնըւում է Տայոց և Արարատեան աշխարհների մէջը,

Վանանդի և Զարիշատի հիւսիսակողմում։

36. Պոնտոս գաւառը Փոքր Ասիայի մէջն է. այս գաւառի արևմտեան կողմն է Պափլագոնիան և Գազատիան, հարաւայինը՝ Կապադովկիան և Փոքր Հայքը և արևելեանը՝ Մեծ Հայքը։ Այս գաւառը Պոնտոսի, որ Սև ծով է կոչւում, մօտը լինելով՝ նրա անունովն էլ կոչուեցաւ։

37. Խաղտիք գաւառը Կողքիսի կամ Եգերացւոց աշխարհի չորս գաւառներից մէկն է և գտնւում է Տրապիզոնի ու Կարնոյ մէջ։ Իսկ Եգերացւոց աշխարհն ընկնում է Սև ծովի արևելեան կողմը։ Նա սահմանակից է Հայոց, Վրաց և Սարմատացւոց աշխարհներին։ Այժմ կոչւում է Լազիստան։

38. Հռոմոսի վանքը գտնւում է Տիրակ գաւառում, Ախուրեան գետի աջ ափի վերայ, Անի քաղաքից դէպի արևելք կէս ժամու ճանապարհ հեռու։ Այս վանքը շինեց Յովհաննէս անունով մի վարդապետ, և ամենայն բարեկարգութեամբ զարդարեց։ Յովհաննէսը շատ կրօնաւորների հետ Հռոմոց աշխարհից հալածուած՝ եկաւ շինեց այդ վանքը, ուստի կոչուեցաւ Հռոմոսի վանք. այսինքն՝ Հռոմոց աշխարհից եկած կրօնաւորների վանք, ինչպէս Կիրակոս պատմագիրն է ասում։

39. Վեռիացիք՝ Վիրք կամ Վրացիք են։

40. Փոկասը Յունաց մի զօրավար էր, գրժնեայ ու նենգաւոր մարդ. նա Հռոմոց զօրքերին գրգռելով Հայազգի Մօրիկ Կայսեր դէմ, նրան կենդանի բռնեց և իւր առաջը բերեց. Մօրիկի աչքի առաջ հինգ որդուն էլ սպանել տուեց. բոլորից յետոյ սպանեց և Մօրիկին։ Թէպէտ ինքը եօթը տարի թագաւորեց, բայց Ափրիկէի իշխանի որդի Հերակլը եկաւ պաշարեց Կոստանդնուպօլիսը և Փոկասին բռնելով չարաչար սպանեց։

41. Մազդատ ամրոցը գտնւում է Խազտեաց աշխարհում։

42. Սիկլառոսը Զմշկիկ Կայսեր կնոջ եղբայրն էր և արևելեան զօրքի սպարապետ. նա քաջութեամբ անուանի ու անյաղթելի մարդ էր։ Վասիլ կայսրը կասկածելով նրա հաւատարմութեան վերայ, սպարապետութիւնն առաւ և Միջագետքի մի աննշան վիճակում Դուքս նշանակեց։ Նա մտքումը դրեց ապստամբուիլ Կայսրից, ուստի՝ իւր զօրքերն առնելով գնաց Զահանի և Մելիտինէի կողմերը, նաև Հայոց Հեծելագունդն էլ, որ Յունաց բաժնումն էր, հետը միացրեց, թագ կապեց և թագաւորեց այնտեղ։ Բայց ոչինչ օգտաւէտ հետևանքի չը հասաւ։

43. Հռոմք կոչւում էին Թրակիա գաւառի բնակիչները, որի մայրաքաղաքն է Կոստանդնու-

պոլիսը. նա սաւում է Հռոմոց աշխարհ. իսկ այժմ Ռումանիա և սահմանակից է Մակեդոնիային: Երբ մեծ Կոստանդիանոսը իւր տէրութիւնը փոխադրեց այստեղ, շատ Հռոմայեցիներ էլ նրա հետ փոխադրուեցան. այս պատճառով Հռոմայեցիք գրելու տեղը թարգմանիչները Հռոմք գրեցին: Այդ երկրի մեծ մասը Յոյներ էին և տէրութիւնն էլ Յունացն եղաւ, ուստի կոչուեցան Հռոմք: Նոյն իսկ նրանց սահմանակից Հայերն էլ Հռոմցիք սուուեցան:

44. Բաբելոնը Ասորեստանի թագաւորութեան և Քաղդէացւոց մայրաքաղաքն է, շինուած Սենաար դաշտում, Եփրատ գետի մօտ: Նեբրովթի թագաւորութեան սկիզբն այստեղ եղաւ: Իսրայէլացիք այստեղ գերի տարուեցան և ազատուեցան Պարսից Կիւրոս թագաւորի ձեռքով, երբ տիրեց Բաբելոնին: Հին Բաբելոնն աւերուելուց բաւական ժամանակ յետոյ՝ շինուեցաւ մի այլ քաղաք, մի աւուր ճանապարհ հնի տեղից հեռու, Տիգրիս գետի վերայ, դարձեալ Բաբելոն անունով, որ այժմ կոչւում է Պաղտատ:

45. Տե՛ս Ծան. 40.

46. Վասպուրականը Մեծ Հայքի ԺԵ. աշխարհներից մէկն է. նա ընդարձակ երկիր է և Հայոց թագաւորութեան երկրորդական գահը. նա արևելեան կողմից սահմանակից է Պարսկահայոց

աշխարհին, հարաւից՝ Կորճէից, արևմուտքից՝ Տուրուբերանին, իսկ հիւսիսից Արարատեան աշխարհին։ Այս նահանգն Արծրունեաց ցեղի բնակութեան տեղն էր։

47. Սեբաստիան, որ ռամկօրէն կամ Տաճկերէն Սեւասա և Սըվաղ է կոչւում, մի մեծ քաղաք է Առաջին Հայքում, Ալիս գետի մօտ։ Քառասուն մանուկներն այստեղ մեռան սառուցեալ լճումը Լիկիանոս ամբարիշտ կայսրի հրամանով։

48. Փերսը Վրաց իշխանաց իշխանն էր և Զոչիկ մեծ իշխանի որդին։ Դաւիթ Կիւրապաղատի օրով Ատրպատական (այժմ Ատրբէջան) աշխարհի Մամլան ամիրան մեծ զօրքով եկաւ Դաւիթի վերայ։ Դաւիթը, որ սաստիկ ծերացած էր, Վրացւոց Գուրգէն թագաւորից օգնութիւն խնդրեց. թագաւորն ուղարկեց Փերսին հայերին օգնելու վեց հազար այրուձիով. այդ պատերազմումն էլ բռնուեցաւ Փերսը։

49. Խաղաղ Առիճ բերդը համանուն քաղաքի հետ միասին գտնւում է Կարնոյ գաւառի սահմանում։

50. Մովսէսացւոց երկիրը գտնւում է Մեռեալ ծովի հարաւ-արևելեան կողմում. արևմտեան կողմն է Արաբիայի անապատը, հարաւայինը՝ Ապառաժ Արաբիան, արևելեանը՝ Մագիամացւոց, իսկ հիւսիսայինը՝ Ամօնացւոց երկիրը։

51. Հերը Պարսկահայոց աշխարհի մի գաւառն է, Բագրեւանդին կամ Ալաշկերտին սահմանակից։ Այժմ կոչւում է Խոյ։

52. Արծրունիք մի տոհմ էին և Մեծ Հայքի նախարարութիւն. Վաղարշակն այս ցեղին նախարարութեանց կարգը գասելով՝ իւր դէմը արծիւ կրելու պաշտօն տուեց, ուստի և այդ անունն էլ կոչուեցան։ Այս նախարարութիւնը Սասրեստանի Սենեքերիմ թագաւորի Ադրամելէք որդուցն է յառաջացած։ Սրանց առաջին բնակութեան տեղը Աղձնեաց աշխարհի Սասուն գաւառն էր։ 10-րդ դարում Վասպուրական աշխարհը դարձաւ առանձին թագաւորութիւն՝ Արծրունեաց տիրելովը, որ 100 տարուց աւելի տևեց և վերջումը Վասպուրականի Սենեքերիմ թագաւորը տուեց այդ երկիրը Յունաց Վասիլ կայսերը ու նրա փոխարէնն առաւ Սեբաստիա քաղաքը իւր շրջակայ սահմանով։

53. Կոստանդինը Վասիլ կայսեր եղբայրն էր։ Մակաց աշխարհի Ապարանից վանքի առաջնորդ Դաւիթ եպիսկոպոսը մի եղբօրորդի ունէր. նա գնաց Կոստանդնուպոլիս և զինուոր դարձաւ կայսեր պալատում ու շատ քաջութիւններ ցոյց տալով՝ երևելի անձ դարձաւ և մականունով Մանկաւա կոչուեցաւ. նա քրիստոնէական բարեպաշտութեամբ այնքան զօրացած էր, որ սրբակրօն

Դաւիթ եպիսկոպոսի գերեզմանի հողիցը հետը տարել էր և նրանով իւր անսահման հաւատին համաձայն շատ բժշկութիւն էր անում։ Երբ Վասիլն ու Կոստանդինը լսեցին այդ, նրան տուին Պատրիկութեան և Մագիստրոսութեան իշխանութիւն, ինչպէս Նարեկացին և Ասողիկը գրում են։ Իսկ այնուհետև նոյն կայսրները մեծ խնամք ունեցան դէպի Ապարանից վանքը և կենաց փայտից, որ գտնւում է Կոստանդնուպօլսում, մի մաս ընծայեցին նոյն վանքին թանկագին ու գեղեցիկ տուփի մէջ դրած և ուրիշ շատ սրբութիւններ էլ Մանկլաւտի ձեռքով ուղարկեցին։ Սոյն Կոստանդին կայսրն էր, որ իւր հիւանդութեան ժամանակ կանչել տուեց չիք Կիրակոս հայ քահանային իւր մօտ, և արդարամտութեամբ յանձնեց Յովհաննէս—Սմբատ թագաւորի այն թուղթը, որով տուել էր Անին Յունաց կայսերը, որ տանի տայ Հայոց թագաւորին. բայց անարժան քահանան պահեց թուղթը իւր մօտ և Կոստանդինի մահից յետոյ տուեց Միքայէլ Կայսերին ու փոխարէնն ստացաւ գանձ։

54. Նիկիացիք են կոչւում Բիւթանիայի բնակիչները։ Տե՛ս ծան. 132։

55. Կապադովկիան Հայոց բարբառով Գամիրք է կոչւում, Յաբեթի որդի Գամիրից իւր անունն ստանալու պատճառով։ Սա Փոքր Ասիայի

հին գաւառներից ամենից մեծն էր. հիւսիսի կողմից սահմանակից էր Պոնտոսին, հարաւի՝ Տաւրոսի լեռներին, որոնք բաժանում էին Կապադովկիան Կիլիկիայից և Ասորւոց երկրից, արևմուտքից՝ Գալատիային և արևելքից՝ Եփրատ գետին ու Հայոց երկրին։ Քրիստոնէութիւնը շատ շուտ մուտ գործեց այդտեղ, ինչպէս երևում է Սրբազան Պետրոս Առաքեալի «Կաթուղիկեայց» անուանուած Ա. թղթի 1, համարից։

56. Արճէշը մի մեծ ու անուանի քաղաք էր Վասպուրական աշխարհի Արճիշակովիտ գաւառում։ Այժմս էլ կոչւում է Արճէշ։

57. Անտիոք անունով շատ քաղաքներ են յիշւում. օրինակ՝ առաջին՝ մեծ Անտիոքը Ասորիքում. երկրորդ՝ Պիսիդիայի Անտիոքը, որ Անթաքիա էլ է կոչւում և երրորդ՝ Փոքր Հայքի Անտիոքը, որ Եփրատացւոց կողմերումն է, Կիլիկիայի սահմանի մօտ։ Պատմագրի յիշած Անտիոքը վերջինն է։

58. Սև լեռը գտնւում է Կիլիկիայի հիւսիս-արևելեան կողմում Տօրոսի լեռան մօտ։ Այդ լեռան վերայ կային Հայոց, Ասորւոց և Յունաց շատ վանքեր։ Այստեղ էր և այն անուանի անապատը, որ կոչւում է Արեգի, ուր բնակուեցաւ երբեմն Տէր Գրիգոր Կաթուղիկոսը։

59. Քաղկեդոնը, որ այժմ կոչւում է Խալը

կամ Դատբ-Բեօյ, Բիւֆանիայի մայրաքաղաքն էր, Կոստանդնուպօլսի հանդէպ։ Այժմ աւերակ է և միայն մի փոքր գիւղ կայ նրա տեղը։ Քաղկեդոնում կայացաւ 451 թուին, Յունաց կողմից չորրորդ Տիեզերական համարուած ժողովը։

60. Ուռհա, կամ ըստ գրոց Եդեսիա, Մեծ Հայքի մայրաքաղաքն էր Միջագետքում, Խառանի հիւսիսակողմում։ Աբգար թագաւորը շինեց այս քաղաքը և Մծբինից փոխադրուեց այնտեղ ու արքայանիստ դարձրեց։ Այնտեղ էր Քրիստոսի անձեռագործ պատկերը, որն ընդունեց Աբգարը Յիսուսից։ Քիչ ժամանակից յետոյ Հայոց Երուանդ թագաւորը տուեց Եդեսիան Հռոմայեցիներին. իսկ նրանք շատ զարդարեցին քաղաքը։ Հարկերի և մեհեանների գիւանն այնտեղ փոխեցին, որ յառաջ Պոնտացւոց Սինոպ քաղաքումն էր։ Այնուհետև վերացաւ Հայոց իշխանութիւնը Միջագետքից։ Ճաճիկներն այս քաղաքն առան քրիստոնեաներից, անլսելի կոտորած արին ու բազմաթիւ գերի տարան Ներսէս Շնորհալու օրով Հայոց 594 թուին։ Խորէն. Բ. Պր. 9. 26. և 35։

61. Սամուսատը, որ յառաջ կոչւում էր Սամոսատիա, Փոքր Հայքի մի ամուր քաղաք է Եփրատ գետի մօտ մի բարձր տեղում շինած։ Սուրբ Մեսրոպն այստեղ գտաւ Հայոց գրերը 406 թուին։ Այստեղ էին բնակւում երբեմն

Արևորդիք, որոնց՝ դէպի քրիստոնէական ճշմարիտ հաւատը դարձնելու համար թուղթ գրեց Ներսէս Շնորհալի Սուրբ Հայրապետը։

62. Անթիպատրոս Պատրիկ Յունական բառ է և նշանակում է հօր փոխանակ. սա իշխանական պատուանուն է. ըստիս, կուսակալի հաւասար իշխանութիւն։

63. Թեսաղոնիկէն Մակեդոնիայի մեծ, վաճառաշահ ու ծովեզերեայ քաղաք էր, Թերմակիայի ծոցի մօտ։ Այս քաղաքի անունը դրեց Մակեդոնացւոց Փիլիպոս թագաւորը՝ Թեսաղոնիկեցիներին յաղթելու յիշատակի պատճառով։ Պօղոս Սրբազան Առաքեալը շատ անգամ այստեղ քարոզեց Քրիստոսի սուրբ Աւետարանը և իւր 14 կանոնական թղթերից երկուսը սրանց է ուղղած։ Սա այժմ կոչւում է Սելանիկ։

64. Դեմեալիկոս իշխանական պատուանուն է։

65. Բարսեղը, որ Բասիլիոս էլ է կոչւում, Կապադովկացւոց Կեսարիա մայրաքաղաքի Հայրապետն էր, և Ս. Գրիգոր Նիւսացու եղբայրը։ Սա եկեղեցու այն վարդապետներից մէկն է, որ Աստուածաշունչ գրքերի շատ մեկնութիւն արաւ, ապօթքի և ներբողների ճառեր գրեց և միայնակեացների համար կանոններ սահմանեց։

66. Բերկրին Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի մի բերդաքաղաք է Վանայ ծովի արևե-

լահիւսիային կողմում, Առբերանի գաւառի մէջ, որը Բերկրացւոց գաւառ կամ Տարբերունի է կոչւում։ Պարսից Տուղրիլ Սուլտանն այս քաղաքն առաւ Հայոց 503 թուին և իշխաններին գերի տարաւ։

67. Արծկէն Բզնունեաց գաւառի մի քաղաք է Վանայ ծովի արևմտահիւսիսային կողմում և ունի ամուր բերդ։

68. Ապահունի գաւառը Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի գաւառներից մէկն է։ Այդ գաւառի նախարարութիւնը շատ մեծ էր։ Նրանք իրանց յայտնի քաջութեամբ նշանաւոր էին։

69. Մանանագին սահմանակից է Եկեղեաց և Կարնոյ գաւառներին. նա իւր անունն ստացած է միջիցը ազնիւ աղ դուրս գալու պատճառով։ Այս գաւառումն է այն անմատչելի քարայրը, ուր Արշակ Գ-ի գանձը յափշտակող երեք նախարարները փախան ամրացան։

70. Անին Բագրատունի թագաւորների արքայանիստ ու մեծ մայրաքաղաքն էր, Երիրակ գաւառում, Ախուրեան գետի աջ ափի վերայ շինուած, բարձր ու ահաւոր զոյգ պարիսպներով։ Այս քաղաքն առնուեցաւ 1030 թուին և բոլորովին աւերուեցաւ։ Այժմ այնտեղ միայն Հայոց վանական մի միաբանութիւն կայ վանահայր վարդապետով և ժամերգութիւնը կատարում է Սուրբ Լու-

սաւորիչ անուանուած եկեղեցում։ Անի էր կոչ-
ւում և Պարանաղեաց գաւառի մի ամուր և անա-
ռիկ քաղաք, որ անուանւում էր և Կամախ, ուր
էին Հայոց թագաւորների գերեզմաններն ու արքունի գանձերը։ Այստեղ ամրացաւ Օտա իշխանը Խոսրովիդուխտի հետ՝ Պարսիկների երկիւղի երեսից։ Խոր. Բ. Պ, 19 և 74 և Գ. Պ, 27. և Ագաթանգեղոս։

71. Տիրակն է Արարատեան աշխարհի գաւառներից մէկը՝ Արագած լեռան արևմտեան կողմում։ Այս գաւառը, որ շատ պտղաբեր երկիր ունի, մեր նախնի նահապետ Արմայիսը ժառանգութիւն տուեց իւր որդի Տարային, որ մի շատակեր ու բազմածնունդ մարդ էր և նրա անունովն էլ Տիրակ կոչուեցաւ։ Բագրատունի նախարարներն այստեղ էին բնակւում։ Այս գաւառումն են մայրաքաղաք Անին, Կարսը և Երազգաւորքը, որ այժմ մի գիւղ է և կոչւում է Բաշ—Նօրագեալ, կամ Բաշ—Տիրակ։

72. Վահրամ Պահլաւունին Արշակունեաց ցեղից և Սուրբ Սահակ Պարթևի դստեր զարմից էր։ Սա քրիստոնէական բարեպաշտութեամբ լցուած՝ շինեց շատ վանօրայք, որոնց մէջ նշանաւոր էր Մարմաշէնը, որ գտնւում է Ախուրեան գետի ձախ ափի վերայ։ Վահրամ աշխարհի ներքին խաղաղութիւնը պահպանելու համար

չափազանց հոգ տարաւ, մանաւանդ Յովհաննէս Սմբատ և նրա եղբայր Աշոտ թագաւորի խռովութիւնը վերացնելու համար: Նա իբրև սպարապետ շատ պատերազմներ մղեց Հայաստանի թշնամիների դէմ և Պարսից ձեռքով նահատակուեցաւ Դուինում իւր որդի Գրիգորի հետ: Վահրամ իշխանի մարմինը թաղուեցաւ Սանահնի վանքումը:

73. Սուրմաբին գտնուում է Արարատեան նահանգի ճակատք գաւառում. սա մի բերդաքաղաք էր և կոչուում էր նա և Սուրբ Մարի: 1390 թուականի ժամանակներում Լենկ—Թէմուրն առաւ այս քաղաքը և հիմնովին կործանեց:

74. Ագագն Ամալեկացւոց թագաւորն էր, որին Աստուած մատնեց Իսրայէլացւոց Սաւուղ թագաւորի ձեռք՝ հրամայելով սպանել, բայց Սաւուղը չսպանեց:

75. Սիոն էր կոչուում Երուսաղէմ քաղաքի միջնաբերդը, մինչև Դաւթից առնուելը. այնուհետև յաճախ կոչուում էր քաղաք Դաւթի: Դաւիթը շատ էր սիրում Սիոնը նրա գեղեցկութեան և ամրութեան համար. և գովում է իբրև օրինակ Քրիստոսի եկեղեցուն: Սիոն բառով հասկացուում է ընդհանրապէս Մօրէա լեառը և նրա վերայ շինուած Տաճարը:

76. Մելիտինէն, որ Տաճկերէն Մալաթիա է

կոչում, Փոքր Հայքի մեծ ու անուանի մայրաքաղաքն էր Մեղոս կամ Մելաս և Եփրատ գետերի խառնուրդի մօտ։

77. Գրիգորը Բջնեցի քաջ Վասակի որդին էր և Վկայասէր Հայրապետի հայրը։ Սա Մագիստրոսութիւն ստացաւ Կոստանդին Մոնոմախ կայսրից իւր հաւատարմութեան և գործերի համար. նա և Դքսութեան պատուի հետ միասին Միջագետաց երկրում քաղաքներ և գիւղեր իրրև ժառանգութիւն. իսկ իւր հայրենի բերդերը՝ Բջնին, Կայան և Կայծոն՝ երկրի հետ տուեց կայսրին հաստատուն թղթով։

78. Բջնին ամուր բերդ էր Նիգ գաւառում, որ այժմ Ապարան է կոչւում, մի լեռան վերայ շինուած Հրազդան (ռամկօրէն Զանգի) գետի մօտ և ընկնում է Կոտայք (Ղրխբուլախ) գաւառի և Երևան քաղաքի հիւսիսային կողմում։ Այժմս մի գիւղ է և պատկանում է Սուրբ Էջմիածնին։ Յետագայ ժամանակներում Բջնին դարձաւ արքեպիսկոպոսական աթոռ։ ԺԲ. դարում Գրիգոր Պահլաւունի կաթուղիկոսի օրով մի ժողովում սահմանեցին, որ առանց չորս մեծ արքեպիսկոպոսների Կաթուղիկոս չընտրուի ու չօծուի։ Այս չորսից մէկը Բջնու արքեպիսկոպոսն էր։

79. Դաւիթը, որին ցանկանում էին աշխարհը յանձնել, ինձ թւում է, Արծրունի Սենեքե-

բիմ թագաւորի որդին է։

80. Դուին քաղաքը շինեց Տրդատի որդի Խոսրով թագաւորը Արարատեան աշխարհում Ազատ գետի ափին մի բլրի վերայ, Արտաշատ քաղաքի հիւսիսակողմում։ Նա իւր արքունիքը փոխադրեց այնտեղ, հարկից ազատեց և ապաստանի քաղաք արաւ, որ իւր գաւառովը կոչուեցաւ Ոստան Դունայ։

81. Սևքար բերդը գտնւում է Կարնոյ գաւառում։

82. Սմբատալեառը կամ Սմբատաբերդը գտնւում է Մանանդի գաւառում, որ սահմանակից է Եկեղեաց և Կարնոյ գաւառներին։

83. Վաղարշաւան գիւղաքաղաքը գտնւում է Բասեն գաւառում, այնտեղ, ուր Մուրց և Երասխ գետերը խառնւում են միմեանց։ Հայոց Վաղարշ թագաւորը շինեց այս աւանը՝ ինքն այստեղ ծնուած լինելու պատճառով։ Այժմ դրա տեղումն է Քեօփրիքեօյ գիւղը։ Այստեղ է շինուած և այն երևելի եօթնակամարեան «Հոմուբ» կոչուած կամուրջը։

84. Սպեր գաւառը Բարձր Հայքի գաւառներից մէկն է և սահմանակից Խաղտիք և Տայոց գաւառներին։ Նա ունէր իւր մէջ ազնիւ ու առատ ոսկու հանք։ Այս գաւառն Արշակունեաց ժամանակ Բագրատունեաց ցեղի սեպհական եր-

կիրն էր. նա ունի համանուն Սպեր քաղաքը, որի միջից հոսում է Ձորոխ գետը։

85. Արշարունեաց գաւառը Աբարատեան նահանգի ծաղկած գաւառներից մէկն էր։ Առաջ կոչւում էր Երասխաձոր. և յետոյ Արշաւիր Կամսարականի անունով կոչուեցաւ Արշարունիք։ Եօթներորդ դարում այս գաւառը շատ ծաղկած էր գիտութեան կողմից, իւր երևելի վարդապետարանով։ Այս գաւառումն են Երուանդաշատ, Երուանդակերտ և Բագարան քաղաքները Ախուրեան և Երասխ գետերի ափերում շինուած։

86. Տարօն գաւառի անունը, որ այժմ Մշոյ երկիր է կոչւում, Խորենացու ասելով, Նոյի թոռ Տարբանի անունից է առնուած. սա շատ զաւակներ ունենալով, հօրից բաժանուած՝ գալիս բնակւում է Եփրատ գետի մէկ ճիւղի մօտ և իւր անունով նոյն տեղը կոչւում է Տարօն։ Տարօնումն է Ինանկնեան կամ Գլակայ վանքը, որ կոչւում է Սուրբ Կարապետի վանք։ Ինչպէս կռապաշտութեան ժամանակ այս գաւառը չաստուածների կեդրոն լինելով շատ ծաղկած էր, այնպէս էլ քրիստոնէութեան ժամանակ ծաղկեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով։ Տարօնի զաւակ են Ս. Մեսրոպ, Խորենացին, Մամբրէ Վերծանող անմահ հոգևորականները և Մուշեղ Մամիկոնեան, Գայլ Վահան, քաջն Սմբատ, նրա

եղբայր Վահանը և ուրիշ շատերը։

87. Հաշտեանք գաւառը սահմանակից է Տարօնին. նա ունի մի ձորահովիտ, ուր բնակւում էին Հայոց թագաւորի այն որդիքը, որոնք չը սիրաք է թագաւորէին։ Այս սովորութիւնը Վազարշակ Պարթևից սկսուեց, որ շատ որդիք ունենալով, չուզեց բոլորին էլ իւր մօտ՝ Մծբին մայրաքաղաքումը պահել, այլ միայն Արշակ անդրանիկ որդուն վեր առաւ ու մնացածներին ուղարկեց Հաշտեանք գաւառը։ Այս գաւառի Ալորա գիւղի մօտիցն է բղխում Տիգրիս գետը.

88. Խորձեանը անտառային, լեռնոտ և բերդերով ամրացած, Զորրորդ Հայքի մի գաւառն էր, Եփրատ գետի մօտ։ Նա վերջերումը Կեղի ասուեցաւ Համանուն քաղաքի անունով։

89. Սիսակայ տուն է կոչում Երեմիա մարգարէն Բաբելոնը, որի թագաւորն իւր ժողովրդով փափկութեան և զեղխութեան անձնատուր լինելով՝ Աստծու ճանապարհից հեռացաւ. ուստի և Աստուած նոյն մարգարէի բերանով նախապէս յայտնեց այն գառն չարչարանքներն ու աւերումը, որ կրեցին Բաբելացիք։ Երէմ. Իգ. 26 և ԾԱ. 41։

90. Նինուէն Ասորեստանի մի մեծ քաղաք էր, որը շինեց Սեմի որդի Ասսուրը Տիգրիս գետի ձախ ափի վերայ. նա նշանաւոր էր մեծութեամբ. մի ծայրից մինչև միւսը՝ երեք օրուայ ճանապարհ։

Նաբուզոդոնոսորն առաւ այս քաղաքն ու կործանեց. իսկ յետոյ շինուեցաւ մի այլ քաղաք, փոքր ինչ հեռու առաջինի տեղից և այժմ կոչւում է Մուսուլ։

91. Սինան Ապառաժ Արաբիայի այն լեռն է, ուր Աստուած Մովսէսի ձեռով տուեց տասն պատուիրանները։ Այս լեռը Քորեբ լեռանը կից լինելով՝ ոմանք երկուսը մի և նոյն են համարում։

92. Գեղբուէն Պաղեստինայի այն լեռն է, որի վերայ մեռան Սաւուղ թագաւորն ու նրա Յոնաթան որդին՝ Փղշտացւոց հետ պատերազմելիս։

93. Արծն քաղաքը գտնւում է Կարին գաւառում. նա շինուած էր Եփրատ գետի ակների մօտ. շատ հռչակաւոր ու բազմամարդ էր։ Առում են 800 եկեղեցի կար քաղաքումը։ Պարսիկներն ու Թուրքերն աւերեցին այս քաղաքը։ Այժմ աւերակ ու անբնակ է։ Հայր Խորէն Ստեփանէն Խաչէն. 728 ծանօթութեան մէջ Արծն և Կարնոյ քաղաքը մի և նոյն է համարում, որ ըստիս հիմք չունի այդպէս ենթադրելու։

94. Տայանը կամ Տայանիսը ասորին Եգիպտոսի մեծ մայրաքաղաքն էր Նեղոս գետի մուտքի մօտ։ Մովսէս շատ հրաշքներ գործեց Տայանում։ Այս քաղաքն ուրիշ անունով Տափնաս կամ Տանիս էր կոչւում, բայց այժմ Տանէս է ասւում։

95. Լիպարիտը Վրացւոց զօրքերի սպարապետն էր, որին մեծ գանձով օգնութեան Հրաւիրեցին Պարսից զօրքերի դէմ կռուելու համար։ Բասենի և Կարնոյ գաշտումն եղած կռուում Հայոց, Վրաց և Յունաց զօրքերը կոտորուեցան և Լիպարիտն էլ գերի տարուեցաւ Պարսկաստան։

96. Վրաց իշխան կոչուածը վերևն յիշատակուած Լիպարիտն է։

97. Ատոմը Հայոց Արծրունի Սենեքերիմ թագաւորի որդին էր, որ իւր Դաւիթ եղբօր մահից յետոյ՝ թագաւորեց Սեբաստիայի Հայոց վերայ։

98. Սեբաստուպոլիսը Ամիսոսայ աշխարհի մի քաղաք է, որ կոչւում է և Դիոսկուրոս և գտնւում է Սև ծովի ափին։

99. Խաչիկ Կաթուղիկոսն առաջ Արշարունեաց եպիսկոպոսն էր։ Նա նորոգեց Կաթուղիկոսարանը Երիրակ գաւառի Արգինա գիւղաքաղաքում, Ախուրեան գետի ափին, և շինեց Հրաշալի գեղեցկութեամբ Արգինայի, որ այժմս նոյն անունովն է կոչւում, Կաթուղիկէ եկեղեցին, որի միմիայն հիւսիսային պատն է կանգուն՝ արևմտեանի մի մասի հետ։ Խաչիկ Կաթուղիկոսի օրով Հայոց ազգը տարագրուեցաւ շատ կողմեր, ուստի նա եպիսկոպոսներ ձեռնադրելով՝ այցելու ուղարկեց տարագիր ժողովուրդին մխի-

թարելու և հաւատի ու ազգութեան մէջ հաստատ պահելու համար. իսկ ինքը ծերութեան հասակում վաղճանուեցաւ ու թաղուեցաւ Արգինայի Կաթուղիկէ սուրբ եկեղեցու հիւսիսային կողմում։ Այժմ բնաւ չի նշմարւում գերեզմանը։

100. Տարընտա կամ Տարանտա Երկրորդ Հայքի մի քաղաք էր. ունէր բլրի վերայ մի ամուր բերդ։ Այդ քաղաքը գտնւում է Տիւրիկէի հարաւային կողմում։ Այժմ Տիպրիկ է կոչւում։

101. Կարս գաւառը իւր քաղաքով պարունակում է իւր մէջ հին Վանանդը վերին Բասենով։ Կարս կամ Ղարս քաղաքը շինուած է Ախուրեան գետի մէկ ճիւղի վերայ. նա տասներրորդ դարում Աբաս թագաւորի շինած Կաթուղիկէ կամ Առաքելոց եկեղեցիով շատ հրաչակուեցաւ։

102. Պարխար լեառն օտարներն անուանում են Բարիաարիան. նա գտնւում է Մեծ Հայքի և Տայք նահանգի արևմտահիւսիսային կողմում, երկարաձգուելով մինչև Փոքր Հայքը։ Նա սահմանակից է Կողքիսին։

103. Հանձէթը Չորրորդ Հայքի գաւառներից մէկն է, ունի և համանուն քաղաք. և Վասակաւանը, որտեղ փախցրեց Հռոմոց Զմշկիկ կայսրը Ռոմանոսի Վասիլ և Կոստանդին որդւոցը՝ անօրէն թագուհու երեսից։ Սոյն գաւառումն են

նոյնպէս Խարբերդ կամ Կարբերդ ամրոցը և պատմական Ծովք գղեակը։ Սոյն գղեակը 12-րդ դարում Հայոց Կամիուղիկոսարան դարձաւ և գրտնւում է Խարբերդի մօտ եղած ծովակում։

104. Գերջան գ-ուառն ընկնում է Եկեղեաց կամ Երզնկա գաւառի արևելեան կողմում։ Նրա մէջ երևելի էր Բագայարիճ կամ Բագարիճ գիւղը։ Միջին Տիգրանն այստեղ շինեց մի մեհեան և Հեփեստոսի արձանն էլ մէջը դրեց, որը Արտաշէս առաջինը Յունաստանից էր բերել. նրա դէմն էլ կրակի մի բագին շինեց։ Ագամիանգեղոսը սրան Միհրական մեհեան է անուանում Միհր աստծու անունով։ Այժմ Հայաստանում Տեառնընդառաջի տօնի ժամանակ կրակ վառելու, նոր փեսաների կրակի շուրջը կանգնելու, այդ կրակից տունը տանելու, տանիքի վերայ վառելու և նորահարսներին շուրջը պտտցնելու ու կրակի մոծիրը երդիկից տան ներսը թափելու աւանդութիւնը Միհրական մեհեանին յատուկ եղած հեթանոսական սովորութիւնից է մնացել։

105. Ծորոխ կամ Ծորոխ գետը շատերի վկայութեան համաձայն դրախտի չորս գետերից Փիսոն անուանուած գետն է. նա գուրս է գալիս Տրապիզոնի և Բաբերդի կողմերից, գնում է Հայոց Համշէն գաւառի միջից դէպի Տայոց աշխարհը և ծռուելով դէպի արևմուտք՝ պատում է

Եղերացւոց աշխարհը, որ Լագիստան է կոչւում և թափւում Պոնտոսի կամ Սև ծովը։

106. Բաբերդը այժմ կոչւում է Պայպուրթ. սա ամուր քաղաք է Բարձր Հայքի մի լեռան վերայ շինուած, ձորոխ գետի վերայ։ Հայոց Սըմբատ քաջ սպարապետը իւր ընտանիքն այստեղ ամրացրեց Երուանդ թագաւորի երկիւղից։ Խորէն. Բ. Պր. 34 և 35։

107. Թաթուլը Վանանդեցի էր և Գագիկ թագաւորի քաջ սպարապետը. նա սակաւաթիւ զօրքով պատերազմեց Տուլբիլի բազմաթիւ զօրքերի հետ և շատ կոտորած արաւ. բայց պատերազմի ժամանակ ընկաւ թշնամիների ձեռքը և սպանուեցաւ։

108. Տուարածատափը Տուրուբերան աշխարհի գաւառներից մէկն է։

109. Աւնիկ կոչուած բերդը շինուած է անառիկ բարձրութեան վերայ Բասենի գաշտում. նա ունի ջրամբարներ, որոնք այժմ ցամաք են։ Այս բերդն աւերեց Լէնկ—Թէմուրը։

110. Դու գիւղը Բասենի գաւառումն է. նա մի ժամանակ Բասենի եպիսկոպոսների աթոռ և Որթունեաց նախարարութեան բնակարան էր։

111. Սիսարան Յաբինի թագաւորի քաջ զօրավարն էր։

112. Քաղդէացի անունով հասկացուում էին այն ժողովուրդները, որոնք բնակւում էին մեծ Ասիայի մի մասում և Բաբելոնի հարաւային կողմում։ Մայրաքաղաքն էր Բաբելոնը։

113. Բզնունեաց ծովն առաջ կոչւում էր Աղի ծով, ջուրն աղի լինելու պատճառով. Բազ նահապետի անունովը կոչուեցաւ Բզնունեաց ծով։ Բիւզանդ պատմագիրն Թշոունեաց ծով է անուանում համանուն գաւառի անունով. ասւում է նաև Ծոսպայ ծով, իսկ այժմ կոչւում է Վանայ կամ Աղթամարի ծով։ Սրա մէջը կայ չորս կղզի՝ Աղթամար, Առաէր, Կառուց և Լիմ։

114. Գանձակ անունով երկու քաղաք է լիշւում Հայոց պատմութեան մէջ. մէկը՝ Ատրպատական աշխարհում։ Այս քաղաքն առաջ առաւ Մարաց ազգը և յետոյ Պարսից թագաւորն առնելով՝ թագաւորանիստ քաղաք արաւ և կոչուեցաւ Գանձակ Շահաստան։ Հնումն այս քաղաքը կոչւում էր և երկրորդ Եկբատան ու ունէր եօթն պարիսպ։ Այժմ կոչւում է Գաւրէժ կամ Թաւրէզ։ Իսկ միւսը՝ որ ռամկօրէն Գեանջա է կոչւում, Մեծ Հայքի Արցախ աշխարհի մայրաքաղաքն էր. այս քաղաքը գտնւում է Գեղամայ ծովի և Կուր գետի հիւսիսային կողմում։ Ազուանքն երբեմն տիրելով այս քաղաքին, կոչուեցաւ Գանձակ Ազուանից։

115. Դիքտիոն կամ Ընդիկտիոն Յունական մի ժամանակաշրջան է։

116. Երիզան Եկեղեաց գաւառում մի հռչակաւոր քաղաք էր, Գայլ գետի հիւսիսակողմում մի բարձրաւանդակի վերայ շինուած։ Հնումը Հայոց Տիգրան թագաւորը կանգնեցրեց այդ տեղ Արտեմիսի պատկերը, որը յետոյ կործանեց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը։

117. Եղնուտ կամ Եղանց բերդը Մեծ Հայքի Տարօն գաւառումն է։

118. Միջագետքի վերի մասը իսկզբանէ Հայոց ձեռը լինելով՝ կոչւում էր Մեծագետք Հայոց և ընկնում է Տիգրիս և Եփրատ գետերի մէջ։ Սոյն Միջագետքի մայրաքաղաքն էր Մըծբինը, որ Վաղարշակից սկսած՝ մինչև Քրիստոսի 14 թուականը Հայոց թագաւորանիստ քաղաքն էր։ Այս մասումն էին Եդեսիան և Տիգրանակերտը, որ Ամիդ է կոչւում։

119. Թուրքաստանը գտնւում է Սկիւթացւոց երկրում Ասիայի, Կասպից ծովի արևելեան կողմում. սրա բնակիչները մեծ Թաթարներն են։

120. Մովսէսը Ղովսի որդին էր և նրա անունումն էլ նրա սերունդները կոչւում են Մովսէսեանք։

121. Կոզոնիան Փոքր Հայքի Մելիտինէ քաղաքի հիւսիսային կողմն է ընկնում, Եփրատ գե-

տի վերայ։

122. Սիմ կոչուած լեառը Տորոսի կամ Կորդուաց լեռների մի մասն է, որ երկարաձգւում է Բզնունեաց գաւառից մինչև Ասորեստանի կողմերը։ Առում են Նոյի որդի Սեմը մի առժամանակ այնտեղ բնակուելով, լեառը իւր անունովը Սիմ կոչեց։

123. Փիլիպպէ այն քաղաքի անունն է, որ գտնւում է Մակեդոնիայի սահմանում, Թրակիայի մօտ. դրա համար էլ Մակեդոնացւոց առաջին վիճակ է ասւում։ Սա Յունաց ծովին և Պանգէոս լեռանը մօտ է. սա հնումը Կողոնիայի քաղաք էր։ Այդ քաղաքում Որբազան Պօղոս Առաքեալը քարոզեց Քրիստոսի սուրբ Աւետարանը. նրա բնակիչները կոչւում են Փիլիպպեցիք և նրանց գրեց Պօղոս Առաքեալը իւր 14 կանոնական թղթերից մէկը։

124. Նիկիան Փոքր Ասիայի Բիւթանացւոց անուանի մայրաքաղաքն էր։ Այստեղ գումարուեցաւ առաջին Տիեզերական ժողովը 325 թուին, 318 Հայրապետներով, որոնք նզովեցին Արիոսի աղանդը, որ ուրանում էր Քրիստոսի Աստուածութիւնը, և հաստատեցին Հաւատոյ Հանգանակը առաքելոց դաւանութեան համաձայն և կանոններ առաքելական աւանդութեան վերայ հիմնուած։ Այս ժողովում ներկայ էր Սուրբ Գր-

բիդոր Լուսաւորչի որդի Արիստակէս Եպիսկոպոսը։

125. Նեստորը Կոստանդնուպոլսի մի յոյն եպիսկոպոս էր, որ Աստուածամայր ամենասուրբ Կուսի Աստուածածին լինելն ուրանում էր և Յիսուս Քրիստոսին մարդ դատանում և ոչ Աստուած. կամ ուրիշ խօսքով՝ Քրիստոսին երկուս էր բաժանում, ասելով. այլ է Մարիամից ծնուածը և այլ՝ յաւիտենական Հօրից ծնուածը։ Սրա աղանդը հերքեցին 200 Հայրապետները Եփեսոս քաղաքում կատացած երրորդ Տիեզերական ժողովում 431 թուին։

126. Թանդրակը մի գիւղ է, որ գտնւում է Մանանդի գաւառում։ Այստեղ բոյն դրին աղանդաւորները և տեղական ժողովուրդի պարզ հաւատն ու սիրտը պղտորեցին իրանց չար աղանդովը։

127. Խլաթը Բզնունեաց գաւառի մի քաղաք է։

128. Շերին Մանանդի գաւառի մի բերդաքաղաք էր։

129. Բազմաղբիւրը նոյնպէս Մանանդում մի գիւղաքաղաք էր։

130. Ջերմա գիւղաքաղաքը դարձեալ Մանանդումն էր։

131. Սոյն Հերովդէսը, որ Ագրիպպաս էր կոչւում, Յուդայի և Սամարիայի թագաւորն էր։

Սա հրէաներին հաճոյանալու համար հալածեց քրիստոնեաներին, Սուրբ Յակոբոսին սպանել տուեց և Պետրոս առաքեալին բանդարկեց։ Մի հանդիսաւոր օր, երբ հրապարակում խօսում էր, իսկ ամբոխն աղաղակում—«Սա Աստուծոյ բարբառ է և ոչ մարդոյ». յանկարծ Աստծու հրեշտակը զարկեց նրան և նա որդնալից լինելով սատակեցաւ։ Գործ. ԺԲ. 21.

132. Քանանացի կոչուեցան Համի որդի Քանանի սերունդները նրա անունով։ Սրանց երկիրն այլ և այլ ժամանակ տարբեր անուններով կոչուեցաւ, նրա բնակիչների կամ նրանց պատմութեան հետ կապակից գտնուած դէպքերի պատճառով. օրինակ». «Քանան», «Աւեստաց» կամ «Խոստացեալ երկիր, «Եբրայեցւոց երկիր», «Իսրայէլի երկիր», «Յուդայի երկիր», «Սուրբ երկիր» և այլն։ Քանանացւոց երկրի սահմաններն էին՝ հիւսիսից Լիբանանի լեռները և Ասորոց երկիրը. արևմուտքից Միջերկրական ծովը. արևելքից և հարաւից՝ Եգիպտ, Սին և Փառան անապատները։

133. Բիւթանիան Փոքր Ասիայի մի գաւառ է, որ Պոնտոսի հետ մի նահանգ կազմելով, ինքը գտնուում է նրա արևմտեան կողմում։ Այս գաւառն առաջ ասում էր Բէբրիւկիա և Թրասիա Ասիացւոց. իսկ այժմ Պոլլի։

134. Փիւնիկէն կամ Փիւնիկեցւոց աշխարհն

ընկնում է Լիբանանի հարաւարևմտեան կողմում՝ Միջերկրական ծովին մօտ։

135. Մեծ Անտիոքը Սիւրիայի հռչակաւոր մայրաքաղաքն է. ասւում է, որ այս քաղաքը շինեց Սիւրիայի Սելևկիոս թագաւորը Որոնտէս գետի մօտ և իւր հօր անունովն անուանեց։ Քրիստոսին հաւատացողներն առաջին անգամ այնտեղ կոչուեցան քրիստոնեայ։ Գործ. ԺԱ. 26. և ԺԸ. 22։ Այժմ այդ քաղաքը կոչւում է Անթաքիա։

136. Լուսնալեառն կոչուածը բարձր, շատ լեռների մի խումբ սարեր են, որոնք գտնւում են ներքին Եթովպիայի Մոնսէմուտ աշխարհում։ Սրանք կոչւում են լուսնի լեառն հանապազանիսա ձեան ապիտակութեան պատճառով, որ նրանց գլուխը ծածկում է։

137. Սամարիան Պաղեստինայի մի մասն է, որ Հիւսիսից և Հարաւից գտնւում է Գալիլիայի և Հրէաստանի մէջ տեղը իւր համանուն քաղաքովը. արևմտեան կողմն է Միջերկրական ծովը և արևելեանը՝ Յորդանան գետը, որ Պաղեստինայի յիշեալ երեք մասերը բաժանում է Պերիայից, կամ յայնկոյս Յորդանանու կոչուած մասից։

ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ։

Աբաս 98.
Աբիսողոմ 46.
Աբրոգ 54.
Աբիսալան Թագաւոր պարսից 177.
Ադամ 154. 155.
Ահարոն որդի Սոսան 86. 87. 110.
Ագեսոյ Ագարակ 158.
Ազուանք 154.
Ազոբի աշխարհ 2. 125.
Ամիրա 33.
Անանիա 63.
Անանիաս 41.
Անդրէաս կրօնաւոր 156.
Անդրոնիկէ 20.
Անի 8. 53. 59. 60. 61. 89. 110. 126. 166. 168. 169. 177.
Անտիոք 172. 37.
Անտիոքացիք 30.
Աշոտ 6. 7. 8. 9. 49. 53.
Աշոտ Թագաւոր Հայոց 110.
Սարահունք 41. 93. 153.
Սրուսուար 61. 110.
Առիճ 20. 63.
Ասիա 61.
Ասորեստանցիք 3. 124.
Ասորիք 32. 87.
Ասորեան 98. 99.
Ատոմ որդի Սենեքերիմայ 89
Աքսանի 111.
Արծն, Արծին 62. 77. 85. 93. 129. 168.
Արծակ 39.
Արծիէ 39. 107.
Արծրունիք 26. 38.
Արճէշ 29. 93.
Արշարունիք 68.
Աւան որդի Ահարոն 110
Սենիկ 100.
Ափխազ 3. 5. 8. 12. 20. 22. 23. 26. 60. 93.
Բաբելացիք 25. 100.
Բաբելոն 17. 94. 119.
Բաբերդ 97.
Բագարատ Թագաւոր Ափխազաց 3. 5. 60.
Բագրատունի 6.
Բագրեւանդ 3.
Բազմապրիւր որդի Գայլանազուն 159.

Բաղասամ 103.
Բաղակ 103.
Բարսեղ 38.
Բասեն և Բասեան 10. 11. 16. 19. 20. 63 64 68. 85. 100. 119.
Բերկրի 38. 93.
Բգնունիք 107.
Բիւթանացիք 172.
Բլուրս 129. 131.
Բուլղարք 4. 37. 86.
Բջնի 60.
Գագիկ 6. 7. 53. 54. 59. 60. 61.
Գագիկ որդի Աբասայ 98.
Գալիլեացիք 67.
Գայլանազուտ 158.
Գանձակ 110
Գեղբու 76.
Գէորգ Թագաւոր Ափխազաց 5. 8. 9. 11. 12.
Գէորգի 10.12.21.23.24.28.
Գողիաթ 47. 87. 106.
Գուրգէն 3. 6. 21.
Գրիգոր որդի Վասակայ 60. 86. 144.
Գրիգոր վարդապետ. 7.
Գրիգոր Լուսաւորիչ 114
Դամասկոս 167.
Դանիէլ մարգ. 36. 118.
Դաւիթ Դունեցի 60.
Դաւիթ մարգ. 2. 27. 33. 46. 48. 58. 76. 82. 84. 87. 106. 110. 115. 121. 135. 151. 163. 167.
Դաւիթ որդի Սենեքերիմայ 61.
Դաւիթ Կիւրապաղատ 1. 5. 20.
Դաւիթ որև Սենեքերիմ 18.
Դեմետրիոս 37. 43.
Դերջան 97.
Դիոժէն կայսր 172.
Դու 100.
Դուին 61. 110
Երրայեցիք 49. 135.
Եգիպտացիք 124. 136. 137.
Եգիպտոս 25. 85.
Եղեր 167.
Եղեկիա 87.
Եղեկիէլ 112. 139. 147.
Եկեղեաց գաւառ 1. 10. 41. 97. 127. 141. 161.
Եղանց բերդ. 125.
Եղիա իշխան 161.
Եղիա մարգ. 76. 103. 182.
Եղիսէ մարգ. 147. 182.
Եղնուտ 125. 143.
Եպիսկոպոս եպիսկոպ. 164.

Նայլ կրօնաւոր 151.
Նայլ մարգ. 3. 49. 77. 80. 85. 95. 117.
Նրեմիա մարգ. 12. 57. 68. 77. 95. 116. 124. 152.
Նրիգա 125.
Նրիքով 160. 166.
Նրուսաղէմ 41. 58. 77. 80. 81. 82. 116.
Նսեբի 41.
Նիրատէս և Նիրատ գեա 129. 161. 162.
Զաքարիա եպիսկոպոս 21.22.
Զոյլ 30.
Ղուսա 11.
Ղուզք 2.
Թամիուլ 98. 99.
Թեսաղոնիկեցիք 37.
Թեսաղոնիկէ 37. 38.
Թէոդոռ 109.
Թէոդոս 4.
Թէոդոս Թագաւոր 44. 118.
Թէոդորոս եղբօրորդի կամիուղիկոսին Սամուէլի 162.
Թէոդորոս որդի Ահարոնի 110. 111.
Թէոդուպոլիս 9. 173.
Թէոմիուրա 42. 43.
Թոնդրակեցիք 144. 152. 154. 165.
Թոնդրակ 153.
Թուրքաստան 63. 111. 135. 137.
Իսրայէլ և Իսրայէլացիք 23. 39. 47. 50. 65. 67. 87. 112. 137. 138. 182.
Իսմանէ որդի Լիպարիտի 125. 126.
Լիքանան 167.
Լիպարիտ 87. 125.
Լուսաւորիչ 6. 58. 59. 90. 147. 152.
Լուսնալերինք 177.
Խալիֆայ 88.
Խազարք 11. 14. 68. 97. 126.
Խազարայ Առիճ 20. 63.
Խաչ գիւղ 159.
Խաչիկ կաթուղիկոս 63. 89. 90.
Խլաթ 111.
Խլաթայ լեառն 153
Խորձեան և Խորձայն 68. 95. 132. 142.
Խրիմ անապատ 127.
Խորիկ 39.
Ծիրանիս լեառն 119.
Ծորոխ կամ Ճորոխ գետ 97.
Կաթուղիկէ 13. 8.
Կամախ 140.
Կամարայ 154. 155.

Կամենաս 61. 86
Կաչէ ագարակ 158.
Կարապետ 144.
Կարին 10. 20. 62. 64. 68. 100. 125. 126. 129. 151.
Կարս 91.
Կուսակրաս 38. 39.
Կեսար 42. 44.
Կիրակոս 52. 58.
Կոմեր 162.
Կոզնիա 140.
Կոմիտաս Խչման 28.
Կոմիտաս Կ. 121. 134. 135.
Կոմենաս Կարար 121.
Կոստանդ որ և Մանոսախ 44 52.
Կոստանդիանոս 28. 30. 172.
Կոստանդին 26. 27. 28. 49. 52. 109.
Կոստանդնուպոլիս 3. 18. 22. 26. 30. 32. 37. 63. 69. 89. 90. 109. 152.
Կոմիտաս 93.
Կունդիկ արեղայ 154.
Հարել 146.
Հալալ 30.
Հայք 6. 24. 35. 40. 49. 52. 54. 61. 68. 86. 89. 90. 98. 110. 113. 119. 153. 168. 174. 175. 179.
Հանձէմ 95. 132.
Հաշտենք 68. 125.
Հարք 3. 41. 744.
Հաւանիչ 2. 125.
Հեր գառան Հայոց 24.25.172.
Հերման լեռան 76.
Հերոդէս 165.
Հնդիկ 177.
Հոդեմեռանէս 103.
Հառոնոս 16.
Հոռոմք և Հոռոմ 1. 3. 4. 5. 9. 10. 11. 15. 17. 18. 23. 29. 30.33 38.39. 54. 85. 86. 90. 97. 104. 122. 125. 134. 140. 143. 164.
Հոսիմ 3.
Հոմմայեցիք 50.
Հրահատ 144.
Հրանոյշ 154.
Հրէայք 82. 116.
Ղազարոս 140.
Ճանէմ-անուան 93. 127.
Ճորոխ 97.
Մարգարտ թերդ 17.
Մանազկերտ 3. 93. 100. 107. 174. 177.
Մանանագի 41. 72. 127. 132. 154. 161. 174. 177.
Մանեակ 33. 34. 45. 47.
Մանկան գոմ 111.

Ման տատոր 104.
Մարիամ 163.
Մելխիսեդեկ 60. 135. 140. 141.
Միխայէլ կայսր 36. 37. 38. 40. 42. 52. 135.
Միխայէլ կայսր այլ 120. 121.
Մինջագեաք 60. 132.
Մոնոմախ կայսր 44. 108. 118.
Մովսէս 138.
Մովսէսացիք 23.
Մովսէս մարգ. 25. 31. 48. 76. 79. 105. 136. 138. 155.
Մորբանս 142.
Մուհարիկին 153.
Յակոբ Առաքեալ 147.
Յակոբոս եպիսկոպոս 144. 148. 150. 151. 154.
Յայէլ 106.
Յեզարել 76. 79.
Յենովք վարդապետ 7.
Յեսու 160. 175.
Յոբ 13.
Յոյնք 17. 30. 50. 57. 124. 152. 153. 171. 172. 174. 178.
Յովհաննէս առաքեալ 146.
Յովհաննէս, եղբայր Աշոտայ 15. 49. 53.
Յովհաննէս Մկրտիչ 31.
Յովհաննէս վարդապետ 'ս զեռն 7.
Յովսէփ նահապետ 67. 146
Յովսէփ վարդապետ 7.
Յովրամ 23.
Յուդայ 116.
Յուդայ մանիչ 58.
Նաբովիթ 79.
Նեռն 40.
Նեստոր 150.
Ներքին բերդ 169.
Նիկիացիք 26.
Նիկիտոմ 29.
Նինուէացիք 70.
Շատիկ 8.
Շիրակ 53.
Շերի 154.
Շղիայ 21. 22.
Ոմգ 105.
Ոմկիանոս 177.
Որոնմեզ 104.
Ուխտիք կամ Ուխթիք 3. 5. 11.
Ուռհա 33. 34. 35.
Պահլաւ 53.
Պախր լեռն 158.
Պաղտակացիս 11.
Պատեկիմանոս 30.
Պարխար 93.

Պարսիկք 8. 18. 24. 28. 38. 39. 40. 57. 68. 69. 81. 98. 110. 118. 121. 124. 125. 126. 132. 141. 142. 143. 168. 171. 172. 174. 175. 176. 177. 178.
Պետրոս առաքեալ 58. 148.
Պետրոս կաթողիկոս 10. 14. 15. 59. 60. 61. 62. 89.
Պիհառնացիք 78.
Պիղատոս 67.
Պոնտոս 14. 16.
Պողոս առաքեալ 48. 135. 158.
Չերմա 160.
Ռշտունիք 172.
Ռոբոման 121.
Ռոմանոս Կայսր 30. 32. 34. 35. 37.
Սալամայ 33. 34.
Սալքորա 20. 21. 22.
Սամարիա 182.
Սամուէլ կաթողիկոս 160. 161. 162.
Սամուէլ վարդապետ 7.
Սամոսատ 34. 60.
Սամսոն 34. 148.
Սանասարն կամ Սիմ. լեառքն 93. 143.
Սարգիս. 53. 54. 59.
Սարգիս Կաթողիկոս 6. 10. 16. 152.
Սարգիս վարդապետ 6.
Սաւուղ 47. 54. 87.
Սև լեառն 31.
Սև քար 63.
Սեբաստիա 18.
Սեբաստուպոլիս 89.
Սելով 3.
Սենեքերիմ 18. 61. 89.
Սևանայ կղզի 6.
Սեքարացիք 78.
Սիմ լեառն ամս Սանասարն.
Սիմոն Նեբքինի 29.
Սիոն 57. 80.
Սիսակ 68.
Սիսար 106.
Սմբատ որդի Յովհաննէս 6. 7. 8.
Սմբատարքերդ 73.
Սմբատայ լեառն 63. 76.
Սոդոմ 83.
Սոդոմացիք 83. 139. 140.
Սոդոմոն իմաստուն 27. 108. 156. 167.
Սուրբ Գրիգոր եկեղեցի 144.
Սուրբ Կարապետ 143. 144,
Սուրմարի 54.

Սալեր 68.
Սանիսանոս Տարօնեցի 7.
Վահրամ 53. 59. 61.
Վարազշակերտ 10. 21.
Վարազշաւան 64.
Վան 172.
Վանանդ 11. 98.
Վասակ 60. 144.
Վասիլ իշխան 107.
Վասիլ կայսր 1. 5. 18. 24. 28. 30. 109.
Վասպուրական 18. 23. 28. 38. 64.
Վարդ Սիկլաւոս 17.
Վիրք կամ Վրացիք 8. 10. 17. 26. 29. 30. 57. 88.
Վրկէտ 155. 156. 157. 161. 164.
Տարէլ 3.
Տայան 84.
Տայք 1. 2. 5. 12. 16. 68. 97.
Տարենոս 90. 91.
Տարօն 7. 68. 110. 111. 143.
Տիրան 6.
Տուարածատատի. 100.
Փարաւոն 65.
Փերս 19. 20.
Փիլիկեցիք 172.
Փոկաս 17. 18.
Փորակ 11.
Փռանկք 97.
Քաբեր 106.
Քիրմանշ 103.
Օկամի 10. 119. 120.
Օսմանոսոս 37.

ԳԼՈՒԽՆԵՐԻ ՑԱՆԿԸ։

Հեղինակին նախերգանքը։

Ա. Հայոց աշխարհում պարարտած անցքեր։ . . . 1

Բ. Հայոց Լուսաւորչունները։ 6

Գ. Թէ ինչպէս Լուսաւորիչը երկրորդ անգամ յարչակ-
�Հայոց աշխարհի վերայ, որ յաշխատում
էր Վէրիայոց աջորդերը։ 16

Դ. Շինփայտում եղած վերջին պատերազմը։ . . . 21

Ե. Կոստանդի Լուսաւորունները։ 28

Զ. Թէ ինչպէս Լուսաւորիչ Ուռանոսը։ . . . 30

Է. Ուսումն տղայոց տարումը։ 36

Ը. Ուռանոսի մահը։ 35

Թ. Մինասէի Լուսաւորունները։ 33

Ժ. Մանուելի ֆոլտուած, Թէոդոսի որդի, Կոստանդի
Լուսաւորունները։ 44

ԺԱ. Բասէն գաւառում և Սմբատի լեռան վերայ
եղած ֆոտրածը։ 63

ԺԲ. Արծն տղայոց անուղղում ֆոտրածը։ 77

ԺԳ. Այն մեծ պատերազմը, որ Բասենու գաւառում
եղաւ, և Հռոմէրը յաղթուեցան։ . . 85

ԺԴ. Թէ որչափ ճաշ Պէտրոս Հայրապետը Կոստանդ-
նուպոլսում և որպէս վերադարձաւ։ . . 89

ԺԵ. Թէ ինչպէս խիստ նէրպոլ ասէրասէցաս հոխացած Կարս տաղաքը: 91
ԺԶ. Սուլթանի գալը: 92
ԺԷ. Մահմէտի ընգաւորութիւնն ինքը . . . 108
ԺԸ. Թէոդոսի ընգաւորութիւնը, որ Աստուածատուր է ընդգմանաւոր: 118
ԺԹ. Մինչգէտ էրզրի՝ նրանում գտնուած տաղաչանէրի ասէրում ու խոսքերը 132
Ի. Կոմիտասի ընգաւորութիւնը: 134
ԻԱ. Մէյիթնէ շահասան տաղաչի խոսքանումը: . 135
ԻԲ. Թանդրամէցաց ազանդը, որ էրնէցաս Հարչ գաւառում է շատերին ցիմնէց: . . . 144
ԻԳ. Թէ ինչպէս քոչքոչուէցաս նոյն մոլորութիւնն հրդէհը Մանանագրա սահմանում: . . . 154
ԻԴ. Տիէնէրսհուլսի Անի տաղաչի սրտխոցիչ լինելը: 166
ԻԵ. Յունաց ընգաւորի յէրքոչլուէլը պարսից ընգաւորից: 171
Գրչի չիլապաչրանը: 179

ՎՐԻՊԱԿՆԵՐ.

ՍԽԱԼ.	ՈՒՂԻՂ.	Էջ.	Տող.
լեզուով	լեզուով	ա.	20
Մանդկերտից	Մանազկերտից	3	17
որոնց	սրանց	7	14
Պոնդոս	Պոնտոս	16	8
Խազտոյ առիճ	Խազտոյ Առիճ	18	8
ապևելքին.	արևելքին	»	24
աբստամբ	ապստամբ	»	25
թագաւոր է	թագաւորէ	27	4
Կաւասելաս	Կաւասիլաս	38	24
Եփրայեցիներին	Եբրայեցիներին	49	3
շիշի	շշի	62	25
մարդու	մարդուն	72	12
հեթանոսների ազգը.	հեթանոսների ազգը,	»	15
լեռները	լեռներ	76	23
մօտ է աւերուելու	մօտ է աւերուելու.		
ալգ,	ալգ	86	12
լսում	լաւում	94	23
գայրուքը	գայրոյքը	106	14
բռնաւորի	բռնաւորին	»	21

կուտան	կուլ տան	114	24
լինում, մեզ	լինում մեզ,	116	6
պատրաստ է	պատրաստէ	124	1
բերդերում	բերդում	128	19
փռոցով	փռոցներով	142	26
Հոր հետ եղած	Հոր հետ մի սիրտ եղած	148	4
անձրևից	անձրևեց	161	26
Ներքին բերդ	Ներքին բերդ	169	24